№ 53 Ապրիլի 1 (13) 1882 Ապրիլի 1 (13) № 53

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարեկանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում պրոմում են միմիայն խմբագրատան մէջ։

Առաքաբաժանումը դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարւում են
երեսաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա թերթեր։—Նամակ թերթասիից։—ԹՈՒՐՔԻԱ։—ՀՆԴԿԱՍՏԱՆ։—ՅԱՈՑՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԹՄԲԱՊԻՆ

—

Բաղտ, 22 մարտի

Մարզպետական ընկերութիւնն թուրքական ժողովը խնդրում է ձեզ յայտարարել ձեր յարգոյ թերթի մէջ հետեւեալ նամակը, ուղղած դէպի բոլոր հայ ժողովուրդը, որի նիւթական օգնութիւնը կարօտում է ընկերութիւնը իր գործունէութեան առաջարկում։

Ի նկատի ունենալով մի կողմից գոյացած պետական հայ ուսումնարանների բազմութիւն աշակերտները, որով այդ պարագաների հոգաբարձութիւնները անպատճառ դիմում են Բաղտի Մարզպետական ընկերութեան խորհրդին, միւս կողմից աչքի առաջ ունենալով, որ ընկերութիւնը իր բարձրագոյն հաստատութիւնն համեմատական կարող է իր ծախսերը հիմնել իր մայր գումարից տացած ժողովրդների և մասնաւոր նուիրատուութեանց վրայ, անկարող է գտնւում բաւականութիւն տալ այն վերոյիշեալ բոլորովին արդարացի պահանջներին։ Այս պատճառաւ ընկերութեան խորհրդական ժողովը դիմում է ընդհանուր հայ հասարակութեան, վստահ լինելով, որ ազգային լուսաւորութեան և ընկերութեան գործերին համակրողները չեն պատրաստ իրանց կամաւոր նուիրատուութիւններով օգնել վերոյիշեալ նպատակի իրագործմանը։ Նուիրատուութիւնները կարող են ուղղուիլ դէպի օրացրիդ խմբագրատունը, նոյնպէս և Բաղտի Մարզպետական ընկերութեան խորհրդին։

Թուրքական ժողովը հաւատում է, որ խմբագիրը, որ դուռ չէ մերժի նոցա այս խնդիրը, ամենայն աչքի առաջ ազգային կրթութեան և լուսաւորութեան կարիքները։

Նախագահ Գ. Թումանեան

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒԲԻԱ

—

Շնորհակալութեամբ առացուք հայոց գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութիւնից Քրիստափոր Շմիտից խմբագրուած մանկական երկու վէպեր «Գառնուկ» և «Լուսաստանիկ»։ Երկու վէպերն էլ պարունակում են մի փոքրիկ բառարան մէջ։ Այդ վէպերի խմբագիրը Նազարէթ է։ Տրուած է Մարութիրատեանի տպարանում. գինը 25 կոպէկ է։

—

ԳՕՐՈՒԻՑ մեզ գրում են մարտի 24-ից, թէ այդտեղ չարունակում է անձրեւային եղանակը և մինչև այժմ գրաները չեն դադարում։ Քաղաքի փողոցները գետով են յաճախակի և տեղ տեղ երեում է սաստիկ մեծ հասարակութիւն։ Քաղաքի կամուրջն էլ չարժուել է իր տեղից և սպասւում է մի քանի օրից յետոյ փուլ գալ։

—

Մեզ խնդրում են յայտնել որ մի հայ երիտասարդ ԲԱԳՈՒԻ մէջ ձեռնարկել է խմբագրելու հայերէն լեզուով Տէրզենիեվի «ДЖЮЪ» թռչունը։ Պարոնը խնդրում է որ աբիշնները նեղութիւն չը կրեն նոյն դրուածքը ծանրագնահատելու։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են։ «Թէ որ աստիճան նախապաշարմունքը ու մոռացկոտութիւնը մեր ամբողջ հայ գիւղում լինում են երկու չարչարի եղբայրներ, որոնք այդտեղ ապրում էին անուն։ Նահապետ հրաժարում է նախ ասիրիչին, որ հիւանդի մեռքից տիրէ հանել,—դա աստծին և անհամեմատ մեծագոյն է համարւում մեր գեղջկների բժշկականութեան մէջ,—յետոյ, տեսնելով որ հիւանդ եղբայրը այնու ամենայնիւ չէ առողջանում, հրաւիրում է խոպը մօլլային։ Տգէտ մօլլան, երկար գիրգրտուելա (հիւանդութեան որոշում) անելուց յետոյ, յայտնում է թէ հիւանդը պաշարուած է գիներով և նրան պէտք է լաւ ապտակել ու ծեծել, որպէս զի սատանաները դուրս գան նրանից։ Չէնց որ մօլլան հեռանում է, անգամի եղբայրը վերցնում է ձեռքը մի մահակ և սկսում է այնպէս սաստիկ հարուածել իր հիւանդ եղբօրը, որ այս վերջինը սաստիկ հարուածների ազդեցութեան տակ հոգին աւանդում է։»

—

«Մշակի» № 51 մէջ տպած էր մի լուր որ մեր քաղաքի երկու եւրոպի գերմանացի բժշկներ Գ. (Գամ Հ.) և Կ., բժշկելով մի յղի սիկնոջ, որ յղի էր վեց ամիս ամսական երեխայով, այնքան տպէս էին, որ չը կարողացան հասկանալ հասարակ յղութիւնը և բժշկում էին սիկնոջ չեղած հիւանդութիւններից, անասելի օպէրացիաներ անելով նրան, որով և սպանեցին երեխային այդ պարոնի մէջ։ Այժմ մեզ հարցնում են թէ ով է այդ պարոն յայտնի է աստղաբաշխութիւնից թէ լուսնի վրա այլ եւս ոչ օդ կայ, ոչ ջուր, ոչ բնակութիւն, մի խօսքով որ լուսինը չատ ժամանակ է արդէն որ անասուն, անայի և անկեան է դարձել,—այդ պատճառով իմ ծանօթներից մինը այն ձիշդ և հանձարեղ մտքի է եկել, որ երեխ լուսինը մի ժամանակ Հայաստան է եղել և նրա վրա պէտք է որ մնացած լինեն հին հայոց տեղանուններ, սեպագիր և ուրիշ ձև արձանագրութիւններ։ Ես ահա իմ ծանօթս կազմել է մի մեծ ընկերութիւն, տասը տարի անդադար բժշկական արշաւանք անելու դիտաւորութիւնով։ Քանի որ լուսինը ամբողջութեամբ ասեղակ է, արշաւանքի դիտաւոր անդամը պէտք է լինի ասերակների նկարող ֆոտոգրաֆ Քիւրքճեանը, նոյնպէս կը մասնակցեն արշաւանքին հնագէտ պ. Երիցեան և ուրիշ ազգային հայ գրողներ։ Որովհետև յոյս չը կայ թէ այդ արշաւանքին կը մասնակցեն Մխիթարեան սիսան ասուածական միաբաններ, կամ ամերիկեան անձինք, ինչպէս Լիին, Պատկանեան և այլն, այդ պատճառով նրանց տեղը, լուսինը կանոգրաֆիական, հնագիտական, աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, լեզուագիտական, մանկավարժական, հոգեբանական, տրամաբանական և այլ անան տեսակէտներից նկարագրելու համար հրաւիրում է Ն.Ջ.Միածնի ճեմարանի պետական բժշկաց պ. Աշակ Նահապետեանը իր պրօֆէսորների ամբողջ խումբով։ Ասում են որ Մանկունին էլ չատ շուտով կը լինի այդ բոլոր պարոններից ազատուելու. և Ն.Ջ.Միածնից դէպի լուսինը նրանց տեղափոխուելը տեւելու, քանի որ դիտէ թէ հետեւել տարին այլ եւս չի կարողանայ նրանց պահել ճեմարանում, նիւթական միջոցներ չունենալով չարունակել նրանց նոյն տնային ուճիկները տալու։

* * *

Լսում եմ որ չատով հիմնելու է Թիֆլիսում մի «Գիւղատնտեսական» ընկերութիւն, որի նպատակն է ամէն հայաբնակ քաղաքներում և գիւղերում հիմնել ճայարաններ, որտեղ ընկերութեան անդամները իրաւունք կունենան ձրիապէս կերակրուել։

* * *

Մ. Քաղաքից ինձ գրում են։ «Մեր քաղաքում այն աստիճան են բազմացել այլ և այլ ընկերութիւններ, որ այժմ իրաւաբանչիւր հայ անհատը կազմում է տղէն մի ջոկ ընկերութիւն, և յոյս կայ որ չատով իրաւաբանչիւր հայ և իրաւաբանչիւր հայուհի իրանց մէջ կազմակերպեն երեք, չորս ընկերութիւններ։ Այն ժամանակ ընկերութեան կանոնագրութիւնները, երեսի այսպէս կը գրուին։

Յօդուած առաջին։ Իրաւաբանչիւր անհատ իրաւունք ունի կազմել իր անձից մի, երկու, երեք և աւելի ընկերութիւններ։

Յօդուած երկրորդ։ Անէն մարդ ինքն իրան ընտրում է ընկերութեան նախագահ, ձայների մեծամասնութեամբ։

Յօդուած երրորդ։ Նոյն մարդը կարող է ընկերութեան ընդհանուր ժողովը։

Յօդուած չորրորդ։ Ընդհանուր ժողովը այս և այն հարցը քննելու համար իրաւունք ունի ընտրել իր միջից յանձնաժողով։

Յօդուած հինգերորդ։ Ընկերութեան նախագահը իրաւունք ունի տարին մի անգամ գումարել ընդհանուր ժողովը, որ կարող է գումարուիլ միայն այն ժամանակ երբ ինքը նախագահը ներկայ է գտնուում ժողովին, քանի որ ինքն է ներկայացնում ընդհանուր ժողովը։

Յօդուած վեցերորդ։ Մի և նոյն անձն ընկերութեան ընդհանուր ժողով է, նախագահ է, քարտուղար է, գանձապահ է, յանձնաժողով է և մասնաժողով է։

Յօդուած եօթներորդ։ Եթէ մի և նոյն անձի մէջ ամփոփուած են երկու, երեք այլ և այլ ընկերութիւններ, այդ բոլոր ընկերութիւնների տարեկան

## ՖԵԼԻԵՏՕՆ

Երկար լռութիւնս պատճառներ։—Լուրերից բաղկացած ֆելիետոնի վտանգը։—Երկաթուղու պիծը։—Հայ-աւետարանականներ։—Հրապարակական դասախօսութիւններ։—Մի բժշկական նոր գիրք։—Մի ուսումնական սրբագանք։—Գիւղատնտեսական ընկերութիւնը։—Հայոց ընկերութիւններ և ընկերութիւնների համար մի նոր կանոնագրութիւն։—Թատրոն և բանկ։—Մի տրտնջալի և հրնարատար լուր։—Գնահատու պ. Րօբէրտ Լէհցի նեկրալոգական պրօգրամը։—Պ. Երիցեանի զգաստասութիւնը։—Ջաճիկ օրր։

—

Գանի, գանի ժամանակ է արդէն որ «Մշակի» ընթերցողը հեռացած չէ Ախալցխա ֆելիետոնից։ Ինչ էր անում Ախալցին այս ամբողջ ժամանակ, ինչի չէր գրում,—աւելորդ է բացատրել։ Միեւնոյն մի և նոյն չէ ընթերցողի համար թէ ինչ պատճառներ էին ախալցուն ինձ լուռ մնալ.... Գուցէ բայական էի քաղաքից, գուցէ ուրիշ գործերով զբաղուած էի, գուցէ հիւանդ էի, գուցէ ֆելիետոնի համար նիւթ չէի գտնում,—այդ մի և նոյն է։

Բայց ապացոյց որ մեռած չեմ, այն է, որ կրկին գրում եմ։

Միայն իմ այսօրուայ ֆելիետոնս նման չի լինի իմ անցեալ ֆելիետոններից ոչ մինին։ Ես այսօր կամենում եմ փորձ փորձել գրել մի ֆելիետոն, որ ամբողջութեամբ բաղկացած լինի միմիանցից անկապ լուրերից։ Այդ լուրերը ինձ մանրամասնութեամբ հաղորդած լուրերն են, որ ես քաղել եմ կամ ինձ անձնապէս պատմածներից, կամ ինձ անձնապէս գրած մանրամասն նամակներից։

Որպէսզի այն լուրերը, որ ընթերցողը կը կարդայ այսուհետ, նա երբէք չէր կարող գտնել ոչ մի լրագրում։

* * *

Ինձ գրում են Շուշուց որ այդտեղի հարուստ հայ-եանց եղբայրները դիտաւորութիւն ունեն իրանց հաշուով կառուցանել մի երկաթուղու գիծ Շուշի քաղաքից մինչև Փիր գիւղը։ Այդ երկաթուղու կանոնագրութեան պլիտաւոր յօդուածն այն է, որ երկաթուղով ճանապարհորդել և նրանով ապրանքներ տեղափոխել իրաւունք կունենան միմիայն հայ-լուսաւորչականները։ Վագօնը նստելուց առաջ ամէն ճանապարհորդ պէտք է ցոյց տայ իր մկրտիլականը. եթէ հայ-լուսաւորչական է,—կարող է տոմսակ վեր առնել և նստել վագօն, եթէ ոչ,—պէտք է տոմսի դնայ։ Երկաթուղու վրա ծառայողներն էլ, ի հարկէ, բոլորն էլ պէտք է հայ-լուսաւորչականներ լինեն։

* * *

Ինձ գրում են Շամախուց որ այդպիսի հայ-աւետարանականները սաստիկ քշնամի են հայութեան։ Նրանք իրանց գերմանացի են ասում, թէև հայացել են, նրանք երբէք չեն խօսում հայերէն, չեն կարդում հայերէն, չեն հետաքրքրւում, մազի չափ անգամ, հայութեան գործերով, ազգային խնդիրներով։ Ամենալաւ ապացոյց որ Շամախու հայ-աւետարանականները սաստիկ հայատեաց են և իրանց գերմանացի են ասում, այն է որ նրանք սաստիկ պաշտում են «Մշակ» լրագիրը։

* * *

Ընթերցողները գիտեն արդէն որ երիտասարդների մի խումբ կարդալու է չատով հրապարակական դասախօսութիւնների մի շարք յօդուած ազգայ ուսուցչական ժողովի։ Այժմ լսում եմ որ իմ բարեկամներից մէկն էլ, որ բարձր ուսում ստացած մի մանկավարժ է, դիտաւորութիւն ունի իր ծանօթութիւնն էլ տալ ազգայ ուսուցչական ժողովին և կամենում է կարդալ մի դասախօսութիւն հետեւեալ վերնագրով. «Ծեծը և նրա կրթիչ ներգործութիւնը մանուկ սերունդի բարոյական, մտաւոր և նիւթական զարգացման վրա»։

* * *

Մամուլի ասակ է և չատով լոյս կը տեսնի երկու մանկավարժ գերմանացի բժշկների մի չատ օգտակար բժշկական գիրք. «Ինչպէս պէտք է որոշել կեղծ յղութիւնը» վերնագրով։ Միջոցը, որ առաջարկում են յարգելի բժշկները, չատ ուսանելի, պարզ և դիւրագիտելի է։ Եթէ բժիշկը չը գիտէ որոշ կերպով թէ մի կին յղի է, պէտք է նրան ենթարկել ամէն տեսակ փորձերի, ամէն տեսակ ապէրացիաների։ Եթէ կինը կը մեռնի,—նշանակում է թէ յղի չէր, այլ ուրիշ, որ և է հիւանդութիւն ունէր, իսկ եթէ կը վիժի մեռած երեխայ,—նշանակում է թէ յղի էր։

* * *

Արամեան յայտնի է աստղաբաշխութիւնից թէ լուսնի վրա այլ եւս ոչ օդ կայ, ոչ ջուր, ոչ բնակութիւն, մի խօսքով որ լուսինը չատ ժամանակ է արդէն որ անասուն, անայի և անկեան է դարձել,—այդ պատճառով իմ ծանօթներից մինը այն ձիշդ և հանճարեղ մտքի է եկել, որ երեխ լուսինը մի ժամանակ Հայաստան է եղել և նրա վրա պէտք է որ մնացած լինեն հին հայոց տեղանուններ, սեպագիր և ուրիշ ձև արձանագրութիւններ։ Ես ահա իմ ծանօթս կազմել է մի մեծ ընկերութիւն, տասը տարի անդադար բժշկական արշաւանք անելու դիտաւորութիւնով։ Քանի որ լուսինը ամբողջութեամբ ասեղակ է, արշաւանքի դիտաւոր անդամը պէտք է լինի ասերակների նկարող ֆոտոգրաֆ Քիւրքճեանը, նոյնպէս կը մասնակցեն արշաւանքին հնագէտ պ. Երիցեան և ուրիշ ազգային հայ գրողներ։ Որովհետև յոյս չը կայ թէ այդ արշաւանքին կը մասնակցեն Մխիթարեան սիսան ասուածական միաբաններ, կամ ամերիկեան անձինք, ինչպէս Լիին, Պատկանեան և այլն, այդ պատճառով նրանց տեղը, լուսինը կանոգրաֆիական, հնագիտական, աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, լեզուագիտական, մանկավարժական, հոգեբանական, տրամաբանական և այլ անան տեսակէտներից նկարագրելու համար հրաւիրում է Ն.Ջ.Միածնի ճեմարանի պետական բժշկաց պ. Աշակ Նահապետեանը իր պրօֆէսորների ամբողջ խումբով։ Ասում են որ Մանկունին էլ չատ շուտով կը լինի այդ բոլոր պարոններից ազատուելու. և Ն.Ջ.Միածնից դէպի լուսինը նրանց տեղափոխուելը տեւելու, քանի որ դիտէ թէ հետեւել տարին այլ եւս չի կարողանայ նրանց պահել ճեմարանում, նիւթական միջոցներ չունենալով չարունակել նրանց նոյն տնային ուճիկները տալու։

* * *

Լսում եմ որ չատով հիմնելու է Թիֆլիսում մի «Գիւղատնտեսական» ընկերութիւն, որի նպատակն է ամէն հայաբնակ քաղաքներում և գիւղերում հիմնել ճայարաններ, որտեղ ընկերութեան անդամները իրաւունք կունենան ձրիապէս կերակրուել։

* * *

Մ. Քաղաքից ինձ գրում են։ «Մեր քաղաքում այն աստիճան են բազմացել այլ և այլ ընկերութիւններ, որ այժմ իրաւաբանչիւր հայ անհատը կազմում է տղէն մի ջոկ ընկերութիւն, և յոյս կայ որ չատով իրաւաբանչիւր հայ և իրաւաբանչիւր հայուհի իրանց մէջ կազմակերպեն երեք, չորս ընկերութիւններ։ Այն ժամանակ ընկերութեան կանոնագրութիւնները, երեսի այսպէս կը գրուին։

Յօդուած առաջին։ Իրաւաբանչիւր անհատ իրաւունք ունի կազմել իր անձից մի, երկու, երեք և աւելի ընկերութիւններ։

Յօդուած երկրորդ։ Անէն մարդ ինքն իրան ընտրում է ընկերութեան նախագահ, ձայների մեծամասնութեամբ։

Յօդուած երրորդ։ Նոյն մարդը կարող է ընկերութեան ընդհանուր ժողովը։

Յօդուած չորրորդ։ Ընդհանուր ժողովը այս և այն հարցը քննելու համար իրաւունք ունի ընտրել իր միջից յանձնաժողով։

Յօդուած հինգերորդ։ Ընկերութեան նախագահը իրաւունք ունի տարին մի անգամ գումարել ընդհանուր ժողովը, որ կարող է գումարուիլ միայն այն ժամանակ երբ ինքը նախագահը ներկայ է գտնուում ժողովին, քանի որ ինքն է ներկայացնում ընդհանուր ժողովը։

Յօդուած վեցերորդ։ Մի և նոյն անձն ընկերութեան ընդհանուր ժողով է, նախագահ է, քարտուղար է, գանձապահ է, յանձնաժողով է և մասնաժողով է։

Յօդուած եօթներորդ։ Եթէ մի և նոյն անձի մէջ ամփոփուած են երկու, երեք այլ և այլ ընկերութիւններ, այդ բոլոր ընկերութիւնների տարեկան

Fonds A.R.A.M

սին անմիջապէս խնդիրը ներկայացրեց վարչութեանը և բազդատապէս նրա սկզբնական պահանջութիւնը չիրագործուեցաւ։»

—

Մեզ խնդրում են յայտնել որ շուտով մի քանի հայ թատրոնասէրներ, քաղաքիս հայ ինտելիգենտային պատկանողներից, տալու են թիֆլիսի թատրոնում մի ներկայացում յօգուտ կանանց Բարեգործական նոր կազմված ընկերութեան։ Կը խաղան Սունդուկեանցի «Քանդած Օջախ» պիէսան։ Ներկայացումը կը մասնակցեն տիկիններ. Խատիանեան, Թամամշեան, Խոսրովեան, Իշխանուհի Բէհբութեան, Մէլիքեան, Եւանգուլեան, օրիորդներ՝ Օրբելի, Յովհաննիսեան և պարոններ՝ Քիշմիշեան, Խալաթեան, Մէլիք-Բէգլարեան, Էլիոզով, Յարոյ և այլն։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել թ պիտի թիւն մեր Թարգմանիչների որ արդէն ձեռնարկել է Թարգմանելու հայերէն լեզուով Օտարօտկու «Воспитанница» կոմէդիան։

—

«Մշակի» ներկայ համարում տպում ենք Բաղոյի «Մարզպետական» ընկերութեան խորհրդի հրաւէրը զբաղի հայոց հասարակութիւնը, օգնել յիշեալ ընկերութեանը նպատակութիւններում։ Կատարելապէս համակրելով Բաղոյի ընկերութեանը, մեր կողմից էլ հրաւիրում ենք հայոց հասարակութիւնը նեղիացէս օգնել յիշեալ ընկերութեանը, միայն ինքներս ցաւում ենք որ ժամանակի պակասութեան պատճառով չենք կարող խմբագրութեան մէջ ընդունել նպատակներ յօգուտ «Մարզպետական» ընկերութեան։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր ապրիլի 1-ին արհեստասէրների կլաբում կը լինի մանկական պարահանդէս։ Սկիզբն է 8 ժամին։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական համայնքների ժողովը Գլադստոնի առաջարկութեան համեմատ վերա-

Ֆօքսաների յայտնութիւններից պարզ երեւում է, որ իրլանդական հարցը մինչեւ այժմ չէ կորցրել իր սուր բնաւորութիւնը։ Այդ հանդամանքը ապացուցանում են վերջին լուրերը Իրլանդիայից, մանաւանդ այն անհանգստութիւնը, որ հաղորդում է դիւնամիտով նշանի քաղաքային խորհրդարանի սուն քանդելը։ Իրլանդական յեղափոխական կոմիտէների կռիւը կառավարութեան հետ ոչ թէ միայն շարունակվում է, այլ մինչեւ անգամ ընդարձակ չափեր է առնում։ Գլադստոնի մինիստրութիւնը հանդիպել է այնպիսի մի շարժման, որի դէմ միատեսակ անզօր են ինչպէս խոստ, նոյնպէս և հաշտեցնող միջոցները։ Եթէ այդ շարժումը ներկայումս առաջվայ պէս կատաղական բնաւորութիւն չունի, որ նրան յատուկ էր կատաղական օրէնքների մոյնելուց առաջ, այժմ նրա մէջ նկատւում է անհաշտ թշնամութիւն դէպի անգլիացիները։

Շատ դժուար է մատնանշել այդ տանջութեան դէմ միայն տնտեսական միջոցներով, բայց մի և նոյն ժամանակ ընդդիմադրութեան այլ միջոցներ էլ չեն մնացել։ Ոչքան էլ ընդարձակ լինեն մանաւանդ գիւղատնտեսական տարածութիւնները, նրանք չեն բաւականացնի այն մարդկանց, որոնք աշխատում են Իրլանդիայի ինքնավարութեան համար, ուրիշ խօսքերով, որոնք կամենում են ունենալ սեփական իրլանդական պարլամենտ։ Քանի որ Գարնել Իրլանդական ազգաբնակութեան մէջ շատ կուսակիցներ կունենայ, Իրլանդիայի այժմեան դրութիւնը անփոփոխ կը մնայ։

Ա յդպիսի կուսակիցների թիւը կարելի է պակասեցնել յաջորդարար, ճշդութեամբ իրագործելով օրէնսդրական այնպիսի վերանորոգութիւններ, որոնք կապացուցանեն Իրլանդական ազգաբնակութեան երկրագործ դասերին, թէ Իրլանդիայի մէջ բնակվող անգլիացի-կալուածատէրերը նրանց վրա այլ եւս չեն նայում, ինչպէս նուաճված և սարսափացած ցեղի վրա, որ պարտաւոր է համբերել ամեն տեսակ ճնշում իրան նուաճողի կողմից։ Ակներև է, որ Գլադստոնի կառավարութեան իրլանդական քաղաքականութեան նպատակը ճիշդ այդ է և դրանով էլ մեկնվում է Գլադստոնի հակակրութիւնը դէպի այն բացառական իշխանութիւնը, որ անգլիական պարլամենտը տուել է նրան Իրլանդիայի մէջ գործելու համար։ Նրան նպատակին են ծառայում և Գլադստոնի աշխատանքները համայնքների ժողովի այժմեան կանոնադրութիւնը փոփոխելու համար։ Երբ իրլանդական ազգաբնակները այլ եւս միջոց չեն ունենայ այդպէսի դիմել օրէնսդրական հարցերի քննութեանը, նրանք կը կորցնեն իրանց նշանակութիւնը ընտրողների առաջ և այն հեղինակութիւնը, որ նրանք այժմ ունեն Իրլանդացի գիւղացիների մէջ։

### ԹՒՐՔԻԱ

—

„Daily News“ իր փետրվար 25-ի թիւի մէջ կը հրատարակէ հետեւեալ հատուածը։

„Ակէ ժամանակ մը առաջ ծանուցինք թէ Պօլսոյ հայոց Պատրիարքը սոսկալի է հրաժարական տալ իր պաշտօնէն, իրեն դլխաւոր շարժառիթ ունենալով ընդդիմադրիլ 61-դ յօդուածին Դրան կողմանէ անդործադրելի ճնշացած լինելը։ Այժմ կը տեղեկանանք թէ աշխարհի ամեն մասանց մէջ բնակող հայք հեռագրեր և նամականիներ ուղղեր են պատրիարքին թախանձելով որ նա առնու իր հրաժարական։ Մինչեւ իսկ սալմանը հրաման հանել է որ պատրիարքը հաճի շարունակել իր պաշտօն, ապակին Ներսէս արքային, իր ժողովուրդի կացութեան բարւոքմանը նկատմամբ յուսոյ նշոյլ

---

բնդհանուր ժողովները չը պէտք է կայանան մի և նոյն օրը։

Ցաւալի անթերագր և ամեն ընկերութիւնների համար պատասխան։ Ամեն ընկերութիւն իր գործունէութիւնը վերջացնելու ժամանակ պէտք է նախքան իր ձեռքում մնացած գումարները նրատարէմի վանքին։

* * *

Հասատ աղբիւրներից իմացայ հետեւեալը։

Որովհետև Թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովի նախագահ և Թիֆլիսի քաղաքային կրթական ընկերութեան կառավարիչ մի և նոյն անձն է, և որովհետև այդ վերջին հիմնարկութիւնը գտնւում է պետական Տէր-Ալաստոյեվի ատեան, այդ պատճառով և հայոց թատրոնական գործերը, յարմարութեան համար, չատով կառավարվում է նոյն ատեան։ Այդ կանոնաւոր և այն յարմարութիւն որ երկու հիմնարկութիւնների գործերն էլ կարելի կը լինի միացնել. բանկի մէջ ծառայողները լսեմի վրա կը ներկայացնեն կենդանի պատկերներ, իսկ զերասանները և զերասանուհիների կոնտրակտները կը ծախվեն Ս. Պետերբուրդի բորսայի վրա, որպէս բանկի գրասկան թերթեր։

* * *

Մի ուրախալի լուր է տարածված Թիֆլիսում։ Ասում են որ չուտով պիտի սկսի հրատարակվել առանձին մասնաժողովի հաշուով մի նոր հայոց ամենօրեայ թերթ, որ կը հրատարակվի չափաքը երկու անգամ։ Գուցէ ինձ կասեն թէ գա անհնարին է, բայց ես կը պատասխանեմ որ ներկայ դարում ամեն բան հնարաւոր է։ Օրինակ յայտնի է, թէ մինչեւ այժմ մեզ անհնարին էր համարվում որ ամեւ ժամանակ ձիեր գան, իսկ հայոց օրացոյցը մարգարէանում է թէ այս տարի, յուլիսի 20-ին ձիեր պէտք է գայ։

* * *

Հասատ աղբիւրից լսում եմ որ երեկի Ձեռնադիր ար. Բօլշով Լէնց տալու է այս օրերս մի մեծ կախարդական ներկայացում, երեք բաժանմունքով, հետեւեալ նոր, մինչեւ այժմ չեղած և բազմակողմանի պրօգրամայով։

Բաժանմունք առաջին։

1. Աղբած տան մախրից փոշ չինելու գաղտնիքը։

2. Մսի տակտ և կաշու գործարան։

3. Ալիւրի տեղ առազով մարդկանց կերակրելու հնարը։

4. Հասարակ թղթից թղթադրամ պատրաստելու միջոցը։

5. Կախարդական միջոց, որով կարելի է փողով լի մի կառս յանկարծ պարզակել։

Բաժանմունք երկրորդ։

1. Կախարդական պրիչ, որի օգնութեամբ պրած և տպված բաները ամենևին չեն կարդացվում։

2. Կախարդական ակնոցներ, որոնց օգնութեամբ փակած ծրարի մէջ պրած նամակը հեշտութեամբ կարդացվում է։

Բաժանմունք երրորդ։

1. Իրան մաքուր ցոյց տալու համար պէտք է ուրիշի երեսին ցեխ դնել։

2. Գաղտնիք թէ ինչպէս մի բարձր ատամ տապած մարդ կարող է ուզածին պէս կրկին դառնալ ատկերի և կինոս։

3. Կամներ ջուր դարձնելու արհեստ։

4. Օդից փող բանելը։

5. Գաղտնիք յօդուածներ և պլպլ պրելու, չարելով միանգամ հանելոյ բառեր, առանց որ և է խնասի։

6. Իրան անզգայ հանկուցեալ արհեստ։

7. Անհնարինոր խնդիրներ լսելու արհեստ։

8. Մեծ ոռմիկներ ատամալու արհեստ։

9. Մի անբարոյական և հարատեւող մարդու յանկարծակի կերպարանափոխութիւնը ազգի բարերար արարողի։

Ներկայացման վերջը բոլոր հանդիսականները իրանց պլոխը կը կորցնեն։

Թէև ար. Լէնց պրել է իր ամբիշայի դլխին թէ ներկայացումը լինելու է նոր, մինչեւ այժմ չեղած պրօգրամայով, բայց, որքան ինձ յայտնի է, մեր մէջն ասած, այդ պրօգրամայի բոլոր նամիները վազուց ծանօթ են արդէն մեր հասարակութեանը և մեր հասարակութենից շատերը կարող են պ. Լէնցից էլ ամբի ճարպիկ կերպով կատարել այդ բոլոր փոխանները։

* * *

Այն դատախազութիւնների չարքում, որ կարգադրվելու են շուտով յօգուտ ուսուցչական ժողովի, անչուշտ պ. Ալէքսանդր Երիցեանի դատախազութիւնը «Բարեգործութիւնը մեր մէջ» անունով կը լինի։ Պարոնը որպէս պատասխանատուն և լեզուաբէս անչուշտ կը բանայ իր դատախազութիւնը երկու մասի վրա։

Առաջին, պատմական մասի մէջ դատախազը կը պատմի մանրամասնաբար, սկսած ամենահնագոյն ժամանակներից մինչեւ մեր ժամանակները, ինչպէս հայերի մէջ բոլոր կրօնները ջնջուել են կործանել։ Դատախազը կը սկսի նոյ նահապետից, որ իր զաւակներին կանչել է պարկեշտութիւն և հաշտութիւն, երկու յատկութիւններ, որոնք ջնջուել են կործանել են հայերի մէջ, յետոյ հետեւելով դարերի ընթացքին կը հասնի վերջապէս մինչեւ Շեհսվի կռակին, որի 300 հազար գումարը նոյնպէս ջնջուել է կործանել պ. պ. Էմինիզովի, Թամամշեանի և Տալաևսկի ձեռքերում։

Իր դատախազութեան երկրորդ բաժնում պ. Երիցեան, որպէս լեզուաբէս, կը քննի լեզուական հարցը մեր ազգային տեսակէտից և որոշ փոփոխութիւններ են նիշարկելու։ Օրինակ ո տառը չատ անգամ ր տառի։ Այդպիսով հայոց լեզուի մէջ, այդ պատճառով և հայերի կեանքի մէջ, ո ո ղ և փ ո ր ը միանչան հասկացողութիւն ունեն։ Ամբողջ հայոց կեանքը հիմնված է փողի և փորի վրա։ Ցետոյ պ. Երիցեան կատարելապէս որ և մեր հարեան և մեզ ազգական վրաց ազգութեան լեզուի և կեանքի մէջ նշմարելի է նոյն երեւոյթը։ Մեր փ ո ղ ը գարձել է նրանց մօտ փ ո ր ի, որովհետև ո տառը այստեղ փոխվել է ր տառի, որ չատ անգամ պատահում է. օրինակի համար քաղաք, քաղքի և այլն։ Վերջապէս հայոց փ ո ր բառը նման է վրաց գ ո ր բառին։ Այստեղ հայոց փ տառը կերպարանափոխվել է գ տառի և նոյն իսկ բա-

---

ռի նշանակութիւնը, չատ քիչ է փոխվել։ Վրացկին լեզուով գ ո ր բի նշանակում է հաց, իսկ յայտնի է որ հացը մանում է փ ո ր բ ր, որովհետև պարզ է որ փ ո ր և գ ո ր բ բառերը մի և նոյն ծագումի բառեր են, ունենով չատ մօտ նշանակութիւն։ Ապացի հետեւ գնալով պ. Երիցեան կը հատնի, ինչպէս միշտ, մի որ և է հանճարեղ, համարձակ և անապատելի եզրակացութեան, օրինակ. բոլոր հայը մանում է փորի մէջ, որովհետև հացը մանում է փորի մէջ,—որովհետև պարզ է որ վրաց գ ո ր բ ը պէտք է անպատճառ մանի հայոց փ ո ր ի մէջ, և այլն։

Վերջապէս դատախազը իր առանձնատնութեամբ փայլուն կերպով կապացուցանի որ լեզուական ձիշդ հետազոտութիւնները բացատրում են մեզ պատմական իրողութիւններից չատերը, որ անհնարին է բացատրել լեզուագիտութիւնից դուրս։ Այդպիսով լեզուագիտական ճանապարհով հնարաւոր է բացատրել հայոց կեանքին այն պատմական իրողութիւնը, որ մեզանում կատիների փ ո ղ ը միշտ մանում է կատակատարների փ ո ր ը։

* * *

Մեր բոլոր լրագիրները, որոնք հրատարակվեցան Զատիկ օրը, բոլորն էլ նոսիցին այդ հանդիսաւոր օրվայ նշանակութիւնը մի մի յօդուած։ Միայն «Մշակը» որ այդ օրը չը հրատարակվեցաւ, միջոց չունեցաւ տալ իր ընթերցողներին «Քրիստոս յարութիւն արար մեռելներից»։

Այժմ ես օգտւում բաղելով «Մշակի» մէջ ինձ տւած արտօնութիւնից, կը ցանկանամ քիչ իսկ տերէն ազգին և քիչ տխրող մարդկութեանը, որ դոյ այն տխրալից ժամանակը, երբ «Քրիստոս յարութիւն արար մեռելներից» նշանակէր որ «ձրմեռը յաղթութիւնը յաղթութիւնական է», «ձշմարտութիւնը երբէք չէ կարող մեռնել», «ձշմարտութիւնը վերջ ի վերջոյ անպատճառ յաղթութիւն կատնի»։

Այդ իսկ պատճառով բոլորած, ջերմ ցանկութեամբ վերջացնում եմ ես իմ այսօրվայ ֆելիետոնս։

ԱՍՈՒԱՏՈ.

Fonds A.R.A.M

մը չի տեսնելով, դեռ կը պնդէ իր նախկին որոշմանը վրայ։ Պօլիսէն փետրվար 13 թուակիր հեռագրով մը կ՚իմանանք, թէ լորդ Տիւֆերին ամեն կերպով կաշխատի Հայաստանի բարենորոգման խնդրոյն համար, բայց կը վախնամ որ գերմանեցի գործոդութիւնը կը չէզոքացնէ այժմ իր ձիգերը։

Նոյն թերթը փետրվար 27-ին կը հրատարակէ հետեւեալ խմբագրական յօդուածը։

„Ե. Գաւազ, որ պարտաւոր էր ամեն ճիգ թափել պահել որպէս զի հայերն հաշտեցնէ իր պետութեան հետ՝ Հայաստանի համար երկար առնէ՛ի վեր խոստացած բարենորոգումները գործադրելու փափաք ցոյց տալով, կը շարունակէ գայլայլացնել ժողովուրդը շարք մը բռնապետական գործերով։ Պատրիարքին դիրքը այնքան անտանելի եղած է որ, ինչպէս դիտուն մեր ընթերցողք, հրաժարական տուաւ և կը մերժէ ետ առնել իր հրաժարական։ Մինչև իսկ հայոց ազգային պատմութեան, պատկերներու և երգարաններու վաճառուն արգելուելուցաւ և այժմ մի գրածուն, որոյ միակ յանցանքն է հայերէն մի քանի հրատարակութիւններ ծախած լինել, Թուրք բանտի մը մէջ մեռնելու վրայ է։ Թէպէտ կառավարութիւնը այժմ խաչակրութիւն մը հրատարակած է հայկական վաղնջի եկեղեցւոյն դէմ։ Պօլիս բերել տուած է Մշոյ, Արարկիրու, Պուլանըքի և այլ տեղեաց առաջնորդներն, ոչ թէ՛ և է յանցանք գործած լինելնուն համար, այլ վասն զի իրենց հայրենասիրութիւնը կառավարութեան առջև կասկածանաց առարկայ եղած էր պոյս։ Վերջերս կառավարութիւնը ջանաց Պօլիս բերել տալ վանայ առաջնորդ Թորգոմեան արքեպիսկոպոսը, որոյ մի քանի տարի առաջ Անգլիա այցելութիւնը անգլիական ժողովրդեան յիշողութեանը մէջ կենդանի է դեռ։ Ե. Գաւազ, հայկական եկեղեցւոյ մէջ բաժանումներ առնդնելու նպատակաւ, ջանացած է կրկին վերկին հայոց առաջնորդը որ ինքզինք գրեթէ պատրիարքին անկախ հրատարակէ. և ջնջած կամ խափանած է այն վանդան ընկերութիւնը որը կազմուած էին պրամ հալածելու նպատակաւ ի նպաստ հայրենասեաց եկեղեցիներուն և դպրոցներուն։ Այն հալածանքներ զորս կը կրէ այժմ հայ ժողովուրդը՝ քաղաքակրթի աշխարհի համակրանաց կարժանացնէ զայն, այն ճիգերուն մէջ զոր կը թափէ Բերլինի դաշնագրի 61-գ յօդուածին գործադրութիւնն ապահովելու համար։“

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 15 մարտ 1882

Միացեալ ընկերութեան պատահանդէսը տրուեցաւ և այն տարի իր սովորական չքեղութեամբ և հաւաքիր առատ եղաւ, կրնան, մօտ 25 հազար ֆրանկ։ Պիտի գոհունի անչուշտ հայ լրագրաց թղթակիցներ որը իրենց վայրկեան ոճոն և պատշաճեալ մաքը պիտի մատրամադրէին նկարագրին այդ հանդիսին պայծառութիւնը և չը պիտի զլանան ամենքը թէ հայն այն գիշերը մեծ վարկ առացաւ օտարի առաջ։ Մենք այ հակամիտութիւն ունինք այսպիսի առարկայի նկարագրութիւնները ժամանակ ընել արիշը, այդ պաշտօնը չտեսնելուն կը խղճանք, այլ յատկութիւն ունինք առարկայական հայերը շշմեցնելու, կարծելով որ անոնք այսպիսի պատահանդէսներու երթալ չեն գիտեր։

Մենք այն երեկոյին մի բան դիտեցինք. այն է միշտ մի և նոյն խմբակին ժրաջան աշխատութիւնը՝ ամսականները ուղարկելու մասին, որ ամեն գումարի արժանի է անչուշտ։ Կը յուսանք սակայն որ անցեալ տարիներուն մէջ մէկ քանի անձանց վերջումներն հրապարակ հանելէ վերջը, այս տարի ուրիշ պիտի ըլլան հաշիւները ճշդիւ և արագութեամբ ներկայացնելու մասին։

Տարուան մէջ մէկ օր մը միայն այդ ընկերութեան անունը օտարի ականջին կը զարնէ, այն ալ գումարման ատենին և դերասանի օգնելու պարի ժամանակ. հարկ է ուրեմն որ ընկերութեան վարիչը նոյն իսկ հայոց մէջ բարձրանայ, որպէս զի ընկերութեան կեանքն ալ մանչը, այդ վարչին անդամութիւնն ալ հաշիւներուն հրապարակութիւնն և ճշդութիւնն կախեալ է։ Դժբաղդաբար կը տեսնենք որ այդ ընկերութիւնն ալ չտանելու նման՝ միայն չընար կատարապէս և պարբերաբար ներկայացնել իր հաշիւները և տարեվերջ Թոյլ կը տայ մէկ քանի մատանեիչ եղած անձանց որ միջնորդ ըլլան ներքինաններու և ընկերութեան պրիկին միջտեղ։ Թէև հաւաքուած առակը ամէն տիրութիւն է ուղղակի կալանքա իջեցնելու քան թէ Օրիաքէօյէն պատրաստել ուր մէկ երկու անձինք կը գտնուին որ առևտուրն Միացեալ ընկերութեանց հետ բնաբնակ հաշիւի մէջ են։

Մի ուրիշ բան ալ այն գիշերը աչքերնուս դարկաւ, այն էր ընդհանրապէս հայ հանդիսականաց ամենաւայելուչ և չնորհալի վարմունքը օտարներուն մնձարելու մասին և նիւթ մնար ալ ատենէն չըլլայինք, անպատճառ պիտի հանդուգնինք որ հայ հասարակութեան նման բարեկիրթ և քաղաքակիրթ ժողովուրդ չի կայ աշխարհս երեսը։ Այն տեղ կտրելի էր յայտ յանդիման տեսնել թէ հայը երկու բնութիւն, երկու կերպարանք ունի, ինչպէս Մօլիէրի Մէտ-ժակը։ Մին հանճար, քաղցրաբարոյ, կաց ու նիստու հաչուած, ներդաշնակ, էտիկէտի սիրահար. այդ օտարներու առաջ. միւսը կոչտ, չի հանդուրժող, Թրքաբարոյ, նախանձոտ և գռեհիկ. այս ալ իրարու մէջ։

Մենք մեր պատուոյ նախանձախնդիր ենք միայն այն չափով որ օտարը լաւ հասկնայ ուենոյ մեզ նկատմամբ, հոգ չէ ինչ որ ալ ըլլայ մեր տեսքերնիս։ «Աղը ներս, ճերմակը դուրս» կրսէ հայը և կը կարծէ թէ ասկէ աւելին պղտչութիւն ընելը անօգուտ բան է, ազգին արժանապատուութիւնը պահելու համար։ Ամեն ձեռնարկութեանց, ամեն պարագայներու մէջ մեր դիմաց ի՛ր ջանքը «երեվիլ» է, ոչ թէ «լինել», և այս է ճշմարտապէս մեր առնը քանդողը։ Այն օրն որ մենք միանգամ նկատմամբ պիտի ըլլանք արդապատը առանց ցեղական կոմպլեսացիոնեան, քաղաքավար առանց կեղծաւորութեան և արժանիք ճանչցող առանց մտրդամոնութեան կամ անտեղի խառնութեան, այն օրն միայն մենք գտած կըլլանք մեր ուղիղ ճանապարհը և այ պէտք չեմք ունենար յաւուր պատշաճի ոչխարի մորթ ղգենուլ։

Բաղաքիս «Courrier d'Orient» ֆրանսերէն լրագրին 12/24 մարտի համարին մէջ հետեւեալը կը կարդանք.

«Գեռահաս դէպքեր արժանահաւատ անձէ մը խնայանք, որ առանց դիտաւորութեան կը հրապարակենք, Թողլով ընթերցողաց որ դատեն դայն ինչպէս որ արժանի է։

«Պ. Գ. Ն.... որ Լուսավոր պահական բանակին մէջ մի հայ սպայ է, մեկ տարիէ ասկի է որ կ՚ս. Պօլիս կը ընակի իրր Թրքամակոյ Թիֆլիսի «Մշակ» լրագրի Պ. Գ. Ն.... յիշեալ լրագրի մէջ հրատարակած նամակներուն համար դատած է մայրաքաղաքիս քանի մը հայ լրագրոց ուղղութիւնը։ Նորա բռնած քննութեանները, մի քանի անձամբ և մանաւանդ Լ. Դրան պաշտօնեից մէջ գտնուող հայ էֆէնդիներուն տանից նկատմամբ, իր վրայ գրաւեց այդ սուտ հայրենասէր կոչածներուն ուշադրութիւնը։

«Դիտելի է մանաւանդ որ Պ. Գ. Ն.... անոնց համակրանաց առարկան չէ եղած, և անչուշտ այսպէսով հարկ է մնայնել թէ ինչ պատճառով մեկ քանի մարդոց հետաքրքրութիւնը իր վրայ հրաւիրեր է։ Այս մարդիկ կը ջանան իր հայրենակիցներէն տեղեկանալ թէ նա ուր կը գնայ, որ տեղերը կը յաճախէ, որպէս զի, կրսեն, ազատին նորա որ բարեհաճէ իրենց վերաբերեալ գործի մը մասին հայոց պատրիարքի մօտ։

«Եթէ մենք այս մանրամասնութիւնները կը հրատարակենք, չէ թէ երեսասպրդ ազան պղտչացնելու համար է, որ մեր ազգապատուութեանց պէտք չունի անչուշտ, այլ իրր մի Լրագրութիւն հրատարակութեան արժանի։»

Հետեւեալ օրն «Phare de Bosphore» լրագիրն ալ սա պէս կը խօսէր։

«Երեկի օրն «Courriere d'Orient» կը պատմէր Թէ ինչպէս տեսակ մը հակազդեցութեան ենթակայ էր կապիտան Ն.... (մի ռուսաց ազգ. ազգաս հայ. որ գենեալ Լազարէվի հետ ռուս-թրքական պատերազմին մասնակցած է և այժմ պատերազմի Խոտիոյ մեծ լազպայ Թղթակցութեան պաշտօնը կը վարէ)։

«Այդ հակազդեցութիւնը որ կրնան խառնուածքներ, կամ խառնուածքի հետաքրքիր մարդիկ, պէտք է ստիպողութեան ուշադրութիւնը դրաւէ, որպէս զի կարող ըլլայ իր արձնութիւնը երէկ ոչ ցուալի, գոնէ անհանգիստ տեսարանի մը առաջքը առնուլ։

«Հաճելի է մեզ տակաւին մատնել Թէ հայոց մէջ չկան որ կը գտնուին այդպիսի անձերէն որ կրթուած են արդիական ուսումնական յուզարկել ամեն անուց մօտ որը ճշմարտութիւնը կը խօսին կամ կը գրեն։

«Ինչ որ ալ է, Նորա որոց վրայ կապիտանը կը կատածէ, մի միջոց ունեն միայն պատասխանելու համար, այն է որ իրենք ալ օգնեն ստիպողութեան և գտնել տան այն մարդիկը, որք այնքան հետաքրքրութեամբ տեղեկութիւն կուզեն իրեն վրայ։»

Կ. Պօլսոյ մէջ այսպիսի հետազոտութիւններ տեղ կը պատահին և անհանգիստ եղած անձինք միշտ դիտ չեն այսպիսի միջին դատարկութիւններու ենթակայ ըլլալէ։

Վերջիշեալ դէպքը, որ յայտնապէս մեր աշխատակիցը ալ. Գ. Նիկողոսեանի կը վերաբերի, մեզ չի զարմացուցէ ճշմարտասէր անձ մը Թշնամիներ դէպացուցած ըլլայ, և այդ Թշնամիներն կամենան եղեռնագործներու ձեւոք վրէժ առնուլ անկէ, այդ զարմանալի բան մը չէ մանաւանդ Կ. Պօլսոյ նման անիշխանութեան մատնուած քաղաքի մը մէջ։ Մենք ի վաղուց գիտէինք Թէ այստեղ Թղթակիցներու կացութիւնը խիստ նեղանձելի կացութիւն մը չէ, և Թէ նորա անդադար ենթարկուած են ամեն տեսակ հալածանքներու և դրպարտութեանց, միմիայն այն պատճառով որ մարդկային ընկերութեան ճնաւակար խիղերը ցոյց տալով խանդեստ կըլլան անոնց խայթելու փափաքին։

Յայտնի է Թէ ուրիկ դրացած են ֆրանսական օրագրաց խոտած կասկածաւոր անձինքը, գժուար չէ անտանել Թէ որոնք են այդ տեսակ սրիկայ գործակատարներու դիմաց սուր արտաձոները։ Մենք կը գոհանանք միայն այդ մարդոց կոչտամութեանը վրայ որք կը կարծեն Թէ ոճրագործութեամբ կարելի է չարացնել ճշմարտութիւնը խոտոր լէզէնտին արմատները։ Սակայն կը յուսանք Թէ այդ նենգամիտ ցոյցերուն անօգուտ ըլլալուն իրենք ալ կը հասկնան և տանջիեն չեն վատնիր այլ ևս, կազմանալ փոխած ատրամադրները չտեսնելու համար, որով մենք ալ չենք տախտակի երեսն հանել իրենց անուններնը։

Մ. Վ.

## ԹԱՒՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական կայսրուհի Աւգուստա, գիւղատնտեսական գործատեղիներ ուսումնարի իշխան Բսմարքի ձեռքով ուղարկեց իր պատկերը տալմանին։ Ի պատասխան նորան ցոյց տուած յարգանքի, տալմանը կայսրուհուն մէկ գեղեցիկ ալբոմ ընծայեց, որի խոտը շինած է ոսկուց և զարդարված է տղամանդներով և այլ թանկագին քարերով. այդ ալբոմը կազմում է արևելեան գործուածքի օրիենտակիլ աշխատանք։ Ալբոմում դրված են տալմանի և նրա բոլոր ընտանիքի ֆոտոգրաֆիական պատկերները։

* * *

Հռոմի պապը, այս տարի «Ոսկէ վարդը» նուագեց Սանֆեմինա իշխանուհու, աստրիական թագաժառանգի Րուդոլֆի ամուսնու համար։ Այն ժամանակից, երբ Պիոս IX ընծայեց այդ վարդը իսպանիա թագուհուն, աստրիուհիան համար այդ ընծայի գինը տասիկ ընկաւ։

Ա. յդ փոփոխութիւնից մաքսային եկամուտը կը շատանայ մօտաւորապէս մէկ միլիօն րուբլով։ Թագաւոր կայսրը գովեց մարտի մէկի յիշատակին կառուցանելի տաճարի պրեմիա տուացած նախագիծները, բայց նրանցից ոչ մէկը չը հատուցաց իրագործելու համար։ Կը պատրաստուին նոր նախագիծներ ռուսաց ազիով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի։ Նշանակուած են. Գիւղ-գիւղատնտ. Բագուի նահանգապետ, Բաղդէ Սաակրօպոլի փոխ-նահանգապետ։ Ենթագրուած է ոչնչացնել բնաժինների բաժնի Գէլսկէ-յեմնատների և գիւղատնտեսական օգնականների պարապ պաշտօնները։ Սպասում են, որ կայսրուհի Մարիայի բաժինը կը միացնի ծաղովրդական լուսաւորութեան մինիստրութեան հետ։ Վճռուած է միաւորել Սեմիրեչիի և Արևմտեան Սիբիրի վարչութիւնները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ Ջաուկի համար պատահի մէջ պաշտօնական ընդունելութիւններ չեն նշանակուած։ „Московскій Телеграфъ“ լրագիրը դադարեցրած է ելքս ամսով։ Ս. Պետերբուրգի լրագիրները մարտի 27-ից հաղորդում են. հիմնուում է նոր գիւղատնտեսական նահանգներից. Սեմիրեչենսկայա, Սեմիպալատինսկայա և Ակմոլինսկայա։ Այդ նոր բաժնի գիւղատնտ-նահանգապետ կը նշանակուի կոլպակովսկի։ Տուրկեստանի գիւղատնտ. նահանգապետ նշանակուում է գեներալ Չերնաեվ։ Ապրիլի 8-ին կը կայանայ հրէական հատարակութիւնների ներկայացուցիչների ժողովի առաջին նիստը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ, ի նկատի առնելով հրէական անկարգութիւնների մասին ստացուած լուրերը, յիշեալ լրագրի մէջ կը տպուին տեղեկութիւններ բոլոր այդպիսի անկարգութիւնների մասին։ Զատկապարդի կիրակի օրը Անտեվկի գաւառի մէջ կողոպտեցին հրէական կալքեր։ 30 մարդ կալանաւորուած են։ Օրէսկի գաւառի մէջ գիւղատներ կոխ պատահեց քրիստոնեաների և հրէաների մէջ։ 14 մարդ կալանաւորուած են։ Արտաքին գործերի մինիստր իշխան Գորչակով հիւանդութեան պատճառով արձակուում է պաշտօնից։ Նրա տեղ նշանակուում է Գիրս։ Ծովակալ Բուտակով Պետական խորհրդի անդամ է նշանակուում։ Գեներալ-մայոր Չերնիաեվ ատացաւ գեներալ-լէյտենանտի աստիճան։ Պէսար Խանովից Գաբրիէլին շնորհուած է սուրբ վլադիմիրի շքանշանը երկրորդ կարգի։ Ս. Պետերբուրգի օբեր-պօլիցիմէյստեր գեներալ-մայոր Կոզլով նշանակուած է ժանդարմների բաժնի շտաբի կառավարիչ, պահպանելով նախկին պաշտօնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 91 ր. 12 կ., հինգերորդ 90 ր. 50 կ., նոյնքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 37 կ., երկրորդ 211 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 37½ կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 8 ր. 12½ կ։ Ռուսաց 1 րուբլ կ՚տպօթեմի վրա արժէ 24,28 պէնս, Ամստերդամի վրա 122,87 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 255 ֆրանկ 25 սանտիմ։ Բոլոր արտաքին գործառութիւնը հանգիստ է։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մարտի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ ենթագրուած է փոխանակել մաքսային տուրքը ալիւրի, բացի կարտօֆէլի ալիւրից, օսլայի, բրինձի, գաբէջրի խմորի, մրգերի, պտուղների, մուրաբայի, կամիսային անասնական արգիւնքների և գաստրոնոմիական պիտոյքների։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԾԱՎԱՍԱԿԱՆ ՊԵԿԱՐՆԻԱ

**ՍՕԼՕԼԱԿՈՒՄ**

*Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի մեծապատիւ հասարակութեան, որ առաջիկայ Զատկի տօնի համար ընդունում եմ պատուէրներ պաքի, կուլիչի, պօլսկի մագրուխայի, տորտի և ամենայն տօներին յարմար բաներից. վստահ լինելով իմ նոր բերնեի վարպետներիս հմտութեան վրա ամէն վստահութեամբ դիմում եմ մեծ. հասարակութեան որ չը զլանան դիմելու մեզ իրենց պատուէրով:*

*Մ. Համբարձումեանց*

**ՄՈՒՐԱՔԱՆ** *շաքարի ձուաններ, պաղպաղեաներ, խաւխալ և այլն: Ծախվում են շատ էժան*

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**

*Նոյն տեղ ծախվում են. բակկաֆոտա մահճակալ 8 ր., ամբողջ* **ՀԱԳՈՒՍՏ** *12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ* **ԲԻՎՕԼՎԵՐՆԵՐ**, *զանակներ և այլն:*

2—10

**ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐԿ**

*Ամենաառաջնակարգ, բոլոր գոյների հետ դործածութեան եղանակը: Գրօվանեան 2 և թ փռնաը 60 կ., և առաջէսի նոր պատկանելիքներ: Գրիվնայի, Լօնդօն հիւրանոցի առաջ:*

5—5

ԼՈՒՍՍ ՏԵՍԱԻ ԲԱՖՖԻՒ

**ԴԱԻԹ ԲԷԿԻ**

III ԳԻՐՔԸ

*Բաղկացած է 563 երեսներից*

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼ

*Վէպի այս հատորի մէնակամառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ»: Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.*

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ" (на Головинскомъ проспектѣ въ д. Мирзаманова, №№ 3 и 4).

**ВЪ ТИФЛИСѢ**

3—10

*Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ԾԽԱՓՈՑԻ սիրողները և դործածողները կը դանեն*

ԸՆՏԻՐ ԾԽԱՓՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

*Մաքուր Թիւրքաց, ամենալաւ տեսակներից ծխախոտից, աւանց որ և է խառնուրդի: Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ծաշակին: Ծխախոտի գինը, Ֆունտը 3 րուբլուց մինչև 10 րուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 րուբլուց, մինչև 3 րուբլի:*

*Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալիքում, Գլօրցօվի փողոցի վրա, № 3.*

*Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ Ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում:*

*Գործարանատէր* ՇԱՀԻՆՇԱՆՑ

14—25

Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ Թիֆլիսի քաղաքային հասարակութենից 750,000 ր. օբլիգացիաներ հրատարակելու մասին Ցիրկուլյարների 1881 թ. ապրիլի 20-ին հաստատած կանոնների 11 յօդուածի հիման վրա, ներկայ 1882 թուականի ապրիլի 1-ին առաւօտեան 12 ժամին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում քաղաքային վարչութեան ներկայութեամբ հրապարակապէս կը կատարվի քաղաքային օբլիգացիաների հանդման աթրաժը 15,300 րուբլ դումարի:* 3—3

## ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒԻ՞Ն

## ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արեւի ԺԱՄԱՑՈՒՑՆԵՐ 50 կ., ՇԳԹԱՆԵՐ (նոր ասկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻԿՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջաներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շէհօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵԳՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆռնտաը, կանֆետներ 40 կ. ֆռնտը, ԴՐԱՑ, աբիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալ առարկաներ և այլն ԿԻՍԱԴՆՈՎ, մաներ, մեբրաբա և այլն շատ էժան:

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ:

6—50

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԵՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ

ՀԱՅՈՑ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՍ:

ԱՐԴԱՐԱՆ ԴՐՈՒՄՆԵՐՈՒ, № 144 ՍԻՄԿՈՒՄ Է ԱՐԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՄԱՆՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿԱԳԻՐՆԵՐ:

ՄԱՆՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿԱԳԻՐՆԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՄԱՆՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿԱԳԻՐՆԵՐ

10—60

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկերութեան պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ"), որի կանոնադրութիւնը ԲԱՐՁՐԱՊՈՑՆ հաստատած է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին: Ընկերութեան պահեստը գանվում է Թեատրովի տանը, Թանգարանի դէմ

6—7 (եր. և ութ.)

**ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ**

*Հայոց վարժարանի և Խաչիկի ծանուցանէ, թէ նրա տանեամբ նշանակած է ամէն երկ 5-ին առաւօտեան 9-ից մինչև 2 ժամին:*

**КЕЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.**

1—50

## ԸՐՔՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

*Պարակական պալատական արտիստ*

## ՐՕՔԵՐՏ ԼԵՆՑ



*պատիւ կունենայ Զատկից յետոյ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹԸ լրանալած մարտի 28-ից մինչև ապրիլի 4-ը տալ ամենայն օր ԿԱԽԱՐԻԱԿԱՆ և ֆիզիկական մեծ ներկայացումներ բոլորովին ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄՈՎ:*

Պ. ՐՕԲԵՐՏ ԼԵՆՑ, *վերջին երկու շաբաթների ընթացքում ներկայացումներ չը տալով, նոր ՍՏԱՑՎԱԾ մի քանի ԳՈՐԾԻՔՆԵՐի օգնութեամբ պատրաստած ԲԱԶՄԱԹԻՒ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ, որոնք Թուատատանի մէջ ոչոքից չեն ցոյց տուած և որոնք ներկայացնում ԱՐՏԱՍԱՔՄԱՆՈՒՄ ՄԵՆ ԱԶՈՂՈՒԹԻՒՆ ունենն:*

*Ներկայացման սկիզբն է երեկոյեան 8 ժամին:*

*Ներկայացման սկզբին և անտրակտների ժամանակ կածէ գիւտարական ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ պ. Պարխէկի առաջնորդութեամբ:*

*ՏՈՄՍԱԿՆԵՐԸ և մանրամասն պրօգրամները կարելի է տանեալ ԹԱՏՐՕՆԻ ԿԱՍՍԱՑՈՒՄ ամենայն օր առաւօտեան 10 ժամից:*

2—2



*վերականգնեցնող* **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող: Գինը 2 ր. շիշը,* **ՓՈՍՏՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կօպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*

*Մի և նոյն տեղը* **ԽԻՆԱՑԻ ԻՒՂ**, *մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և փոքրի գլխացաւի դէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն*

100—100

Մի՛չի փողոց, կաթողիկէական փողոցի անկիւն № 13.

**Ա**ւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՑԻ ՄԵՐՑ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿԱՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամոդաններ 250—25 ր., ասիմոյաժներ 1. 30—12 ր., սուրճ ղրնելը ճնշապարիկ 6—35 ր., մաքրաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆռնտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուսմի վալնի հնելը մրատօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէլգիական, սիրտար Ռենգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշտարօվի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բրնակվու. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և միխէլսոնի. պեսերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառներին, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլմուկ (пухъ), պատրոններ սամոարի և չայու, գանակ չանդալ գանագան ֆաբրիկաներին 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. դրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոններ 1—40 մինչև 3—20 կ. պրիորը. մի կոպեյկ մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիստանակի չայնիկներ, կաֆէնիներ ամենայն տեսակ, Չադայներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրտսիալ կաթօրկին 18 կ., վառ Ֆրանսիայի փակոց, Թուղթ փոչոի, կանվերտաներ, սուրգուչ, մատիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեատախտակ, Թանաք, Թանաքամաններ, պրեսպապիեներ, գլալներ սեզոնի և չայու ֆրատէ, վարշավի և բրիստանակի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուռմիչկէք 45 կ.—5 ր., շամոգաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխա, պղպատպոշկաններ վարշավու, ՌԵՁԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գալոշաններ կանանց և մարդկանց 15 կ.—50 կ. Ջուխա, շապիկներ, մարդկանց գալոշաներ, գոնաթիներ 35 կ.—4—50 կ., հաս, անձրևի և շոգի. անդրեր շիրմայու ասկորե, գուտապերչայի և փայտե, չէռականներ գլխի, շորի, տատակի, պոլե և կարտի համար. չուլքի Թէկ (бумага) մատակի կօճի և շալէ (гарусъ) ֆէլշաակէք մարդկանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոթ, Հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, Հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

*Վաճառականներին առանձին պայմաններով և դիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գանվում են* ՄԻՔԱՑԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆՑԻ *պահեստում.* (въ складѣ) *Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.*

*Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով.* Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

20—180

Մի՛չի փողոց, կաթողիկէական փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Марта 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Меликовск. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 54 Ապրիլի 2 (14) 1882 Ապրիլի 2 (14) № 54

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում գրւում են միւնյն խմբագրատան մէջ։

Ծանուցագրերը դիմում են ուղղակի Տիգլիս. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնիր քեզ ինքդ և Աստուած քեզ կօգնի։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սարէլնիկովի սպանումը։ Նամակ Շամախուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խրլովից։ Նկարին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՕԳՆԻՐ ՔԵԶ ԻՆՔԴ ԵԻ ԱՍՏՈՒԱԾ ՔԵԶ ԿՕԳՆԻ

—

Մարդկութեան բոլոր ազգերը ունեն այդ իմաստուն առածը։ Միայն դժբաղդաբար այդ առածը շատ քիչ ազգերի մէջ է միայն քարոզչակիրթ ժողովրդների մէջ է կատարւում։ Իսկ մեծ մասամբ մարդկութիւնը սովոր է ապաւել ամէն բան նախախնամութիւնից, առանց աշխատելու իրանից էլ մի բան անելու....

Այն ազգերը, մանաւանդ, որոնք երկար ժամանակ մահմեդական աշխարհի տիրապետութեան տակ են գտնվել, ընտելացել են անշարժութեան, անգործութեան. նրանք կորցրել են ինքնագործութեան, ինքնատնութեան ոգին։ Իսկ Աստուածը, նախախնամութիւնը, բնութիւնը օգնում են միայն այն մարդուն, որ ինքն էլ իրան օգնում է։

Մեր կովկասեան երկիրը քանի գնում է կորցնում է իր առաջվայ բարեխառն, գեղեցիկ կլիման. դրա գլխաւոր պատճառն այն է, որ մենք անխնայ կատարել ենք մեր երկրի վրայ բոլոր անտառները։ Անտառը բարեխառնում է եղանակը,—այդ յայտնի է թէ գիտութիւնից և թէ գործնական կեանքից։ Որտեղ անտառներ կան, այնտեղ կլիման լինում է բարեխառն, յաճախ անձրևներ են լինում, բայց նրանք հեղեղատներ չեն լինում, անտառոտ երկիրների ձմեռը լինում է մեղմ, իսկ ամառը հով, անտառով ծածկված երկիրներում խիստ քամիներ չեն լինում։ Ընդհակառակն, անտառներից զուրկ երկիրներում ձմեռը լինում է խիստ, ամառը անտանելի շոգ, անդադար լինում են խիստ, աւերիչ քամիներ, ջրերը նուազում են, յաճախ պատահում են չորային եղանակներ, իսկ երբ անձրևներ սկսում են գալ, նրանք գալիս են հեղեղի նման, և իրանց սաստկութեամբ աւերում են երկիրը։

Քաղաքակիրթ երկիրներում չեն ոչնչացնում անտառները, այլ ընդհակառակն, աշխատում են պահպանել նրանց։ Իսկ որտեղ անտառները այս կամ այն պատճառով ոչնչացել են,—աշխատում են կրկին անկել ծառեր, նորոգել, զարգացնել անտառներ։

Ասիացին սովոր է ոչինչ չանել, ախ ու վախ քաշել, գանգատվել վիճակի վրա և ամէն բան սպասել նախախնամութիւնից։ Ասիացին մեղանում է մեր վերև յիշած խնամատուն առածը, թէ՝ օգնիր քեզ և Աստուած քեզ կօգնի։

Մենք ինքներս ոչնչացրինք մեր երկրի բոլոր անտառները, աներևակայելի ենք համարում նորից բուսացնել անտառներ, որտեղ նրանք այլ ևս չը կան,—և մի և նոյն ժամանակ սպարդիւն կերպով անդադար ախ ու վախ քաշելով, գանգատվում ենք թէ մեր երկրի կլիման տարուց տարի վատանում է, աւելի և աւելի անտանելի է դառնում։

Պարզ է որ կլիմայի վատանալու պատճառով երկրի բոլոր բերքերն էլ պակասել նուազել են, ուրեմն հետզհետէ սկսում է ամէն տեղ տիրել առաջին հարիւրաթուիան մի բերքների անտանելի թանգութիւնը։ Եւ այդ բոլորը այն պատճառով որ մենք անխնայ կերպով ոչնչացրինք մեր երկրի ամբողջ երեսից մեր նախապատական հարուստ անտառները։

Ահա դա է ասիական քաղաքակրթութիւնը. սպասել, ոչնչացնել, զուրկ լինել ինքնաօգնութիւնից, ինքնագործութիւնից ամենափոքրիկ նշոյլից անդամ,—և մի և նոյն ժամանակ ախ ու վախ քաշել, գանգատվել վիճակի վրա և ամէն բան սպասել նախախնամութիւնից։

Դարձեալ կրկնում ենք մարդկային բոլոր իմաստուն ազգերի անմահառածը. օգնիր քեզ ինքդ,—և Աստուած կօգնի քեզ։

Մենք պարզ տեսնում ենք որ կովկասի և Անդրկովկասի կլիման, քանի կերթայ, տարուց տարի կը վատանայ և վերջը անտանելի կը դառնայ մեր երկիրների ազգաբնակութեան համար, մինչև որ մենք վերջապէս չը մտածենք և հատուածապէս չը վճռենք ձեռք տալ մեր երկրի մէջ եղած անտառների պահպանութիւնը և ամէն տեղ, որտեղ հնարաւոր է, նոր անտառների զարդացումները։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍՏՐԷԼՆԻԿՈՎԻ ՍՊԱՆՈՒՄԸ

—

Գէներալ-մայոր Սարէլնիկովի սպանման մասին „Новор. Телегр.“ լրագիրը հետևեալը հաղորդում է հետևեալ։

Գէներալ Սարէլնիկովի սպանման մանրամասնութիւններից երևում է, որ երկու չարագործներն էլ եկել են Օդէսսա առանձնասէս գնացել Սարէլնիկովին սպանելու նպատակով։ Նրանցից մէկը, գէներալ Սարէլնիկովին սպանողը, իջևանել է հիւրանոցի մէջ, իսկ սպանման օրը դուրս եկաւ հիւրանոցից, յայտնելով, թէ ուզևորվում է Պէշինեօվ, մինչդեռ ինքը բնակարան վարձեց վէյներզրի տանը, թողեց այնտեղ իր պահարանը և դուրս եկաւ սպանութիւն գործելու համար։ Մարգասպանի բնակարը բնակվում էր Կրիմսկայա հիւրանոցի մէջ, որտեղ իջել էր գէներալ Սարէլնիկով։ Մարգասպանը իր հետ ունէր երկու բէվոլվեր և երկու դաշոյն։ Մի բէվոլվերից միայն մի գնդակ է արձակված, իսկ դրանից կարելի է եզրակացնել, որ Սարէլնիկով մի հարուածով սպանվեցաւ։ Մարգասպանը, վազելով Կրիմսկայա բուլվարով, ուղևորվեցաւ դէպի կառքը, որ ձիավարում էր նրա հանմախոհը և որ նրան սպասում էր։ Երբ վերջինը տեսաւ, թէ ամբոխը կալանաւորեց մարգասպանին, թողեց կառքը և փախաւ դէպի ցամաքեցնայա հրապարակը։ Նա ուներ մի բէվոլվեր և երկու դաշոյններ։ Նա երկու անգամ արձակեց բէվոլվերը և վիրաւորեց Լարդին ու Նիկրասով բանտարկներին և յետոյ բանվորական մաքսային տաժանաւոր պատուհասից և պօլիցիական գաւրիլովից։ Այդ ժամանակ մարգասպանին էլ բերում էին բանտարկները։ Գաւրիլով հրամայեց կալանել նրանց և հասցրեց պօլիցիական բաժինը։ Նրանցից մէկը 23 տարեկան երիտասարդ է հիւանդոտ դէմքով։ Մարդասպանը 21 տարեկան է։

Երևում է, որ յանցաւորներին վիճակված էր բռնվել. մեկ գիներալ Սարէլնիկով նրանցից մէկի երեսին մի կողմը նետարանի վրա, մարգասպանը և նրա համախոհը կարող էին փախչել իրանց կառքով և անհետանալ։

### ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒԻՑ

—

Մարտի 13-ին

Վերջին ժամանակներս տեղական դպրոցական հարցը սկսել է արդէն զբաղեցնել մեր հոգաբարձուաց և հասարակութեան ուշադրութիւնը և փոքր ին լինում այդ դպրոցներին մի կանոնաւոր տեսք ու կերպարանք տալու։ Բայց չը նայելով այդ բարի ցանկութիւններին, նրանք այնու ամենայնիւ չեն կարողանում հասնել այն բարձր նպատակներին, որոնց ձգտում է և սիրտ ձգտէ ամէն մի դպրոց։ Աշակերտը, օրինակ, 4—5 տարի հետևով դպրոցում է մի վկայական էլ սանձալով այնուհետև կարում է բոլորովին իր յարաբերութիւնը այդ վերջինիս հետ։ Պատահելով մշտական անային կամ փողոցային աշխատանքով, չունենալով միջոցներ, յարմար դէպքեր, բայց երբէմն և կարգութիւն պահպանել իր ստացածները կամ խնացածները, սովորութիւն չանելով իր ազատ ժամերը դրել ու կարդալ—նա, վաղ կամ ուշ, մոռանում է կրկին գրկիլ այն ամենը, ինչ որ նա ստացել է դպրոցում երկար տարիների ընթացքում։

Մտաւորական կողմից օրից օր թուլանալով, հաւատարմութիւնը կամաց-կամաց անզգայութեան ամբոխի հետ, աշակերտը հետևաբար տարօրինակ է և բարոյական կողմից։ Վերին աստիճանի տխուր իրողութիւն։

Երեանի բազաքում գտնուած բոլոր խանութների գիշերային պահպանութիւնը յանձնուած է երկու մարդու, որոնց մէկը մոսուլմանների է, իսկ միւսը հայերից։ Այդ երկու մարդու իշխանութեան տակ գտնուում են 10—12 գիշերապահներ «հասաս» անուանուած։ Սրանք են իսկապէս հրամայում գիշերները բազարի վրայ։ Այդ բոլոր գիշերապահները իրանց գլխաւորների «հասարաչինների» հետ իրաքանչիւր ամիս ստանում են բազարի պահպանութեան համար երկու հարիւր մանէթից աւելի փող, որ բաժանուում են իրանց մէջ։ Թէև գիշերապահները ստանում են իրանց ռոճիկը, բայց որովհետև նրանց պաշտօնի հետ միացած չէ և պատահականութեան ծանրութիւնը, այս պատճառով բազարի գրութիւնը ամենայն գիշեր վտանգի մէջ է։ Գաւառներ են և պատահած են դէպքեր, որ մի գիշեր անցեալ գրները դուրս են կրակ խանութի ապրանքը և խանութպանը հասարակաց չէ կարողացած խանգարել թէ ով է իր գողը և չը կայ մէկը, որից նա բանակատեղիքն ստանայ կորած ապրանքի հաւատ։ Գաւառապետների գործերը ապացոյց կարող են լինել, թէ այդպիսի գործերում յանձնարարում են կրկնակում մեր բազարում։ Ինչ է սորա պատճառը։ Մենք կարծում ենք այն, որ հին սովորութիւնն հանձնարարում է, բազարը յանձնւում է մէկ երկուսի հոգապարտութեան, առանց նրանց պատասխանատուութեան չափը որոշելու։ Առանց օրինական պայմանի անկարելի է չարագործութիւններից ազատ մնալ։ Մեր հասարակութիւնը ոչ մի պատուար պայման չունի ունենալ և չունենն իսնդութեանների հետ։ Մեր խանութների պահպանութիւնը թոյլ է, բազարի գոչերը փակուած մէջ են, քանի որ գիշերապահները կամ նրանց գլխաւորները զերծ են պատասխանատուութիւնից։ Այդպէս էլ, բնական է, որ լինի։ Եթէ մենք ունենք մեր տալիս գիշերապահներին, պէտք է անպատճառ նրանց գլխաւորները երաշխաւորեն մեզ իրանց հաւատութեամբ ու կալուածներով։ Այդ դէպքում խանութպանների և գիշերապահների մէջ կը լինի պատուար օրինական պայման։ Երբ այդպէս եղաւ, մենք կարող ենք համոզուած լինել, որ մեր բազարը փորձանքներից ազատ կը լինի։ Սա մի ծանրակշիռ հարց է երևանցիների համար. ինչպէս են անուշադիր թողնում։

Յովհաննէս-Հեթում

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիժնի-Նովգորդից ստացանք 36 րուբլի բանժանդպրին «Ժողովուրդ պ'Օրիանի» համար հետևեալ անձերից. տիկին Նունէ Աւաքելեան և Աբրահամ Աւաքելեանց 8 բ., Իսահակ Աթաբէկեանց, կարապետ Շահինջանեանց, Իսահակ Աւաքելեանց, Նիկողայոս Տէր-Աւետիսեան, Սարգիս վ. ապիեանց, Թորոսովքար Բաղատրեանց և Նիկողայոս Գասպարեանց իւրաքանչիւրը 4 րուբլի։ Աւտաջվայ բաժանորդական գումարի հետ կունենանք 192 րուբլի։

—

Հետևեալ կիրակի օր, ապրիլի 25-ին, վանքի մայր-եկեղեցում լինելու է Հոգեհանգիստ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու յիշատակին։ Այդ հոգեհանգիստը կատարելում են Թաղիադեան գերեզմանի և նրան հանդուցեալ Այվազովսկու նախկին աշակերտները։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են հետևեալը, ապրիլի 10-ից։ «Չորս օր է արդ, որ մեզ մօտ սկսում է սպասուիլ քամի և ցուրտ։ Ջամիների պատճառով ծովը այն աստիճան մրրկալի էր, որ մի նաւ, որ բեռնաւորուած էր նաւթով, ընկղմուեցաւ ծովումն։»

—

Նոյն տեղից մեզ գրում են որ Բաղուի հասարակութիւնը վճռել է արդէն աստղագրութիւն բանալ մի նոր եկեղեցի կառուցանելու քաղաքում, որովհետև եղածը շատ փոքր է հասարակութեան համար։

—

Հասատա ապրիլից խմացանք որ այս օրերս կալիասեան քաղաքական մասի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կօրսակովին ներկայացան վաճառականների մի պատգամաւորութիւն, երկու անձերից բազկացած, որոնցից մինը պարսիկ վաճառականների կողմից, իսկ միւսը՝ առհասարակ արտասահման առևտրով պարապող վաճառականների կողմից։ Ի միջի այլոց վաճառականները նորին պայծառափայլութեան ուշադրութիւնը դարձրին Թիֆլիսի մաքսատան մէջ կատարվող այն ձևերին, որոնք սկսել են այն օրից, երբ պ. Բարսով նշանակվեցաւ ֆինանսական մինիստրութեան կողմից մաքսատան մէջ տեսչութեան յանձնարարութեանց պաշտօնեայ։ Ասում են թէ այդ ձևերը տարօրինակներ են դարձրել առևտրականների համար, որ ստիպուած են դիմել նրանց, որ ամէն մի ապրանքի վրայ ստանան մաքսատան պաշտօնեայից տեղեկութիւն, թէ ինչ տուրք պիտի վճարեն։ Մեր կարծիքով պ. Բարսովի նկատմամբ ամբաստանութիւնները ստացուած են ոչ ուղիղ աղբիւրներից։ Մենք գիտենք, որ պ. Բարսովի կարծիքով վաճառականները կարող են արտօնեալ ապրանքները, որոնց համար ոչ մի տուրք չի պահանջվում, ազատ ապրանքները, Անդրկովկասում գտնուած տեղերը դուրս բերել և առանց մաքս վճարելու ծախել։ Մեր կարծիքով պ. Բարսովի նկատմամբ ամբաստանութիւնները կարող են արդարացի համարուել, եթէ այդ ճշտութիւնը ստացած են գալիս նրանից, որ պ. Բարսովի կարծիքով վաճառականները կարող են արտօնեալ ապրանքները, որոնց համար մաքսի տուրք չի պահանջվում, ազատ տեղերում վաճառ

ախլված կը լինի ընտրել: Աւում են որ Թիֆլիսի մաքսատան մէջ հանդիպած արդելքների լուրը իմանալով, մի քանի վաճառականներ արդէն փոքձ են փորձել անցկացնել իրանց ապրանքները Ցրապիզոնի ճանապարհով: Վերջապէս վաճառականները իրանց վերջին յոյսը դնելով իշխան Դոնդուկով-Կորսակովի վրա և անհամբերութեամբ սպասելով գործի վախճանին, դիմել են նորին պայծառափայլութեանը խնդրվքով, գործը քննել տալու, յանձնելով այդ քննութիւնը ում կը կամենայ իշխանը, միայն ոչ պ. Բոյեվին, որին նրանք գործին հնաւոր ու տեղեակ (կօմպետենտ) չեն համարում և որից նրանք վաղուց արդէն կորած են իրանց յոյսերը:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են: «Կարապետինք Թիֆլիսի բարեգործական ընկերութեան հրաւիրը տեղական վարչութիւնների համար: Երևանի երիտասարդութիւնը առաջարկել էր այդ ընկերութեանը փոխել իր մի յօդուածը, որով պահանջում է ունեցած գումարը ուզարկել խորհրդին, բայց այդ առաջարկութիւնը մերժվեցաւ: Բայց մինչ հարցնում ենք. ինչի համար պատասխին ուզարկի ընկերութեան կենտրօնական վարչութիւնը իր ամիսղջ փողը, ինչի նա առաւաւտէն չը գործածի նոյն փողը իր տեղական բարեգործական պէտքերը հոգալու վրա: Ընկերութիւնը ասում է թէ որ և է ճգնաժամի ժամանակ նրան մեծ գումարներ են հարկաւոր. բայց ճգնաժամի նշանակութիւնը պատասխին նոյնքան լաւ է հասկանում, որքան ընկերութեան կենտրօնական վարչութիւնը: Գոնէ խորհուրդը թոյլ տար ընկերութեան տեղական վարչութիւններին գրաղվել բայաւասպէս գործերի հրատարակութեամբ, որոնք կը լինէին իրանց նպատի կողմից միջին ու հասարակ դասի ժողովրդի հասկացողութիւնը աւելի մատչելի, և աւելի էժան կը ծախվէին, քան թէ Թիֆլիսի Թարգմանական ընկերութեան գրքերը: Ընկերութիւնը իր հրատարակութեամբ, ճշմարիտ է, իրաւունք է տալիս գումարների մի մասը յանձնել տեղական կառավարիչներին,— դա մի փոքրիկ պիղծում է և գուցէ մենք գոհացնիցս համաձայնվելինք դրա հետ,—բայց ինչո է երաշխաւորում մեզ, որ ընկերութեան հետևեալ ընդհանուր ժողովը չի փոխի իր այդ առաջվայ վճիռն էլ, ինչպէս և արեց արդէն մի անգամ»:

—

Ով է աղօթել «Моск. Вѣд.» լրագրին, յայտնի չէ. բայց նրա հետ մի հրաշք է պատահել: Այդ լրագիրը, որ միշտ ամենակատաղի թշնամի էր հրէաներին, յանկարծ իր № 94 մէջ տպված առաջնորդող յօդուածում սկսում է պաշտպանել հրէաներին: Պէտք է վերջ դնել հրէաների հալածանքներին, ասում է Մօսկվայի խերթը, ինչի են ամբաստանում անմեղները: Ասա ժողովրդի գժբաղդութիւններից ամենապիտաւորը, չարունակում է նա, պիտակաւն է, բայց ուս ամբոխը աւելի է հարում այն նահանգներում, որտեղ հրէաները չը կան, քան թէ այն նահանգներում որտեղ կան հրէաներին ապրելու: Ամենուրեք նահանգներում, ճշմարիտ է, շատ հրէաներ են բնակվում, ասում է կատկովի օրգանը, և այնտեղ ժողովուրդը ազքատ է և այդ ազքատութիւնը վերաբերում են հրէաների հարստահարութեանը, բայց նոյն նահանգներում հրէաները աւելի էլ ազքատ են, քան թէ ուս ամբոխը: Ուս ամբոխը, վերջապէս, անարդար է գտնում այն կարգադրութիւնը, որով արգիլվում է այժմ հրէայ դեղագործներին ապրել մայրաքաղաքներում, նոյնպէս հրաժարական տուած հրէայ զինուորներին, որոնք, ինչպէս ասում է լրագիրը, միւս քաղաքացիների պէս իրանց արիւնն են թափում հայրենիքի պաշտպանութեան համար և այդ դնում պահանջում են ապրելու մայրաքաղաքի մէջ ապահովութեամբ չնչելու: Կատկովի լրագիրը ողբ ապահովեամբ չնչելու: Կատկովի լրագիրը պարզ ասում է որ այդ վարչական կարգադրութիւնը մոտ օրինակ է տալիս այնպէս էլ դրգռված ամբոխին: Ինչի անունները. հարցնում է նա, պէտք է կրճն մեղաւորների պատիժը:

—

Լրագիրները հաղորդում են, որ կոմս Լօրիս-Մելիքով այս օրերս գտնում է Նիցցայում, որտեղ նա բժշկվում է մի չատ վտանգաւոր հիւանդութիւնից: Կամը արիւն է թքում: Հիւանդի դրութիւնը բժշկների վկայութեամբ չատ վտանգաւոր է:

—

Այս օրերս, ինչպէս հաղորդում են Օդէսայի լրագիրները, դարձեալ կայսերաւորված է գիներալ Սարէչինսկովի սպանողներից մինը:

—

Վաղը, կիրակի օր, ապրիլի 18-ին, Արծրունու թատրոնում կը լինի օրիորդ Մարի-Նաւարդի բե-

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### „ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Փարիզից „Голосъ“ լրագրին հաղորդում են հետևեալը: Պարլամենտական արձակուրդների պատճառով սկսված հանգստութիւնը ընդհատում է սարսածված լուրերով, թէ Գամբետտա աշխատում է ձեռք բերել նշանաւոր լրագիրներ: Ամեն օր լրանում է, որ նախկին մինիստր-նախագահը գնել է այս կամ այն լրագիրը: Խմբագիրները բողոքում են այդ մեղադրանքների դէմ, իբր թէ իրանք կամենում են գամբետտայի քաղաքականութեան պաշտպաններ դառնալ, բայց, չը նայելով այդ բողոքներին, սարսածված լուրերը մնասում ճշմարիտ են:

Խմբագիրները բողոքում են, Հաւատացնելով, թէ նրանք Հաւատարիմ կը մնան իրանց այժմեան քաղաքականութեանը, նոյնքան իրաւացի են և գամբետտայի կուսակիցները, Հաւատացնելով, թէ նրանք ձեռք կը բերեն մի քանի լրագիրներ: Բանը նրանումն է, որ Ֆրանսիական լրագիրների մեծամասնութիւնը պատկանում է ակցիօներական ընկերութիւններին: Իսկ ակցիաների մեծամասնութիւնը պատկանում է բանկային մեծ հիմնարկութիւններին, որոնք շատ քիչ են հոգում լրագրի քաղաքական այս կամ այն ուղղութեան մասին, այլ օգուտ են քաղում միայն լրագրի առևտրական բաժնից:

Լրագրի քաղաքական ուղղութեան փոփոխութիւնը չէ նշանակում, թէ քաղաքական խմբագիրները փոխեցին իրանց Համոզմունքը, այլ պրանից երևում է, որ բանկերը ծախել են լրագրի ակցիաները, իսկ նոր ակցիօներները խմբագրութեան կազմակերպութեան հետ միասին փոխում են և լրագրի քաղաքական ուղղութիւնը: Մամուլի

---

ներկայացնելու Գ. Սամպուկիանցի «Թոխմախլաս» օպերան: Օրիորդ Մարի Նաւարդ հայոց թատրօնական խմբի մէջ հասարակութենից ամենասիրված դերասանուհիներից մինն է և երևի թատրօնը լի կը լինի:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Գործ» ամսագրի հրատարակութեան այնքան ուշանալը և խմբագրական մի յայտարարութիւնը տեղիք են տալիս շատերին կարծելու որ պ. Հախումեանցի այդ ձեռնարկութիւնը չի աջողվիլ: Բացի մէկն էլ ամսագրի բաժանորդագրութիւնը լաւ չէ գնում Շատերը ասում են. Ինչ պիտի լինի գաւառական քաղաքում հրատարակվող մի ամսագիր: Բայց մենք ապատում ենք որ «Գործը» կը լինի մի մշակված պրօգրամային հետևող, լուրջ և ժողովրդական հրատարակութիւն, որ իր երևալով աւելի օգուտ կը տայ ազգին, քան թէ մի քանի յետադէմ պարբերական հրատարակութիւններ: Ցանկանում ենք որ ապագան արդարացնի մեր յոյսերը: Աւելորդ չէր լինի, որ հայ երիտասարդութիւնը դոնէր մի ընչին գումար նիւթապէս օգնելու նոր ամսագրի գոյութեանը, քանի որ յայտնի է թէ մեր ժամանակում հայ խմբագիրը, եթէ ինքն փորը ի չատէ անփական միջոցներ չունի, չէ կարող որ և է հրատարակութեան գործը առաջ տանել:»

—

ԵՐԵՒԱՆի զարանոցի հոգարարձութիւնը խընդրում է ասել մեզ հետևեալ յայտարարութիւնը: «Զարանոցիս հոգարարձութիւնը առանձով հոգարարձու պ. Վարդան Եղիազարեանցից Երևանի կլուբում անցեալ տարվայ դեկտեմբերի 27-ին և ներկայ թ-ի փետրվարի 5-ին կայացած զիմակահանդէսներից գոյացած զուտ արդեանց կէսը, 317 րուբլ 50 կ., որ նրա խնդիրքով կը յատկացվի տեղիս Ամենափրկչեան օրիորդական զպրոցին, Ս. Գէորգ Պետրոսի և Ս. Յովհաննէսի տպագոց ծխական զպրոցներին, պարտք է համարում ձեր լրագրի միջոցով յայտնել իր շնորհակալութիւնը պ. Եղիազարեանին և այն բոլոր անձանց, որոնց աշխատութեամբ կայացել են յիշեալ զարահանդէսները:»

—

վէր: Բայց վարչութիւնը իսհմամութեան ճամբայ ուզեց բռնել, սակայն ալ հանրութիւնները կամաց կամաց կը սկսեն հասկանալ, որ Բ. Դուռը վարչութիւն ալ մասին պէտք կը խաղցնէ: Այսօր տեղական հերթերին մէկուն մէջ կը կարդանք հետևեալը. «Ելնէկ, Ենկիրիէն, Զօպանեան Գաբեգին վարդապետի կողմէ ի պատրիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ տեղական կառավարութիւնը մահմետական բանտը դնել սուած է գինք: —Այս Գաբեգին վարդապետ երկու տարի առաջ Եոզղատի մէջ ձերբակալուած էր, իբր թէ գիւղացիները կառավարութեան զէմ գրդռած լինելուն համար, և անկէ ի վեր մերթ Եոզղատի, մերթ Ենիքէրի մէջ բանտարկեալ մնացած է: Վերջերս, պատրիարքարանի միջնորդութեան վրայ, պատիկ մը թող տրուած էր. բայց երկկոան հեռագրէն կը հասկցուի թէ տեղական կառավարութիւնը նորէն խստութեամբ կը վարուի իրեն հետ:»—Ինչպէս այդ հերթին ալ կը յիշէ առանց զատատանի բանտարկելն տէրութեան օրինաց իսկ հակառակ է:—Վարդապետը ըստ օրինի պէտք է պատրիարքարանի յանձնուէր: Ինչու չեն ըներ: Կրնէին թէ պատրիարքին համար է որ Բ. Դուռը կղերականաց հետ խիստ կը վարուի: Հիմա պատրիարք չը կայ, այդ ինչ է այս խստութիւնը: Արդեօք մեր վարչական անդամները դուն պատրանքի մը ենթակայ չեն, կարծելով որ Բ. Դրան մեղի դէմ ձեռք առած միջոցներն դիպուածական են և թէ իրենք պիտի յաջողին իրաց վիճակը փոխել: Բ. Դուռը հայոց մասին իր ծրագիրը ունի, որուն վրայ չատ անգամ խօսած ենք, ինչ ըլլայ ըլլայ, այդ ծրագիրը պիտի գործադրէ:—Վարչութեան անզամները խնդացիութիւն կրնան եթէ ինքզինքնին պատասխանատուութիւնէ ազատեն:—Դարձեալ այդ խնդիքէն կը տեղականանք թէ Եոզղատի առաջնորդին Պէրբահէ ուղղակի Բ. Դռնէն խրկուած բլլալու լուր կայ, առանց պատրիարքի միջնորդութեան: Ալիվիայ կաթողիկոս բուած անձը կը ջանայ որ այդ խնդիրը իրեն սեփհականեցնէ, ասիրոյ Սեբաստիոյ գաւառին հետ: Ցաջողած է արդեօք: Ինչ է Եոզղատին առաջնորդին պէրաթ չը խրկուելուն կամ եթէ խրկուած է առանց պատրիարքի մէջնորդութեան խրկուելու պատճառը:—Ալիվիայ կաթողիկոսական հարցը, որուն համար Բ. Դուռը ապահովութիւն կուտար թէ ազգին ուզած կերպովը պիտի վերջացնէ, դեռ իր նախկին վիճակին մէջն է: Մենք ալ կասկածներ ունենալու իրաւունք ունենք:

Պատրիարքի ամէնաբարձր մէկ կէսն է Ազգ. ժողովով չը գումարուիլը, որ պատրիարքը ազգին խաղով վիճակին կը վերագրէ այդ չը գումարուիլը: Պատրիարքի խօսքերն ծայր մ'է: Լաւ գիտենք որ պատրիարքը շատ վշտացած է որ Ազգ. ժողով չը գումարիլ. վասն զի եթէ գումարուի պատրիարքական հարցը նոր կերպարանք մը պիտի առնէ: Վարչութիւնը կրնայ թէ պէտք եղած բանակցութիւններն ընէնք Ռ. Դրան հետ, խնդիրը կարգերնք, պատրիարքի պահանջներուն գոհացում տալ ամենք կառավարութեան կողմէ, այնուհետև առօք փառօք ժողովը ընենք ու պատրիարքը իր գահը վերադարձնենք: Աղէկ գիտեմք, բայց երբ գործադրութիւն: Մենք ալ վարչութեան վրայ յոյսեր ունենք, բայց երբ այսպէս չատուցուցումներ գործերն, պիտի ըսենք որ ամենքս ալ կը խաբուինք:—Մեր սիրտը այնքան ուսի կը գառնանայ որ այս տարուան, ցաւալի վիճակը արխուր տպաւորութիւն մը կրնէ ամեն տեղի հայոց վրայ, ամենքս ալ կը զգանք պատուական ժամանակներ կը կորսնցնենք, եաքը երկու քար առնենք գլխնուս գարնենք ալ օգուտ չունի, ինչպէս անցեալին համար չունեցաւ: Ո՛րքան ցաւօք կարդացի այս վայրկենիս «Թէրճիմանի-Ղիքնարի» Տիգինի յօդուածի թղթակցին ատ խօսքերը թէ «Հ. Պօլսոյ հայոց ազգ. իշխանութեան այժմ գրանուած վիճակը և ընթացքը և պատրիարքին ատած հրաժարականովը յատաջ եկած անել և դժուարին բանդը այս կողմերը ցաւալի և մասամբ իւրք գոյիակղական և յուսահատ տպաւորութիւն մը սկսած է յատաջ բերել:»—Այս պիտի բլլայ մեր այսբան ժամանակուան յոյսերուն պատկառ:

Անոնք որ գործոց այս վիճակին գոհ չեն կրնար բլլալ մի քանի անձնասիրութեանց համեմ ինկած են և դանոնք պատճառ կը բռնեն գործոց ասանկ ընթացքին: Ցեմ պիտի, ինչ կերպով ձեզ մեծնեմ, դի ես ալ չեմ կրցած հասկնալ, մանր է, ես ըսեմ դուք մեծնցեք:—Հախտաւորներուն գլուխը փախուստեան կը դրեն: Ատոր խօսք չը կայ, նա պարզապէս կըսէ թէ պատրիարքին հակառակորդ է: Ոչ միայն այս պատրիարքին, այլ անցածներուն ալ, գալիքներուն ալ: Ինչպէս իրանդայիք no rent կը գչեն, մեր փախուստեան ալ «ոչ պատրիարք» կըսէ կամ ասկի չխոսիր, պատրիարքարանի արդի դրութեան հակառակորդ է: Ինչն ալ իրեն վարդապետութիւնը ասկի այս մասին, մանաւանդ կը խօսինք:—Բայց պիտի ըսէք, ինչ կըլլայ փախուստեանին պատրիարքին հակառակորդ բլլալէն: Ասոնց մը երկուքը իրարմէ չեմին բաժնուեր, անցեալները երբ կուզէին իրիկուվրայ հրատածել փախուստեանը, պատրիարքը ինքն ըսած էր թէ «այդ մարդը թէ որ յանցանք մը ունի, ըսէք յայտնեցէք, ես պատժեմ», բայց փախուստեան օձիքէն բռնելը դիւրին բան չէ: Հիմա երկուքը դիւրաւ դժուար կը խրկենք: Իրենց դիտաւորութիւնն է:—Բայց կը կրկնենք՝ ինչ գօրութիւն ունի անհատ մը, որչափ ալ կարևոր բլլայ և վտրոհում, պատրիարքի մը դէմ որ հայ ազգին գրեթէ ամբողջութիւնը իրեն հետ ունի:»

Բայց երբ Մերիէմ-Գալին և Եուսուֆեանը կը ցցնեն իրբ պատրիարքի դէմ դատպիրք, խընդիրը հանելուկ մը կըլլայ: Պ. Մերիէմ-Գալի Ազգ. ժողովոյ աւենապահն է: Ազգ. ժողովը միշտ պատրիարքին աջակից եղած է, իր քաղէներովը դնա գօրացուցած է, և միշտ յայտարարած է թէ չը կրնար պատրիարքէն անցնել: Եւ ահա այդ ժողովը իրեն նախագահ մը կընտրէ որ պատրիարքին դէմ դատպրէ: Կր հասկացուի: Հանելուկը աւելի կը կնճռոտի երբ դիտնանք թէ պ. Մերիէմ-Գալի միշտ պատրիարքի նպաստաւոր եղած է, միշտ բարեկամ անոր հնա, անձնական մեծ մտերմութիւն միասին, մինչև անգամ պ. Մերիէմ-Գալիի Ազգ. քրոջը հարսնեցաւ հանդիսին պատրիարքը ներկայ գտնուեցաւ: Գաշտոնական, բարեկամական այսքան մտերիմ յարաբերութիւններէ վերջ ինչպէս կնճռոտին թէ պ. Մերիէմ-Գալի դատճան մ'է Ներսէսի դէմ, մանաւանդ թէ չահ մ'ալ չը կայ իրեն, որ անով թերևս մեղմենք:—Իմ խոր օրս ատոր չը հասնիր, կրցողը թող մեղմէ, իսկ պ. Եուսուֆեանի համար, որ Ազգ. վարչութեան անհնազանդ է, երբ կըսեն թէ պատրիարքի դէմ և ազգին չահուց կը դատճանէ, ատոր ալ հասատալ դժուար է:—Պատրիարքը իրաւունք ունի Ազգ. վարչութեան ատենապետն ինքն րնտրելու ինքն ալ գնայ պ. Եուսուֆեանը ընտրեց: Պատրիարքը չատ տարիներէ ի վեր լաւ բարեկամ էր Եուսուֆեանի հետ, և գիրար լաւ կը ճանչնային. պատրիարքը ազէկ գիտէր որ Եուսուֆեան կառավարութեան գատապարտն մը անգամ է: Ալ երբ այսպիսի մեծ պաշտօն մը պատրիարքը կը յանձնէր Եուսուֆեանի առանց մտածելու, առանց կըշռելու քննութեամբ կընէր: Այդ չենք կրնար ըսել: Պարելի է որ պատրիարքը լաւ չը ճանչցած մարդուն նէր առանց պաշտօն մը յանձնէր: Առանց բանի մը «այո» չենք կրնար ըսել: Ինչու Եուսուֆեան դատպրէ պատրիարքի դէմ. միթէ աւելի մեծ պաշտօնի կրնայ անցնել ինքն, պատրիարքէն նոքա ազգին առաջին մարդն է: Բ. Դրան հաճոյ բլլալու համար: Աւելիայ չենք կրնար ըսել, վասն զի պատրիարքը այսպիսի կասկած մը ինքն իսկ չէ յայտնած, և կարծենք թէ պատրիարքը իր ազգը բաւական կը սիրէ, որ երբ տեսնէ մէկը, որ իրեն պատճառով գործի գլուխ անցած է, և ազգին դէմ կը գատճառնէ ինքն նեղ սէս լսէ, պէտք չի անոր հաճոյ բլլայ ինչ բլլայ: Մենք այսպիսի սկզբունքին մը չենք կրնար ըմպատել պատրիարքին:—Այս երեսէն հարցին վրայ այսքան մը խօսելն բաւական է: Ինչպէս որ ըսի այսքան մը խօսելն բաւական է: Ինչպէս որ ըսի այս գործակատներուն մենամարքին տալու կարող չեմ, եղածը ըսի, եթէ կրնաք մէջէն հլէք, բայց միշտ ցաւեցէք մեր վրայ որ առանկ վիճակի մէջ ենք: Ցառելու արժանին ալ մենք չենք, այլ մեր Ցանկա-Հայաստանի հայերն են, որ այդքանին մեզի գործացած՝ ապուշ ապուշ կը սպասեն ու կը սպասեն, և մենք պիտանագործական խորհուրդ խրատելու գործելու, էնթրիկանելու մէջ խաղալիք ենք:

Հայկակ

Fonds A.R.A.M

գազանիքների հետ անձանօթ մարդիկ կը զարմանան, թէ ի՞նչպէս է, որ առաջնադաւոր և անուն ունեցող գրողներ նուիրում են իրանց աշխատանքը և ընդունակութիւնները մի լրագրի, որ անուն առանալուց յետոյ կարող է ամեն ժամանակ կորչել նրանց համար։ Բայց քանի որ լրագրի սեփականութիւնը ակցիօներական բնաւորութիւն ունի, խմբագիրները ակամայ ստիպված են հնազանդվել ակցիօներական ժողովների վրճիռներին։

Շատ խմբագիրներ աշխատեցին ապահովացնել իրանց, որ սեփական լրագրի քաղաքական ուղղութիւնը անփոփոխ մնայ, բայց այդ աշխատանքները ի զուր անցան։ Ակներև է, որ մամուլի այդպիսի դրութիւնը շատ վատ է։ Լրագրի աջողութիւնը առհասարակ կախված է նրա խմբագրի տաղանդից և լրագիրը պահպանող կենսաւոր աշխատակիցներից։ Չէնց որ լրագիրը անուն և շատ բաժանորդներ կունենայ, նա կարող է փոխել իր քաղաքական ուղղութիւնը, ղրկվել խմբագրից և ղեկաւոր աշխատակիցներից. բաժանորդները գոնեա սկզբից հաւատարիմ են մնում իրանց լրագրին։ Այդ է պատճառը, որ գամբետտա աշխատում է ոչքան կարելի է շատ լրագիրներ ձեռք բերել և յանձնել նրանց իր հաւանականներին։

Հանրապետական լրագրների մեծամասնութիւնը այնքան թշնամաբար էր վերաբերվում գամբետտային, որ նրա այդ յանկութիւնը շատ բնական է։ Չը կարողանալով գրողներին իր կողմը դարձնել, գամբետտա կամենում է պրկել նրանց դրելու միջոցներից։

Փարիզի մէջ գամբետտայի քաղաքական նուիրիները պաշտպանում են „République Française“, „Voltaire“ և „Paris“ լրագիրները։ Այդ լրագրներից իւրաքանչիւրը հազիւ թէ 30,000 բաժանորդներ ունի։ Փոքր լրագրներից գամբետտային պաշտպանում են „La Petite République Française“ և „Expresse“։ Առաջինը 200,000 բաժանորդներ ունի։

Գամբետտային թշնամաբար վերաբերվում են 26 լրագրներ, որոնցից ամենաանհանգստացնողը 100,000-ից աւելի բաժանորդներ ունի։

Այդքան լրագրների դէմ մաքառելը գամբետտայի համար շատ դժուար էր և նա սկսեց լրագրներ գնել, բայց այդ գործը նրան աւելի ճեղաց, քան թէ օգնեց։ Գամբետտա մինչև այժմ գոնեա չը կարողացաւ նշանաւոր լրագրներ ձեռք բերել, մինչդեռ յայտնվեցաւ նրա պիտանութիւնը և ճեղաց նրան ոչ թէ այն պատճառով, որ նա կամենում էր կաշառել հասարակական կարծիքը, այլ որովհետև յայտնվեցաւ, թէ գամբետտա միլիոններ ուներ։ Ցաւալի էր, որ Գամբետտա մօտ 10 միլիոն ունէր, իսկ այժմ հաւատացնում են, որ նա ասրիկան 1 միլիոն ֆրանկ եկամուտ ունի։ Լրագրներ գնելու համար նա ծախսեց 15 միլիոն ֆրանկ։

Չին հանրապետականները, որոնք միշտ պարծեցել են իրանց ազնուութեամբ և աղքատութեամբ, չափազանց անբաւական են գամբետտայից և նրա կուսակցութիւնից։

## ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԴԱՐԻԱ

Երբ աւստրիական պատգամաւորների ժողովի նախագահ Շմերլինգ իր արտասանած ճառի մէջ ասեց, թէ անհրաժեշտ է Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելու, նրա խօսքերի վրա կարելի էր ուշադրութիւն չը դարձնել և նրանց քաղաքական նշանակութիւն չը տալ. գրում է „Голосъ“։ Պ. Շմերլինգ աւստրիական ազդեցութիւն ունեցող պետական մարդկերանց թւից չէ և միջոց չունի հաստատ ապրիլուններից իմանալ կառավարութեան կարծիքը քաղաքական այս կամ այն հարցի մասին։ Այն փաստից, որ պ. Շմերլինգ Բօսնիայի և Հերցեգովինայի միացնելը Աւստրիայի հետ անհրաժեշտ է համարում, չէ կարելի եզրակացնել, որ աւստրիական կառավարութիւնն էլ նոյն կարծիքի է։

Թոլոտովին ուրիշ կերպ պէտք է վերաբերվել վիէննայից ստացված հեռագրին, որ հաղորդում է, թէ աւստրիական արտաքին գործերի մինիստրը յայտնեց աւստրիական պատգամաւորների ժողովի մասնաժողովին աւստրիական կառավարութեան ձրդուածքի՝ ապացուցանել բօսնիացիներին և հերցեգովինցիներին, որ նրանք կը ստանան նիւթական և բարոյական բարօրութիւն միայն այն ժամանակ, երբ նրանց երկիրը վերջնականապէս միացրած կը լինի Աւստրօ-Ունգարիայի հետ։ Պատգամաւորների ժողովի մասնաժողովների նիստերը հրապարակական չեն և այդ նիստերի մասին լրագրների ստացած անճշգրտութիւնները պաշտօնական չեն լինում։ Շատ դիպուկ են պատահել, մանաւանդ կոմս Անդրաշիի ժամանակ, որ այդպիսի տեղեկութիւնները պաշտօնապէս հերքվել են, երբ կառավարութեան անդամներից մէկին վերաբերված խօսքերը վատ տպաւորութիւն են գործել արտասահմանում։ Շատ կարելի է, որ այս անգամ էլ աւստրիական կառավարութիւնը կը հերքէ կոմս Կալնօկիին վերաբերված յայտնութիւնը, բայց քանի որ նա աւստրիական կառավարութիւնից պաշտօնապէս հերքված չէ, առիթ չը կայ նրան չը հաւատալ, որովհետև մասնաժողովների վակված նիստերի մասին աւստրիական լրագրների հաղորդութիւնները մեծ մասամբ ճշմարիտ են լինում։

Եթէ ենթադրենք, որ մեզ ուղարկած հեռագիրը ճշդութեամբ հաղորդել է կոմս Կալնօկիի խօսքերը, անկարելի է չը ցաւել, որ աւստրիական արտաքին գործերի մինիստրը հարկաւոր համարեց մասնաժողովի նիստի ժամանակ խօսել այն օգտի մասին, որ կը ստանար Բօսնիան և Հերցեգովինան, միանալով Աւստրիայի հետ։ Ճշմարիտ է կոմս Կալնօկի հրաժարվեցաւ բարյացակել այն միջոցները, որոնց օգնութեամբ պէտք է միացնել յիշեալ նահանգները Հաբսբուրգների երկրի հետ, բայց նրա ասածներն էլ ինքն իսկ ինքեան հակասական են այն դրութեանը, որ իւրաքանչիւր երկրի արտաքին քաղաքականութեան դեկավարողի առաջին պարտականութիւնն է։

Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելու հարցը այդ երկրի ներքին քաղաքականութեան հարցերից չէ։ Բերլինի դաշնագրով առեղծած դրութիւնը թիւրքաց այդ երկու նահանգների համար անկասկած շատ անբնական և խրճճված է, բայց այսու ամենայնիւ պարզ երևում է, որ այդ երկիրները Աւստրիային չեն պատկանում։ Ուրեմն Եւրոպան յանձնեց աւստրիական կառավարութեանը կարգապահութիւն և օրինականութիւն մտցնել Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ, որոնք բացակայ էին թիւրքաց կառավարութեան ժամանակ, և այդ երկու նահանգների ներքին և բարոյական բարօրութիւնը վերականգնել։ Եթէ աւստրիական կառավարութիւնը այժմ խոստովանում է, որ այդպիսի հեռանկար ուրիշ կերպ անկարելի է առնալ, եթէ ոչ Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելով, դրանից երևում է, որ Եւրոպայի ուսած յանձնարարութիւնը անիրագործելի է։ Այս հիման վրա բարձրացած հարցը պէտք է ենթարկվի միջազգային քննութեանը և նա ստար պէտք է լինի աւստրիական բոլոհատապի կամ պատգամաւորների ժողովի համար նոյնքան, որքան Տրիեստի և Տրինաօնի ներքին և բարոյական բարօրութիւնը իտալական պարլամենտի համար։

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Վան, 16/28 մարտ 1882

Քանի շաբաթ է որ գրած չեմ ձեզ որովհետև փոստի ուղութիւնն շատ անդամ կը բանայ կը կարդայ կասկածելի նամակներն։ Այժմ մի նոր օրէնք ալ դրած են փոստի համար. վաճառականները պէտք է որ իրենց նամակները բաց տանին ներկայացնեն փոստի ոստիկին որ իրաւունք ունի նայել թէ մէջը ուրիշի ալ նամակ կայ. եթէ կայ, պէտք է որ ամեն մէկ նամակի համար առանձին առանձին վճարը առնայ 4 դրուշ (33 կոպէկ)։ Զարմանալի չը պիտի թուի ձեզ որ վանէն մինչև Կ. Պօլիս մի նամակի ծախքն 33 կոպէկ է, իսկ մինչև Տփղիս 8 կոպէկ։

Մի կողմէն փոստի ուղութիւնը վաճառականներին կը նեղէր նոցա նամակները բանալ տալով և ներփակ ամեն մի նամակի համար առանձին վճարը առնելով. միւս կողմէն վաճառականներն ալ միացան և աշխատեցան մեր փոստի ուղութիւնը պղտորիւններով երևան հանել։ Այժմ այդ հաստատած մի իրողութիւն է և քննութեամբ իմացուեցաւ որ փոստի ուղութիւնը շատ անգամ աւելի փոշ կը առնայ և պակաս դրուշմաթուղթ (մարկա) կը կպցնէ նոյն նամակների վրայ։ Ցաւալի այժմ դատաստանի առակ է։

Այս խիստ հսկողութեանց առակ և խուզարկութեան միջոցին, ներեցէք եթէ ես ալ դիպուածին չունենամ յանձնարարել ձեզ։

Այսօր կուզեմ գրել ձեզ մանուածապատ հոգեբանների մի այլայլութեան նկատմամբ։ Աշխարհի չորս կողմերէն վռնդուած այս ապրածները մեր կիրքը իրենց հանգստութեան տեղ գտնելով, կուգին իրենց ճիրաններուն տակ խեղճ հայերը։ Ինչ կուգեն անել այս մարդիկ. ինչու համար եկած են այստեղ. վարժարաններ բանալ, մեզ դաստիարակել կուգեն։ Բայց մեր պէտք չունինք նոցա վարժարաններուն. միթէ հայեր չեն կարող հազալ իրենց վարժարանի պէտքեր եթէ ամեն կողմ ձեռք ձեռքի առած օգնեն։ Եթէ այդ հոգեբանները նպատակ կրթութիւն տարածել է, որպէս իրենք կասեն, Ը՛ր հաշխատին անտարբ միջոցներով հոգիներ որսալ։ Եզուխանները իրենց հետ բերած են մի քրիստոնեայ արար սպասաւոր։ Իրենց ղրացիներէ մի աղքատիկ հայ աղջկայ վրայ նշանակին այդ սպասաւորը։ Բայց նախ պայման դրին խեղճ աղջկան որ իբր լուսաւորչական կրօնը ուրանայ և կաթոլիկ դառնալով ուխտ անէ եզուխանեան հաստատարիմ մնալ։ Այս ամեսայ ուրացութիւնը կատարուելէ յետոյ պսակելին պիտի սպասուորին։ Կրօնը խիղճի խնդիր լինելով, ամեն մարդ ազատ է ուզած կրօնքին ծառայել, լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ, դէխտա և մինչև իսկ անհաւատ լինել, այդ Աստուծոյ և իր գիտակից բանն է։ Բայց ինչպէս որ մենք ուրիշի կրօնական հաւատալիքները սպառ խղճով կուտենք, ուրիշն ալ պէտք է որ մեր կրօնական սպասաւորները յարգէ. խղճ լինի նա ասիացի, եւրոպացի կամ ամերիկացի։ Մի աղջիկ ամուսնացնելու համար պատասխրգնել պէտք որ իր լուսաւորչական կրօնը ուրանայ, մեր մահմետականներու կողմէն միայն տեսած էինք այսպիսի բռնութիւն. այժմ կը տեսնենք որ քրիստոնեայ եզուխանները կը գերազանցեն զանոնք։ «Սարը է կինն ան հաւատա սրամբն և այրն՝ անհաւատա կնատն» (Ա. Կորնթ. Գլ. Ի. 14) կը գրէ Ս. Գիրքը։ Ներ քրիստոնէական ներողամիտ կրօնը թոյլ կը տայ մինչև անդամ անհաւատա կին ունենալ, պրոնեք եզուխանները մեր կրօնակիցներ գոնե հերձուածող կանուանուին, անհաւատն ունի սիրտ կը համարին որ ատիպեցնին լուսաւորչական հայ աղջկան ուրանալ իր կրօն և ազգութիւն (աղջիկը այժմ եզուխաների տան մէջ պարտաւորուած է թիւրքերէն խօսել և ոչ թէ հայերէն։ Սոքա, ազգութեան թշնամի, կաշխատեն ջնջել ազգութեան ամեն յատկանիշ, իրենց կրօնքին դէմ ատելով)։ Ահա այս տեսակ հրէշաւոր կրթութիւն ունեցողներն են որ եկեր են վան կրթութիւն տարածել մեր հայ մանուկներուն մէջ և ինչպէս կը լսենք, շատեր ալ պատրաստուած են իրենց զաւակներ տալ եզուխաների բանակը գալոցը, որովհետև ամեն բան ձրի է այնտեղ...։

Կը կրկնենք թէ մեր կրօնական ազատութեան ջերմ կուսակիցներն ենք և մեր կաթոլիկ, բողոքական հայ եղբայրը իբր ընդունած կրօնին համար անպատասխան վայրենութիւն կը համարինք. բայց երբ կը տեսնենք որ այլակրօններ մեր մէջ ամենատարբ միջոցներով պրօպագանդա անել կուգեն, այդ ժամանակ լռելն ալ անպատկառութիւն կը համարինք։ Մեք, իբր լուսաւորչական հայ, չենք համաձայնուիր բողոքական կրօնին հետ. բայց ինչ կարող ենք ասել այստեղ գտնուող մի քանի բողոքականներուն որք, թէև իրենց մայրենի եկեղեցի փոխած, չեն ուզեր փոխել նաև իրենց ազգութիւն. մաքուր հայերէն կը խօսին, հայի պէս կը զգան և տակաւին վերջին ժամանակներ, կրկին անգամ լինելով, իրենց միաբնակ պ. Բարնումի միջոցով ինդպագիր տուին Խրիմեան Հայրիկին որ մեր ազգային վարչութեան իրաւասութեան տակ մտնեն, Սահմանադրութեան համեմատ իրենք ալ քանէ տալու իրաւունք ունենան, ազատ մնալով միայն իրենց ժողովատան երեսէ ազօթելու։ Ուրախութեամբ կը փութամ յայտնել ձեզ որ մեր բողոքական եղբայրներէ մի քանին մեր վարչութեան դիմելով յայտներ են թէ Հայրիկի գրած ազգային տուրքը (որ առաջնորդարանի և այլ ազգային ծախքերու յատկացած է) իրենք ալ պատրաստ են վճարել իբր հայ ազգակից և իրենց անուններ ալ սրձանագրել տուած են ազգային տուրք վճարողներու տետրակին մէջ։ Այդ տուրք վճարողները միայն իրաւունք պիտի ունենան, սահմանադրութեան համեմատ ազգային ժողովականները ընտրելու համար քանէ տալու։

Մեք, իբր լուսաւորչական հայ, համաձայն լինք նաև կաթոլիկ կրօնին հետ. բայց ինչ կարող ենք ասել այն կաթոլիկ հայ եղբայրներին (ուր որ ալ գտնուին) որք չատ լուսաւորչականներէ աւելի կատաղի հայ են և բարի քրիստոնեայ. միայն թէ այլ է կաթոլիկութիւնը և այլ է եղուխաութիւնը. առաջինը մի սրբազան կրօն է չատերի համար. իսկ երկրորդը բոլոր աշխարհի համար մի դժոխային մելքնայ է, ազգային զգացումները ջնջելու և մարդը գիակ դարձնելու համար հնարուած։

Շարունակ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հաղորդում են լրագրները Կ. Պօլսի առաջի դեսպան Նօվիկօվի յատկանշելը բացատրում է նրանով, որ առաջ կառավարութիւնը ցանկանում է ունենալ ճիշդ տեղեկութիւններ պատերազմական կօնտրիբուցիայի մասին Բ. Պրան հետ ունեցած վերջին ժամանակներում ոչ այնքան բանակցական բանակցութիւնների պատճառով։

—«Հաշտեան ընկերութիւնը» հաղորդում է որ առաջին կարգի պատերազմական կօնտրիբուցիայի հարցը աւելի բարենպաստ վերջ ստացաւ, քանի որ պ. Նօվիկով համաձայնութիւն տուեց Բ. Պրան առաջարկութեանը։

—«Голосъ» հաղորդում է որ ռոշխիլտում կալանաւորելը միջոց տուեց ոճրագործելու մի ամբողջ միջազգային դատարութիւն։

—«Times» լրագիրը բարեհոգի Գիլսի նշանակվելը արտաքին գործերի մինիստրի պաշտօնի վրա, ասում է թէ այդ նշանակութիւնը գրաւական է որ Ռուսաստանը կամենում է խաղաղութիւն պահպանել իր հարևանների հետ։ Եթէ, աւելացնում է անգլիական թերթը, կը կենդանանայ ռուս և աւստրիական կայսրների տեսակցութիւնը, այդ ապացոյց կը լինի, որ, գոնէ այս րոպէիս, Խուսաստանը գիտաւորութիւն չունի հանդէս գալ որպէս պատճառների պաշտպան։

—Լօնդոնից հեռագրում են հետևեալ լուրերը։ Առաջիկայ է անանուն նամակ որ ստացուած է ճայթեցնել Ութնդրօբեան գօրանոցը։ Ապրիլի 6-ին կէսրուբում, Կօրնուէլեան կամուրջեան մէջ, ամբոխը աչնչացրեց իրլանդացիների տները և կաթոլիկ եկեղեցին։ Լիմերիկից ոչ հեռու ապանված է մի եօթանասուն տարեկան դատաստանական պաշտօնեայ։

Fonds A.R.A.M

—«Journal des Debats» լրագրին կայիրէից մէկ հեռագիր է ուղարկված, որ հաղորդում է, թէ դիւանագործական դատարանը 13 չէքէդ օֆիցէրներին արդարի դատապարտեց:

—«Երկաթների ընկերութիւնը» կալկուտայից հաղորդում են, որ Մանդալայում նորից սկսվեցան քաղաքական ագիտատիւններ:

—«Times» լրագրին Ալէքսանդրիայից հեռագրում են ապրիլի 9-ին, որ կայիրեում երկիւղ են կրում բէդուինների ապստամբութիւնից այժմեան կառավարութեան դէմ, այդ պատճառով շատերը դարձեր են ուղարկված Ջաժարիկ և Գաճանդարա ամմոնիները պահպանելու համար:

—«Viener Tageblatt» լրագիրը ապրիլի 5-ից հեռանալ հեռագիրը ստացավ Պալէրմոյից: Երկիր Գարիբալդին, իր ընտանիքի ուղեկցութեամբ, կապրէրա կղզին վերադարձավ: Ազգաբնակութիւնը նրան փառաւոր ցոյցեր արավ:

—«France» լրագրին Ամերիկայի Բուէնոս-Այրէսից, ապրիլի 1-ից հեռագրում են հետեւեալը: Այսօր կառավարիչ համաշխարհային հանդէսի պաշտօնական բացումն: Ֆրանսիական բաժինը մեծ աջողութիւն ունեցաւ: Այցելուների թիւը մեծ է:

—Բերլինից լրագիրներին հաղորդում են թէ դիւանագործական շրջաններում հաւատացնում են, որ դեսմանական կառավարութիւնը միտքից Բ. Դրան խնդիրը, արտ թիւրքաց կառավարութիւնը խնդրում էր կ. Պոլիս ուղարկել ընծհանուր շտաբի մի քանի գերմանացի օֆիցէրներին:

—«Presse» լրագիրը հետեւեալ հեռագիրը ստացաւ Բերլինից ապրիլի 5-ից: Իշխան Բիսմարկին այս շաբաթվայ սկզբին են ազատում. նա դիւանագործութիւն ունի դաշնակցական խորհրդի աշխատանքներին մասնակցել: Չը նայելով այն հանգամանքին, որ երևի միջամտութիւնը ձայն կը ասայ ծխախոտի մենաշնորհութեան օրէնքը մտցնելու համար, բայց շատերն էլ ենթադրում են, որ այդ խնդիրը զօրեղ ընդդիմադրութեան կը հանդիպի: Մանաւանդ ամերկին զգում է դաշնակցութեան մանր պետութիւնների ընդդիմադրութիւնը:

—Լրագիրներին Վիէննայից հեռագրում են, որ աւստրիական միներալոգական կոմս Տաաֆէ վճռեց հետազոտ միջոցներ գործ դնել գիւղացիների անտեսական դրութիւնը բարելաւելու համար:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Թիֆլիսի—Տպատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Գոլովինսկի պրօսպեկտի վրա, տան Ճորտապատկա Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ЕВРОПЕЙСКІЙ АПРАШАНЪ ТОВАРОВЪ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Адресъ-Календарь на 1882 годъ, заключающій въ себѣ: Общій Адресъ-Календарь г. Тифлиса, № 144 Календарь г. Баку, Адресъ-Календарь всѣхъ городовъ Кавказскаго края, Адресъ-Календарь Закаспійской области, Адресъ-Календарь Эриванской губерніи, Адресъ-Календарь Карской области, Адресъ-Календарь Батумской области, Адресъ-Календарь Сухумскаго округа, Адресъ-Календарь Черноморской губерніи, Адресъ-Календарь Ставропольской губерніи, Адресъ-Календарь Терской области, Адресъ-Календарь Кубанской области, Адресъ-Календарь Астраханской губерніи, Адресъ-Календарь Ростова на Дону, Адресъ-Календарь Таганрога, Адресъ-Календарь Новочеркасска, Адресъ-Календарь Нахичевани на Дону, Адресъ-Календарь Керчи, Адресъ-Календарь Ейска, Адресъ-Календарь Таманскаго полуострова, Адресъ-Календарь Крымскаго полуострова, Адресъ-Календарь Одессы, Адресъ-Календарь Николаева, Адресъ-Календарь Херсона, Адресъ-Календарь Таврической губерніи, Адресъ-Календарь Екатеринослава, Адресъ-Календарь Харькова, Адресъ-Календарь Полтавской губерніи, Адресъ-Календарь Черниговской губерніи, Адресъ-Календарь Кіева, Адресъ-Календарь Волынской губерніи, Адресъ-Календарь Подольской губерніи, Адресъ-Календарь Могилевской губерніи, Адресъ-Календарь Витебской губерніи, Адресъ-Календарь Минской губерніи, Адресъ-Календарь Смоленской губерніи, Адресъ-Календарь Калужской губерніи, Адресъ-Календарь Тульской губерніи, Адресъ-Календарь Орловской губерніи, Адресъ-Календарь Курской губерніи, Адресъ-Календарь Воронежской губерніи, Адресъ-Календарь Рязанской губерніи, Адресъ-Календарь Тамбовской губерніи, Адресъ-Календарь Пензенской губерніи, Адресъ-Календарь Саратовской губерніи, Адресъ-Календарь Самарской губерніи, Адресъ-Календарь Симбирской губерніи, Адресъ-Календарь Казани, Адресъ-Календарь Вятской губерніи, Адресъ-Календарь Пермской губерніи, Адресъ-Календарь Оренбургской губерніи, Адресъ-Календарь Уфимской губерніи, Адресъ-Календарь Москвы, Адресъ-Календарь Владимірской губерніи, Адресъ-Календарь Нижегородской губерніи, Адресъ-Календарь Костромской губерніи, Адресъ-Календарь Ярославской губерніи, Адресъ-Календарь Тверской губерніи, Адресъ-Календарь Новгородской губерніи, Адресъ-Календарь Петербурга, Адресъ-Календарь Олонецкой губерніи, Адресъ-Календарь Архангельской губерніи, Адресъ-Календарь Вологодской губерніи, Адресъ-Календарь Псковской губерніи, Адресъ-Календарь Эстляндской губерніи, Адресъ-Календарь Лифляндской губерніи, Адресъ-Календарь Курляндской губерніи, Адресъ-Календарь Финляндіи, Адресъ-Календарь Варшавы, Адресъ-Календарь Варшавскаго округа, Адресъ-Календарь Калишскаго округа, Адресъ-Календарь Келецкаго округа, Адресъ-Календарь Люблинскаго округа, Адресъ-Календарь Петроковскаго округа, Адресъ-Календарь Радомскаго округа, Адресъ-Календарь Сандомирскаго округа, Адресъ-Календарь Августовскаго округа, Адресъ-Календарь Ломжинскаго округа, Адресъ-Календарь Плоцкаго округа, Адресъ-Календарь Сувалкскаго округа, Адресъ-Календарь Бѣлостокскаго округа, Адресъ-Календарь Гродненскаго округа, Адресъ-Календарь Седлецкаго округа, Адресъ-Календарь Ковенскаго округа, Адресъ-Календарь Варшавскаго округа, Адресъ-Календарь Ивангородскаго округа, Адресъ-Календарь Привислинскихъ губерній, Адресъ-Календарь Царства Польскаго

№ 66 Ապրիլ 20 (Մայիսի 2) 1882 Ապրիլ 20 (Մայիսի 2) № 66

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք գրեում են ուղղակի Тифлисъ· Редакція «Мшакъ»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Խաղաղութեան պահանջ: Նամակ Թիւրքիայից:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Հայր և սկեսուր:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Petersb. Ztg.» գերմանական լրագիրը հաղորդում է որ կոմս Լօրիս-Մէլիքօվ արդէն առողջ է և շուտով կը կարողանայ գալ Ս. Պետերբուրգ: Լրագիրը լսել է որ կոմսին յանձնվում է մի նշանաւոր պետական պաշտօն:

«Донская Пчела» լրագրում կարդում ենք որ ապրիլի 7-ին կատարվեցաւ Նոր-Նախիջևանում հայ օրիորդաց Գօգօյեան դպրոցի բացման հանդէսը: Վիճակ գցվեցաւ թոշակառու օրիորդներին ընտրելու համար այն 23 աշկերտներից, որոնք խնդիրք էին ներկայացրել դպրոցում ընդունված լինելու նպատակով: Այդ վիճակահանութիւնից յայտնվեցաւ որ խնդրատու օրիորդների ընդհանուր թւից կէսը, այն է 12 օրիորդներ, ընդունվեցան որպէս դպրոցի թոշակառուներ:

Կուր գետի մէջ ջրի մեծանալու պատճառով շատ այգիներ և բոստաններ Օրթաճալա աւված Թիֆլիսի մօտ գտնված կղզիներում, ջրի տակ ընկղմվեցան: Այդ է պատճառը որ բանջարեղէնները յանկարծ թանգացան Թիֆլիսում:

Հարուստ ռուս-հրեայ բարոն Գինցբուրգ նուիրեց 10,000 րուբլ հակահրէական շարժումից վրդովված Բալտայի հրէաների օգտին:

Նախկին մինիստր կոմս Վալուևի բօմանը «Лоринъ» ամբողջ ռուսաց մամուլի քննադատութեան առարկայ է դարձել: Ի հարկէ պետական նշանաւոր մարդուց ոչ ոք չէր սպասում և չէր պահանջում որ նա իր բօմանի մէջ ցոյց տար գեղարուեստական տաղանդ, որ ձեռք է բերվում միմիայն երկար գրականական գործունէութեամբ և որ անհնարին է ձեռք բերել իր ամբողջ կեանքը պաշտօնեայ լինելով և պաշտօնական թղթեր գրելով,—բայց ամենքը սպասում էին կոմս Վալուևից որ և է ազատամիտ անկեղծութիւն իր բօմանի մէջ, համարելով նրան ազատամիտ կուսակցութեանը պատկանող մի մարդ: Բայց յայտնվեցաւ որ Վալուևի բոլոր համակրութիւնները բիւրոկրատական ուղղութեան և պոլիցիական պետութեան հնացած ձևի կողմն են: Հեղինակը սաստիկ գովում է ռուս բիւրօկրատիային, ռուս պաշտօնեաների դասակարգը, մանաւանդ գերմանական ծագումի ռուս պաշտօնեաներին: Նա արհամարհանքով է վերաբերվում դէպի ռուս ամբոխը, դէպի ռուս հասարակութեան միջին դասակարգը, ինտելիգենցիան, որի գոյութիւնն անգամ հերքում է, բայց մանաւանդ դառն ատելութեամբ է վերաբերվում դէպի դատաստանական վարչութիւնը, գտնելով որ նոր, հրապարակական դատարանների ներկայացուցիչները, շատ անգամ նպաստում են հակապետական մտքերի զարգացմանը, քիչ է մնում մեղադրէր նրանց որ նրանք յեղափոխականների կողմն են բռնում: Մեր դատաւորներն են, հեղինակի կարծիքով, որոնք ամենից աւելի խախտում են ժողովրդի աչքում կառավարութեան հեղինակութիւնը: Վալուևը իր բօմանի մէջ պարզ ցոյց է տալիս իր համակրութիւնը դէպի կլասիկական ուսումը, դէպի արիստոկրատական ուղղութիւնը, կը կամենար որ հողերը միացրած լինէին մի քանի ընտրեալների ձեռքում, հերքում է երկրագործ ժողովրդին նոր հողեր յատկացնելու անհրաժեշտութիւնը և պաշտպան է հանդիսանում հողատիրութեան այն ձևի, մայօրատի, որ հայերէն լեզուով կարելի է թարգմանել աւագածառանգութիւն բառով, և որի հիման վրա մի տոհմի միայն աւագ որդին ժառանգում է հայրական կալուածները, որպէս զի հողերը երբէք չը բաժանվեն, կտոր կտոր չը լինեն: Այդ բոլորը ցոյց է տալիս որ հեղինակը ուրիշ բան չէ, եթէ ոչ Բալտեան նահանգների, ռուս-գերմանացի բարոնների ոգով մեծացած մի մարդ: Եւ որպէս բարոնական ուղղութեան մի մարդ, Վալուևը յաջորդաբար թշնամի է հանդիսանում սլավեանօֆիլների և իր բօմանի մէջ դառն ծաղրով է վերաբերվում դէպի այդ կուսակցութիւնը: Նախկին մինիստրը և այժմեան հեղինակը իր բօմանով իբրև կատարեալապէս մերկացրեց և ցոյց տուեց իրան ոչ թէ ազատամիտ կուսակցութեանը պատկանող, ինչպէս առաջ նրա մասին կարծում էին, այլ միմիայն ռուս-գերմանական, Բալտեան նահանգների բարոնների ուղղութեան հետևող, թէթև բիւրօկրատ, որ չընդունելով ռուս հասարակութեան որ և է ինքնագործութեան կարելութիւնը, Ռուսաստանի ամբողջ փրկութիւնը սպասում է լուսաւորված չինովնիկներից: Նրա իդէալն է լուսաւորված բիւրոկրատական պետութիւն, կամ ուրիշ խօսքերով լուսաւորված պոլիցիական պետութիւն, որ հիմնվում է այն գաղափարի վրա, թէ հասարակութիւնը միշտ անչափահաս է և պէտք է միշտ խնամակալի լուսաւորված չինովնիկների: Ահա «Լօրին» բօմանի ամբողջ տենդենցիան:

«Արձագանք» շաբաթաթերթին հաղորդում են որ կովկասի պ. կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակով հաստատել է այս օրերս «Հայկական դրամատիկական ընկերութեան» անունով կըլուբի կանոնադրութիւնը:

«Кавказъ» լրագրին հաղորդում են որ ապրիլի 2-ին գիշերը եղաւ Շամախում երկրաշարժի մի ցարկ, որ սակայն ոչինչ վնաս չը պատճառեց քաղաքին:

«Մշակի» խմբագրութիւնը մեծ շնորհակալութեամբ ստացաւ Բեռլինի պրոֆեսոր պ. Ռուդոլֆ Վիրխովից նրա հրատարակած բրօշիւրը որ պարունակում է երեւելի պրոֆեսորի այն դասախօսութիւնը, որ նա կարդացել է Բեռլինի Անտրոպոլոգիական ընկերութեան մէջ Կովկասի մասին, մեր երկրի մէջ իր արած ճանապարհորդութիւնից վերադարձած լինելով: Այդ դասախօսութիւնը հրատարակվեցաւ «Kaukasische Prähistorie» վերնագրով:

Շնորհակալութեամբ ստացանք Բեռլինից դոկտոր Անդրէաս Արծրունուց նրա նոր գիտնական հետազօտութիւնը «Krystallogr. Untersuchungen an sublimirtem Titanit und Amphibol» վերնագրով:

Գ. Սօսդլինից շնորհակալութեամբ ստացանք նրա ռուսերէն թարգմանութիւնը Էրնէստ Րընանի «Ի՞նչ է ազգութիւն» վերնագրով դասախօսութեան:

«Гусли» շաբաթաթերթը պատասխանում է մեր արած նկատողութեանը երկու Թիֆլիսեցի բժիշկների ագահութեան առիթով և արդարացի գտնելով մեր առաջարկութիւնը երկու կողմն էլ լսելու, հարցը խղճմտաբար ուսումնասիրելու համար, յայտնում է որ ապրիլի 16-ին «Մշակի» խմբագրի ներկայութեամբ «Гусли» լրագրի խմբագիրը տեղեկացաւ բժշկից նոր հանգամանքների մասին թէ ինչ ձևով էին բժշկում մի յղի տիկնոջը մեր յիշած երկու բժիշկները: «Բացի օպէրացիայից, որ կատարվեցաւ դեկտեմբեր ամսին, որ կարող էր և պատճառ չը լինել մեռած երեխայի վիժման, յղի տիկնոջը դնում էին ապուռներ, ենթարկում էին նրան տաք դուշերին, դնում էին նրա ոտները տաք ջրի մէջ, խարդալով, սախպում էին նրան շրջել կառքով արհեստական ժամանակ: Եւ այդ բոլորը շարունակվում էր մինչև 14 փետրվարի, ուրեմն օպէրացիայից յետոյ երկու ամիս շարունակ» իր նկատողութեան վերջը ռուս թերթը ասում է որ այդ գործը հարկաւոր կը լինէր ենթարկել Կովկասեան բժշկական ընկերութեան, կամ մի քանի բժիշկ-մասնագէտների

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՉԱՐԼԶ ԴԻԿԿԷՆՍ

### ՀԱՅՐ ԵՒ ՍԿԵՍՈՒՐ

(Նուէր սկեսուրներին)

I

—Ինչպէս, Արտուր, դու ինձանից ներողութիւն ես խնդրում: Ես այդ աւելորդ եմ համարում: Դու չափահաս ես և կատարեալ իրաւունք ունես պսակվելու ում հետ կամիս: Ի հարկէ, դու քո ընտրութեամբ ոչնչացրիր իմ բոլոր յոյսերն ու նախադծերը, բայց էլ ինչու ես խնդրում, որ ես քեզ ներեմ: Բոլորը, ինչ ես կարող եմ անել, այն է ճանաչել արդէն կատարված իրողութիւնը—և ես այդ անում եմ:

Եւ նա սառնութեամբ ժպտաց:

—Ես կը կամենայի, մայրիկ, որ դուք այդ ամէնը ինձ աւելի քաղցր եղանակով, ասաց Արտուրը ըմբոստօրէն: Դուք շատ բարի էք, մայրիկ, բայց ձեր խօսքերը սիրտս աւելի յուզեցին:

—Գոնէ դուք հաւատացէք ձեր ամուսնուն, եթէ նա այլ ես չէ հաւատում իր մօրը, որ ես նրա վրա չեմ բարկանում, ասեց միսսիս Ամֆլէտը մի և նոյն անախորժ ու անբնական ժպիտով, դառնալով դէպի մի շատ երիտասարդ գեղեցիկ կին, որ երկչոտութեամբ կանգնած էր մի կողմը:

—Նրա առ ձեզ սէրը թելադրում է նրան այդ կասկածը, պատասխանեց նա, աղերսալի աչքերը դարձնելով դէպի իր ամուսինը:

—Միթէ ես ձեզանից պատճառների մեկնութիւնը խնդրեցի: Ես ուզում էի միայն, որ դուք, միսսիս Ամֆլէտ, համոզէք նրան: Կարծեմ, դուք այնչափ սրատ չէք կարողանում ըմբռնել բանի էութիւնը: Դուք բոլորովին շփոթվեցաք: Բայց դուք ամենևին չէք խնդում ձեզ պահել: Այդ ինչպէս կարծեցաք: Դա շատ տգեղ բան է: Այո, շատ գլուխ ցաւեցնել պէտք է, մինչև որ կը սովորէք ձեզ պահել մի օրինաւոր հիւրասենեակում:

Նա ծիծաղեց: Այս անբնական և արհամարհական ծիծաղը կատարելապէս շփոթեց խեղճ Ջէրալդինային: Նա դարձաւ դէպի իր ամուսինը և, ծածկելով իր երեսը նրա կուրծքի վրա, ցաւալի ձայնով արտասուեց.

—Ո՜հ Արտուր, Արտուր. հեռանանք այստեղից. շուտով հեռանանք:

Եւ արտասուքը հեղեղի նման թափվեցան նրա աչքերից:

Միսսիս Ամֆլէտը հանգստութեամբ զանգակը հնչեցրեց:

—Մի բաժակ սառը ջուր, Ջօն, և ասա Գրէյսօնին, որ իմ սենեակից սպիրտ բերէ, ասեց նա ծառային: Սա, կարծեմ, խուճուճ հիւանդութիւն է:

Այն արհամարհական եղանակը, որով ասած էին այս վերջին խօսքերը, Ջէրալդինային սթափեցրեց: Նա բարձրացրեց գլուխը և երկչոտութեամբ նայեց ամուսնու վրա: Թէև վերջինը մի ձեռքով գրկել էր նրան և քաղցրութեամբ նայում, այնու ամենայնիւ Ջէրալդինան վախենում էր՝ չը լինի թէ իր թուլասրտութեամբ բարկացրած լինէր ամուսնուն:

—Ո՛չ, ոչինչ, ասեց նա, ծիծաղելով արտասուքը աչքերին և յետ քաշելով իր մեղ գանգուրները, որ խառնված թափվել էին երեսի վրա. ճշմարիտ, ոչինչ, անցաւ արդէն. ես շատ ամաչում եմ... Հեկեկալը արգելում էր նրան խօսել:

—Այդ հիւանդութիւնը յաճախ է կրկնվում, հարցրեց միսսիս Ամֆլէտը, իր բաց շագանակագոյն աչքերը ուղիղ նրա աչքերը ցցելով: Դա շատ անախորժ բան է, իմ կարծիքով: Միսսիս Արտուր Ամֆլէտի համար դա այնքան պատշաճաւոր չէ: Դու կարող ես յետ տանել, Ջօն, ասեց դառնալով դէպի ծառան, որ ներս էր վազում արծաթէ մատուցարանի վրա դրած սառը ջուր և մի չիչ սպիրտ ձեռքին: Կամ թէ չէ՞ թող այստեղ. հիւանդութիւնը կարող է կրկնվել, աւելացրեց նա, երեսը դարձնելով դէպի Ջէրալդինան:

—Հաւատացնում եմ ձեզ, մայրիկ, որ ես սրան այս գրութեան մէջ երբէք տեսած չեմ, բացականչեց Արտուրը: Սա միշտ զուարթ ու ուրախ է եղել: Ես չը գիտեմ՝ ինչ պատահեց այժմ նրա հետ:

—Իրաւ: Եթէ այդպէս է շատ ցաւում եմ, որ իր թուլասրտութիւնը արտայայտելու համար մեր առաջին տեսակցութիւնն է ընտրել: Գուցէ շատերը կանանց թուլասրտութիւնը գրաւիչ են գտնում, բայց ես այդպէս չեմ կարծում: Ես այդ հիւանդութեան ցնցումների վրա նայում եմ ինչպէս մի ժամանակաւոր խելացնորութեան վրա: Ցաւէք, շարունակեց նա մի և նոյն կծու և վստահ եղանակով, տեղաւորվելով բազկաթոռի վրա. առաջին տեսակցութիւնը, որից դուք, որպէս մեղաւորներ, երևի ինձանից աւելի էիք վախենում, բարեյաջող վերջ ունեցաւ: Հաւատացիր ինձ, խնդրեմ, Արտուր, որ դու թէև, պսակվելով առանց իմ գիտութեան, վիրաւորեցիր ինձ և իմ անձնասիրութիւնը սաստիկ վրդովվում է, երբ յիշում եմ, որ դու քո շրջանից դուրս ընտրեցիր կինդ, բայց ես դարձեալ չեմ բարկանում քեզ վրա: Ես միշտ անկեղծ եմ խօսում, Ջէրալդինա կարծեմ, անունդ Ջէրալդինա է, այնպէս չէ՞: ինձ թվաց, որ դուք, կարծես, զարմացաք և մինչև անգամ վեր թռաք, երբ ես ձեր անունը տուեցի: Բայց այդ մի և նոյն է: Եւ այսպէս՝ դուք կարող էք մնալ ինձ մօտ Ցօրնիվէլում, որքան կամիք: Իսկ առ այժմ թողնենք այդ: Գրէյսը ցոյց կը տայ ձեզ ձեր սենեակը և ես յոյս ունեմ, որ ժամանակով մենք միմեանց հետ աւելի մօտ կը ծանօթանանք:

—Արտուր, սիրելի Արտուր. ինչ պէտք է անեմ, եթէ մայրդ չի սիրում ինձ, բացականչեց խեղճ Ջէրալդինան, երբ ամուսնու հետ միայնակ մնացին սենեակում:

—Համբերութիւն, հոգեակս: Նա իր կեանքում շատ վիշտ է ունեցել և հէնց նրանից է խստացել, բայց բնութեամբ բարի է: Ես չեմ կարծում, որ նա քեզ հետ միշտ այսպէս սառնասիրտ վարվի: Ես համոզված եմ, որ իմ հեզ ու համեստ Ջէրալդինան, որին ամեն տեղ և ամենքը սիրել են, կը կարողանայ այստեղ էլ իրան սիրել տալ:

—Ո՜հ Արտուր, քո խօսքերը այնչափ թանգ չեն եղել երբէք ինձ համար: Թող ամբողջ աշխարհը արհամարհի ինձ—մի և նոյն է ինձ համար, միայն թէ դու, միայն դու սիրես ինձ ու հաւատաս: Չէ՞ որ դու չես կարծում ինձ համար, այնպէս չէ՞:

—Ամբողջ աշխարհը քեզ կը յարգի, ասաց Արտուրը ժպտալով: Բայց, խնդրեմ, սրբիր քո գեղեցիկ կապոյտ աչքերը և բացի մեր սէրից ոչ մի բանի վրա մի մտածիր: Խնդրեմ, եղիր աւելի հանգիստ ու զգոյշ քեզ մօրս առաջ: Նա չէ կարողանում տանել սրտի զգացման ոչ մի արտայայտութիւն: Գիտացիր, որ նա մարդու մէջ ամեն բանից աւելի յարգում է հաստատ բնաւորութիւնը: Որքան էլ լաւ լինի մարդ, բայց եթէ մայրս յաղթող կը հանդիսանայ նրա վրա, անխղճաբար իր ոտքի տակ կը տրորի նրան, իսկ զօրեղ թշնամին—ընդհակառակն՝ կարող է գրաւել նրա համակրութիւնն ու յարգանքը: Եղիր ինքնավստահ. ցոյց տուր, որ դու ունես սեփհական կամք ու բնաւո-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M



ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

# ԴԱՒԱՓԱՀՈՒՏ ՏԱՍՆԱՀԱՐԻՑ ԴԱՒԱՓԱՀՈՒՏ

Ա

Ի ՄԱՀՈՒԱՆ ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐԻ

Fonds A.R.A.M



Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլի։ Ծիրանազարդ „Правит. Вѣстн.“ լրագիրը մի մասնաւոր յօդուածով կը քննադատէ 1883 թուի Մարտի 1-ի հրովարտակը, որ կը վերաբերի Ռուսիոյ հողագործական դասակարգին։ Ըստ այդ հրովարտակին՝ հողագործական դասակարգի անդամները, որոնք մինչեւ հիմա կը պատկանէին գիւղական ընկերութեանց, կրնան ազատիլ անկէ, եթէ ունին 12 տարուան անբասիր ծառայութիւն, կամ 15 տարի գիւղական ընկերութեան անդամ եղած են, կամ ալ 40 տարեկան են։ Ազատուելու համար պէտք է ունենան նաեւ անշարժ կալուածք, որ իրենց անունին գրուած է

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի. „Новое Время“ լրագիրը հաղորդում է. Նկատուածների հարկի նախագիծը ներկայացրած է պետական խորհրդին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ հարց է բարձրացրած Օդեսայում համալսարանի բժշկական բաժնի բացման մասին. Մակշէեվի դատաստանական գործի քննութիւնը վերջացրած է ապրիլի 17-ին կէս օրին. Դատաւորները օր և գիշեր և ապրիլի 18-ի առաւօտ խորհրդակցում էր. Դատավճիռը դեռ յայտնված չէ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլի. Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75½ կ., երկրորդ 94 ր. 75½ կ., երրորդ 91 ր., չորրորդ 90 ր. 75½ կ., հինգերորդ 90 ր. 75 կ., նեղքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 219 ր. 21 կ., երկրորդ 212 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 37 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 9 կ. Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,28 պէնս, Ամստերդամի վրա արժէ 123 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ. Բօրսայի արամադրութիւնը թոյլ է.

Խմբագիր—հրատարակող ԳԻՒՂՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.
3—50

**1,000** հատ երկաթեայ ԱՆԿՈՂԻՆՆԵՐ նոր են ստացվել և ծախվում են 10 րուբլուց մինչև 25 րուբլ հատը և նոյնպէս զոյգերի համար անկողիններ 20 րուբլուց ընկած

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ**

Նոյնտեղ վաճառուում են պաներ, մուրաբայի, կօնֆէկտների, դդեակների, վերարկուների, կրագների և 500 բէվօվկերների.
1—6

Ապրիլի 15-ից կենսօճական դրադարանում, որ գտնվում է Արծրունու գալերէի №№ 149 և 150 բացված է հայերէն գրքերի բաժանումը. Ամնական վճարը մի գրքի համար 30 կ., երկու գրքի համար 50 կ., իսկ երեք գրքի համար 80 կ.

Գրաւ պէտք է թողնեն 2, 3 կամ 5 րուբլ, նայած քանի գիրք է ստանում.

Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը.
1—10

# JOURNAL D'ORIENT

**HEBDOMADAIRE**

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)



**ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ.** Գօղվինակի պրօսպեկտի վրա, տան ճարտարապետ Բէլօի. Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից.



ЕВРОПЕЙСКІЙ АПРАШКИ ПАДЪ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Адресъ магазина: Головинскій проспектъ, домъ Мирманова, № 144 противъ Александровскаго сквера.

ПРОДАЖА ОПТОМЪ И ВЪ РОЗНИЦУ.



Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.



**ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ**

Ցանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԱՆԳԼԻԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից.

ՊԱՏՄԱՆՆԵՐԻ մասին դիմել „ՄՇԱԿ“ խմբագրութեանը.
6—10



ՄԻՋԻ փողոց, կաթոլիկեական փողոցի անկիւն № 13.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 *ապրիլի*։ *Պետական բանկի 5% առմամբ առաջին շրջանի արժէ 94 ր. 12 կ., երկրորդ 90 ր. 62½ կ., երրորդ 91 ր. 5 կ., չորրորդ 90 ր. 75½ կ., հինգերորդ 90 ր. 80 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմամբը արժէ 218 ր. 75½ կ., երկրորդ 212 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան առմամբը արժէ 90 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 6 կ. Ռուբլուց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 24,43 պէնս, ռուբլուց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 5 պֆ., փարիզի վրա արժէ 257 ֆրանկ 5 սանտիմ։ Բօրսայի արտադրութիւնը աճում է։*

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


*Նախկին ԽԱԼԻՊԵԱՆ ուսումնարանի աշակերտները պատիւ ունեն իմացնել, ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԻՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆԻ յիշատակը յարգողներին, չնորհ բերել կիրակի, ապրիլի 25-ին, առաւօտեան 11 ժամին, վանքի մայր եկեղեցին, ուր կատարվելու է նորա հոգեհանգիստը։*

3—3

ԴՈՒԲՈ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

*Էրնստ Հօֆմանի „ԹՈՒԼԹ ԽԱԼԱՅՈՂԻ ԲԱԼԴԸ“ վերնագրով դրքոյկի հայ թարգմանութիւնը թիֆլիսում ծախվում է „կենտրօնական“ և „կօվկասեան“ գրավաճառանոցում, իսկ Էրևանում „Բարեկամ մանկանց“ գրավաճ. պ. Սիմէօնեանցի մօտ։*

*Գինն է 25 կօպ.*

3—5

*Ապրիլի 15-ից կենտրօնական գրագրանում, որ գտնվում է Արծրունու գալերէի №№ 149 և 150 բացված է հայերէն դրքերի բաժանումը։ Ամեական վճարը մի դրքի համար 30 կ., երկու դրքի համար 50 կ., իսկ երեք դրքի համար 80 կ.։*

*Գրաւ պէտք է թողնեն 2, 3 կամ 5 րուբլի, նայած քանի դրք է առնում։*

*Գրագարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը։*

5—10

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

## ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

*Ցանկանում է գտնել տալ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ և ՖՐԱՆՍԵՐԵՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից։*

*Պայմանների մասին դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան։*

9—10

# JOURNAL D'ORIENT

## HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

ՎԻԼՆՆԱՅԻ ԱՓՈՒՆԵՐ

## 36 ԲՈՒԿԼ

եփ. Գաւառբեանցի դէպքում

19—20

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Адресъ конторы: Тифлисъ, № 144 противъ дачи г. Ахвердова.

Складъ фабрикатовъ лучшихъ заграничныхъ фабрикъ.

ՀԱՅԵԼԻՆԵՐԸ Ի ՇԱՏԱԿՆԵՐԸ։

27—60

*Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ ո ղ ի ճ է ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.*

*Ա ւ ե լ ի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են.* ՎԻԼՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, *ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՏՆԵՐ 8—30 ր., չամատաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., ս ու ն դ ու կ ն ե ր ձանապարհի 6—35 ր., մատաններ* (погребцы) *6—25 ր., ս ա մ օ վ ա ր ն ե ր 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, դեմանիայի երկաթէ էմալով ամաններ. ո ւ մ ի վ ա լ ն ի կ ն ե ր մ ր ա մ օ ր ն ի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլեի 6—32 ր., ռ է վ ո լ վ է ր ն ե ր ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէվօլվերի, սիգար ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլդի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼՑ (չայ) ՎԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ բուկվիա. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և Միխէլսոնի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պ ր օ ր կ ա յ դինէժաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլմուկ (пухъ), պաղեռաներ ամամարի և չայու, գանակ չանգալ գանագան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջերի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հասը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրեքօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիտանակի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջազացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրահմալ կատօրկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի յահով, թուղթ փչոտի, կանվերտաններ, սուրդուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոմ, քարեսախատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդակներ սեզանի և չայու ֆլտաժէ, վարշամի և բրիտանակի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չամիչկէք 45 կ.—5 ր., շամպանսներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Չոխա, պրոտաշկաններ վ ա ր շ ա վ ա ն, ԻՆԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանաց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չոխա, չապիկներ, մարդկերանց գուլուպիկներ, գեաթիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. ամանդրիր շիրմայու ոսկրէ, գուտապերչայի և փայտէ, շշտականներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարսէ համար. չուլքի թէկ* (бумага) *մատոկի կօճի և շալէ* (гарусъ) *ֆէլշտոկէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոյանաերեքների ապրանքներ, սապան ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կատր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ* ԿԻՎԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. *և այլն և այլն և այլն*

*Վ ա ճ ա ռ ա կ ա ն ո ն ե ր ի ն առանձին պայմաններով և դիջումով վերցիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապես գտնվում են* ՄԻՔԱՑԻԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ *պահեստում* (въ складѣ) *միջի փողոցում կամոլիկայ փողցի անկիւնում № 13.*

*Հասարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով.* Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

37—180

*Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ ո ղ ի ճ է ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.*

## ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՄՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. *դիժինը*, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. *հարիւրը*, *սապօն* 3 կ. *հատը*, *արևի* ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇԳԹԱՆԵՐ (*նոր ոճով*) *ժամացոյցի համար* 50 կ., *կրաններ* 10 կ., *ջրի ամաններ* 30 կ., *կժեր* 25 կ., *կախարանններ* 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾՀՂՆԵՐ 1 ր., *հայելիներ* 35 կ., *վարտիքներ* 4 ր., *պիջակներ* 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., *գլխարկներ* 1 ր., *ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ* 6 ր., *շշկաճա* 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 *հատը* 8 կ., *կանանց և տղամարդկանց* ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. *դիժինը*, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. *անգլիական ֆունտը*, *կանֆետներ* 40 կ. *ֆունտը*, ԴՐԱՓ, *տրիկօ*, ԱԼԲՈՄՆԵՐ, *բրիտանական մետալի առարկաներ և այլն* ԿԻՍԱԳՆՈՎ, *մոմեր*, *մոմրարա և այլն շատ էժան։*

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ։

22—50

## ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

*Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, տան Ձարտարապետ Բէլօխ։ Գրասենեակը բաց է տուաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։*

**1,000** *հատ երկաթեայ* ԱՆԿՈՂԻՆՆԵՐ *նոր են ստացվել և ծախվում են 10 րուբլուց մինչև 25 րուբլ հատը և նոյնպէս զոյգերի համար անկողիններ 20 րուբլուց բացած*

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

*Նոյնտեղ* ՎԱՃԱՌՈՒՄՆ *պանրի, մուրաբայի, կոնֆիկտների, գղեատների, վերարկուների, կրագների և 500 բէվօլվէրների։*

5—6

## ՄԱԼԶԱՄ

### „Բ Ա Բ Մ Ա Ն Ի“

*Արտաքին գործածութեան համար* ԽՕԼԵՐԻՆԱՑԻՒ ՈՍԿՐԱՑԱԻԻ, ԱՏԱՄՆԱՑԻՒ *դէմ և այլն, նեղքին գործերի միխտարեանեան բժշկական խորհուրդից թոյլատուած։ Գլխաւոր պահեստը ամբողջ կովկասի համար։*

ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, *որ առաջ պատկանում էր* Ա. ՆՈՒՐԻՆՕՎԻՆ *և ընկ., Թիֆլիսում։*

2—10 (*և. հ. շ.*)

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Апрѣля 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 71 Ապրիլի 27 (Մայիսի 9)

1882

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ապրիլի 27 (Մայիսի 9) № 71

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ծանուցագրերը գինում են ուղղակի
Տիֆլիսի Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Բայտարարութիւնների համար վճարում են
երեսպանչիր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդի աճելը Գերմանիայում։— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Ներքին լուրեր։ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Վիճնայի բանւորների ժողով։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ԺՈՂՈՎՐԴԻ ԱՃԵԼԸ ԳԵՐՄԱՆԻԱՑՈՒՄ

—

Զախեր-Մազոխի խմբագրութեամբ Լայպցիգում հրատարակվող «Auf der Höhe» նոր ամսագրի մէջ կարդում ենք մի շատ հետաքրքիր յօդուած գերմանական տարրի բազմանալու մասին, հեղինակութիւն Օաստ Զախարիասի «Պղտրենակութեան դէմի բազմանալը Գերմանիայում և նրա հետևանքները» վերնագրով։

Յօդուածը սկսվում է պատմական իրողութիւնից։ Երեսունամեայ պատերազմից վերջը գերմանական տարրը այնքան նուազեցաւ թիւով, որ այն ժամանակվայ ապրատէրները և գիտնականները իրանց ամբողջ հետաքրքրութիւնը գործ էին դնում զանազան միջոցներ առաջարկելու, գերմանացիների թիւը բազմացնելու համար։ Գիտնականներից մէկը հաստատում էր, որ Findelhäuser, այսինքն անհարազատ մանուկների համար որբանոց ներքոյ թիւ ձգատակար չեն, այլ մինչև անգամ օգտաւէտ են և որ ամեն մի այդ աւեսակ հիմնարկութեան մէջ տարվող կնոջ սկսք է տերութեան կողմից, իբրև պրեմիա մի տաս թալեր տուի։ Կային և բազմակնութեան պաշտպանողներ, միայն թէ գերմանացիները ամեն։

Երեւում է որ 16-որդ, 17-որդ և 18-որդ դարերի դիտնականները երբէք չէին մտածում որ ժողովրդի ամումը կարող է այն աստիճանի հասնել, որ երկիրը այլ ևս չի կարողանայ կերակրել այդ ժողովուրդը։ այդ դիտնականները հաւատացած էին որ տարածնակութեան ամելու հետ և դրա տարբերակի միջոցները կամեն։ Կային և այնպիսի ուսումնականներ, որոնք ասում էին թէ նախախնամութիւնը այնքան կամենում ժողովուրդը, ինչքան երկիրը կարող է իր մէջ մարդիկ տեղաւորել և կերակրել։

Այժմ մենք համոզվում ենք որ այդ եզրակացութիւնները կատարելապէս սխալ էին։ Գերմանացիները այն աստիճան բազմացել են, որ ամեն տարի հազարներ են գաղթում երկրագնտիս ամեն կողմեր։ Բայց գաղթականութիւնը, ասում է յօդուածագիրը, մեզ շատ քիչ կարող է օգնել, քանի որ ամեն տարի 550,000 ծնունդ է լինում։ Statistikից տեսնում ենք, որ 1816 թուին Գերմանիան ունէր 24 միլիօն, իսկ 1878 թուին արդէն 44 միլիօն ժողովուրդ, ուրեմն վաթսուն և երկու տարվայ ժամանակամիջոցում երկու և կէս անգամ աւելացել է երկրի տղաբնակութեան թիւը։ Յօդուածագրի կարծիքով այդ աճումը մեծ վտանգ է ըստ պատնում Գերմանիային, եթէ դրա առաջը չառնվի. նա նախատում է դիտնականներին և մանաւանդ որ այնքան քիչ ուշադրութիւն են դարձնում այս հարցի վրա։ Վատներ և շէֆլէ պրօֆեսօրները նոյնպէս զբաղված են այդ հարցով և անհրաժեշտութիւն են տեսնում գերմանիայի համար հոգ տանել իր հետզհետէ, պրօգրէսիայով, բազմացող ժողովրդի մասին։ Վատնէր գերմանացիներին համեմատում է իր համար այնքան սաստիկ հրէաների հետ, ասելով թէ ինչպէս հրէաները, նոյնպէս և գերմանացիները ամեն տեղ ցրվում ու տարածվում են,—Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ամերիկայում։ Դաղթականութիւնը մեզ օգնել չէ կարող, ասում է նա, գաղթում են, մեծ մասամբ, հասակ առած, առողջ և փոքր ի շատէ միջոց ունեցող մարդիկ, իսկ մեր վիճակում են երեխաներ, ծերեր և հիւանդոտներ, որոնք չեն արդիւնաբերում, բայց որոնց հարկաւոր է կերակրել և պահել։

Միակ ելք այդ դրութիւնից ազատվելու համար գերմանիայի թէ դիտնականների մեծ մասը և թէ մամուլը տեսնում են սեփական կօլօնիաներ ձեռք բերելու մէջ։ Գերմանիան, ասում են նրանք, պէտք է ունենայ աղատ, կամ սակաւ բնակեցրած տեղեր, որ կարողանայ իր ազգաբնակութեան մի մասը այն տեղերը գաղթեցնել։ Բայց Օաստ Զախարիաս յօդուածագիրը այդ բաւականացուցիչ չէ համարում. դրա կարծիքով ամողների թիւը իր հայրենիքում այնքան մեծ է, որ ոչ մի գաղթականութիւն այդ վտանգի առաջը չէ կարող առնել, մինչև որ ամուսնութեան պայմանները օրէնքով չը դժուարացնվին։

Ահա ինչ է առաջարկում նա. ամուսնացողների տարիքը պէտք է օրէնքով խստութեամբ որոշված լինի, ամուսնացող զոյգը քիչ թէ շատ նիւթապէս ապահովված լինի և առհասարակ մարդիկ պէտք է իրանց կապել դիտենան ու աշխատեն որ ծնվողների թիւը այդքան շատ չը լինի։ Կարճ ասենք, յօդուածագիրը Մալթուսի թէօրիայի մէջ է փրկութիւն տեսնում։

Յօդուածագրի առաջին մենք մեր կողմից հարկ ենք համարում աւելացնել, որ ժողովրդի ամումը գերմանական ցեղի արատ նութիւնը չէ միայն, թէպէտ և մի ցեղ գուցէ աւելի հակում ունի դէպի շատ ամելը, քան թէ մի այլ ցեղ։ Ամեն բարեկարգ պետութեան մէջ, ամեն մի երկրում, ուր կայ ապահովութիւն նիւթական և բարոյական, ուր կայ կանոնաւոր, օրինաւոր կառավարութիւն, ժողովուրդը թէով միշտ կամճի, կը բազմանայ։

Օրինակի համար Ամերիկայի Միացեալ Նահանգներում քան և հինգ տարվայ ընթացքում ժողովրդի թիւը կրկնապատկվեց։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Ապրիլի 21-ին

Վերջապէս այս ամսի սկզբի օրերից երկրաքաշ և սառնամանէի ձմեռը բաց թողեց մեր օձիքը։ Ապրիլի 5-ից դաղարեցան ցրտերը և դուարթ ու ջերմ արեը սկսեց իր վարուցանքը, բայց անմիթար պայմանների մէջ։ Հողի զրկի պակասութիւնը վճռասցնում է նրա աշխատասէր տիրին։ Մեռ գաւառում, այս վերջին տարիներում, գիւղից գիւղ ճանապարհորդողը, իսկոյն կը դիտէ, թէ որքան բազմացել և խթացել են այդ գիւղերը։ Այն ընտրեալ լանդամայրերը, որոնք տասից 15—20 տարիներ առաջ եղել են մեծ գիւղերի եալլաղներ, հիմայ դարձել են բուն մի մի մեծ գիւղեր։ Մարդաշատութիւնը շատ տարածութեամբ է առաջ ընթանում մեր շատակեր և բազմածնունդ Շերակում։ Կան գիւղեր, որոնք տասից 20—30 տարիներ առաջ բազկացած լինելով 30—40 տունից, հաշում են հիմայ իրանց մէջ 120—150 և մինչև 270 ծխեր։ Այսպիսի բազմանդամ գիւղերի չարքին են պատկանում Սիկիզլի, Դիզգիանդ և Հառամ գիւղերը։ Կան գիւղեր, որոնց գաղթականներից, վերջի 30 տարիների րնթացքում, հիմնվել են տասնեակ նոր գիւղեր։ Այսպիսի հին գիւղերի չարքին են Ղալաբաբլիասը, Ջաջուռ, Ղուլպի և ուրիշ գիւղեր։ Այս մարզաշատ գիւղերում զգացվում է հոգի մի այնպիսի գրաւի պակասութիւն, որ ցանքսի ժամանակ երիտասարդները աշխատում են խլել իրար ձեռքից արտերը. որանից յառաջանում է նրանց մէջ վէճ. վէճը շատ անգամ փոխադրվում է կռիւ և ջարդվում են մէջ տեղ քիթ ու բերաններ։ գլուխներ։ Այսպիսի հոգային վէճ առնեցողներ կարելի է ամեն օր տեսնել գարնան սկզբներին խափած տեղոյս պօլիցիական կառավարութեան դրան առաջ։ Հողի մի այսպիսի գրաւի պակասութիւնն է ասել, որ հարկադրում է մեր շատ գիւղերի երկրագործներին, այս վերջին տարիներում, անզգայօրէն ու դէն ընկած, որևիցե նոր տեղեր, գաղթելու այնտեղ և նոր գիւղեր հիմնելու։ Գաղթականութեան ձգտումը աւելի ևս աստիճանում է նրանց մէջ վերջին ռուս-տաճկական պատերազմից յետոյ։ Երբ տաճիկ երկրագործները ձրիգած ուսապ գինքով նուաճած Վարսայ նահանգի գիւղերը, սկսեցին գաղթել հետզհետէ դէպի Տաճկաստան, նրանց խոշոր բերքի և արգասաւոր հողերը մի այնպիսի հրապուրիչ պատկեր էր մեր հողազուրկ գիւղացոց համար, որ չէին կարող անտարբեր կերպով նայել այդ թափուր տեղերի վրա և չը ցանկալ՝ գաղթելու Ախալքալաքի դեսի արևմտեան կողմը ու հիմնել տաճկական գիւղերի տերութիւնների վրա նոր գիւղեր։ Բայց վիճակված չէր մեր երկրագործներին վար ու ցանք անել այդ տեղերի վրա։ Նրանց ներկայացրած հարիւրաւոր խնդրագրերը, բացի մի, երկու բաղդաւոր բացառութիւններից, միացին առանց հետևանքի։ Վերջին օրերում Կովկասեան կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովի մօտաւոր գալստեան լուրը գարձնալ ծագեցրեց յուսայ նոր նշոյլներ մեր երկրագործների սրտի մէջ։ Մատղութիւն ունեն գնալու գիւղերից գաղթել ցանկացող գիւղացիք խնդիրներ ներկայացնել իշխանին։ Արդէն հիմիկվանից կարելի է ենթադրել, որ այս խնդրանները պէտք է գիմնն, այդ մեր քաղաքը չուառով այցելութիւն գործող բարձրատեաիճան հիւրին, որպէս մի ազատարարի։

Մի քանի նոր անդիկութիւններ էլ քաղաքից։

Ամսոյս 5-ին քաղաքային կլուբի դահլիճում գաւառապետի պաշտօնակատար պ. Վ. Շահխաթունեանցի նախագահութեամբ կայացաւ խառն ժողով։ Այս ժողովի գրդիչ պատճառն էր, գլխաւորապէս, իշխան Դոնդուկով-Կորսակովի մեր քաղաքին այցելութիւն տալու մասին գրութիւնը։ Պ. նախագահը առաջարկեց հարցեր՝ ինչպէս ընդունել, ուր ընդունել և որպէս հիւրասիրել իշխանին։ Ժողովը բաւարար որոշում առաջ այդ հարցերին։ Որոշից յետոյ պ. նախագահի առաջարկութեամբ ընտրվեցաւ մի մասնաժողով, բաղկացած ութ անձնիցներից՝ որոնց պարտաւորութիւնը պէտք է լինի մեր քաղաքի անհրաժեշտ կարիքների մասին իշխանատուին լինել նորին պայծառափայլութիւնը։ Այս մի և նոյն ժողովում պ. նախագահը առաջարկեց և մի քաղաքային պարտէզ անելու հարցը, բացատրելով մի այդպիսի հասարակաց զբօսարան ունենալու կարեւորութիւնը և առաջարկեց այնտեղ գանվոցներին նուիրատու լինել պարտէզի չինութեան գործին։ Ներկաների անձնատուրութիւնները առաջարկեցին նուիրատուութեան թերթիկ։ Այդ պարտէզի սկզբնական աշխատութիւնը արդէն սկսված է և նուիրատուութիւնը շարունակվում է։

Մօտ օրերս եկաւ այստեղ երեսնի թիմի զաղային գպրոցների վերատեսչ պ. Պերճ Պռոշեանց և 18-ին հոգևոր ատ. դանիէլեան «պատգամաւորաց ընտրութեան» վերջին ժողովը։ Ըստ որում անցեալ թուականի դեկտեմբերի 20-ին կայացած ժողովը, որպէս հաղորդած եմ արդէն «Մշակի» ընթերցողներին, անվաստ համարեց հոգ. կառավարութիւնը իր անկանոնութեան պատճառով։ Նախագահում էր ժողովին պ. Պռոշեանց ազգակցութեամբ տեղական յայտարդի։ Այս ժողովը համեմատելով անցեալ ժողովի հետ, շատ կանոնաւոր անցաւ։ Այստեղ ոչ ադմուկ կար և ոչ աղաղակ։ Ո՛չ խռովարարներ կային այստեղ և ոչ ժողովի կարգաւորութիւնը խանգարողներ, որպէս անցեալ ժողովում։

Տեղացի

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամեն տարի «Մշակի» բաժանորդների վրա ապառիկներ են մնում։ Տես. 1880 և 1881 թուերից մեր բաժանորդների վրա մնացին ապառիկներ 1020 րուբլ դումարի։ Այս անգամ կը յայտնենք թէ ինչ դումարի ապառիկներ մնացին 1880 թուից, իւրաքանչիւր քաղաքում։ Թիֆլիս քաղաքում մնացին ապառիկներ 58 րուբլ դումարի, Ախալցխա 30 ր., Ալէքսանդրապօլ 51 ր., Ասորեստան 10 ր., Ադդաշ 4 ր., Բագու 14 ր., Նոր-Բայազէտ 10 ր., Գանձակ 10 ր., Նիկոտերիոզար 10 ր., Իգդիր 10 ր., Կարս 10 ր., Երևան 100 ր., Շուշի 14 ր., Կազման 5 ր., Մօսկվա 10 ր. Նոր-Նախիջևան 70 ր.։ Ընդամենը 1880 թուից մնացին ապառիկներ 406 րուբլ։ Եթէ 1880 թուից մնաց պարտ մնացած պարտքերը չեն վճարվի մեզ իրանց պարտքը մինչև այս տարվայ յուլիսի 1-ը, մենք կը հրատարակենք նրանց անունները։ Հետևեալ համարներում կը յայտնենք թէ 1881 թուին ինչքան պարտ մնացին մեզ իւրաքանչիւր քաղաքում և վերջը, եթէ չեն վճարի, նոյնպէս կը տպագրենք նրանց անունները ու տգգանունները ամօթոջութեամբ և պիտութիւն հայոց հասարակութեան, որպէս դի տեսնեն թէ ովքեր են այն անձինք, որոնք վայելում են մի հայոց լրագրի ընթերցանութիւնը առանց վոճ վճարելու, գիտենալով, մանաւանդ, որ խմբագիրը իւրաքանչիւր տարի իր գրպանից է ծախում լրագրի ծախսի դիմաց։

—

Վանից ստացած մանաւանդ նամակից քաղում ենք հետևեալը։ «Կը պատմեմ ձեզ մի հարստահարութեան մասին, որ վերաբերվում է ոչ թիւրքերին, ոչ էլ քրդերին, այլ Լիմ անապատի վանահայր, հուշակաւոր Պօղոս վարդապետին, որ եպիսկոպոս ձեռնադրվելու ծախսի համար Լիմ անապատի թիմի գիւղերի ամեն մնից 1—3 ոսկի բռնութեամբ տուլք է հաւաքել։ Այդ այն գիւղացիներն են, որոնք անցեալ տարի սովից կատարվում էին և վանքը նրանց մի հատիկ ցորեն անգամ փոխ չէր տալիս. և ահա այդ ամեն կողմից վտանգված գիւղացիների վրա մի վարդապետ աւելացնում է մի հարստահարութիւն էլ իր կողմից, որովհետև նա եպիսկոպոս է ցանկանում դառնալ։ Հայ գիւղացին ենթարկվում է հարստահարութեան պաշտօնեաների կողմից, քիւրդ աւազակների կողմից, գուցէ աւելի էլ խիստ կերպով հայ անխիղճ վաշխառուների կողմից, վերջապէս դրանից էլ աւելի խիստ՝ հայ հոգևորականներից։ Ամեն վանքը պահանջում է գիւղացուց որ իրան ընծայի ամեն տարի ցորեն, իւղ, պա-

Fonds A.R.A.M

նիր, մատաղացու և տայ անվարձ բանւորներ, որոնց պարտաւորութիւն է վարել, ցանել, քաղել վանքի հողերը: Իսկ վանքը դրա փոխարէն ինչ է հատուցանում ժողովրդին. ուսումնարան չէ շինում, նա ուսումնարանի թշնամի է, քանի որ ուսումնարանը պիտի մի օր ամբոխի աչքերը բաց անի և ազատի նրան վանականների ստրկութենից. —ուրեմն ինչ է անում վանքը. նա ժողովրդի հոգու փրկութեան համար է աղօթում»

—

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են «Այս տարի Շիրակում չը տեսնուած փոփոխական եղանակներ են լինում: Ապրիլի 12-ին և 13-ին կրկին թանձր ձիւն եկաւ և ծածկեց ամբողջ դաշտերը: Գիւղացիները մեծ դժուարութիւններ են կրում անասուններին կերակրելու. անասունների մեծ մասի ձմեռվայ պաշարը արդէն սպառվել է, որովհետև ահա հօթ ամիս է, որ կենդանիները կապված մնում են փակած ախոռաններում և ինչպէս երևում է դեռ մի ամիս հարկաւոր է յարդով և խոտով կերակրել նրանց, քանի որ դաշտերում դեռ ևս կանաչ խոտի նշոյլներ չեն երևում:»

—

Մեզ հաղորդում են որ ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ դիտաւորութիւն կայ հրատարակել մի ամսագիր վրացերէն լեզուով: Այդ ամսագրի խմբագրութիւնը գրեթէ ամբողջապէս կազմված կը լինի տիկիններից և օրիորդներից:

—

Մեզ պատմում են հետևեալը: «Մի հայ վարդապետ փոքր-Ասիայից եկած, նստում է նորերումս փօթիում երկաթուղու մի վագօնի մէջ, Թիֆլիս ուղևորվելու համար: Երկաթուղու կանոնները չը գիտենալով, վարդապետը վերցնում է միայն երկու-տոմսակ, չը նայելով որ իր հետ երկու մանուկներ ունի, որոնց դիտաւորութիւն ունի Թիֆլիսի կամ Էջմիածնի մի դպրոց յանձնել: Երկու թէ երեք կայարանները անցած, գնացքի կօնդուկտորը, մտնելով վագօն, փոխանակ քաղաքավարութեամբ նկատել վարդապետին որ երկու երեխաների համար մի տոմսակ բաւական չէ, բռնում է մանուկների մէկի ձեռքից և բռնութեամբ կամենում է դուրս տանել նրան վագօնից: Ճանապարհորդ վարդապետը ռուսերէն չիմանալով առաջարկում է իր քսակը կօնդուկտորին, որպէս զի սա վերցնի այնքան փող, որքան հարկաւոր է երրորդ տոմսակի համար: Բայց կօնդուկտորը վերցնում է քսակը և այլ ևս չէ վերադարձնում վարդապետին: Վարդապետի բոլոր բողոքներին այդ ծառայողը պատասխանում է թէ ոչինչ փող ստացած չէ նրանից: Վարդապետը ստիպված է լինում նորից երեք տոմսակ վերցնել և կրկնակի վճարել իր ճանապարհորդութեան վարձը:»

—

Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը պարտք է համարում ներկայացնել հայ հասարակութեան Արծրունու թատրոնում ապրիլի 13-ին, յօգուտ սոյն ընկերութեան տուած ներկայացման հաշիւը: Վարչութիւնս ծախած տոմսակներից մուտք ունեցաւ 871 ր. 80 կ.: Այս հաշւում 167 ր. ստացած է տոմսակների համար նշանակած գներից աւելի, հետևեալ անձինքներից՝ պ. Շենինցից 20 ր., պ. Մանթաշեանից 15 ր., տ. Թամամշեանից 15 ր., տ. Խալաթեանից 15 ր., պ. պ. Յ. և Ն. Միրզայեաններից 13 ր., պ. Արգ. Յովհաննիսեանից 10 ր., պ. Չիթախեանից 10 ր., պ. Մ. Թուլաղեանից 6 ր., պ. Զ. Սուլխանեանից 1 տոմսակի համար 1 ր., Տ. Ս. Նուրինեանից 2 տոմսակի համար 2 ր., պ. Ն. Նստուրեանից 6 ր., պ. Ս. Իզմիրեանից 5 ր., պ. Գ. Աթաբէկեանից 5 ր., պ. Նովլանեաններից 5 ր., պ. Ամիրաղեանից 5 ր., պ. Փալավանդովից 5 ր., պ. Աքիմեանից 5 ր., պ. Մ. Թամամշեանից 5 ր., պ. Գ. Հախվերդեանից 4 ր., պ. Մ. Շահ-Պարոնեանից 3 ր., իշխ. Ա. Բէհբութեանից 3 ր., պ. Մելիք-Ղարագեօզեանից 3 ր., իշխ. Արղութեանից 3 տոմսակի համար մի մի ր. 3 ր., պ. Էլխիրզեանից 2 ր., պ. Նասյեանից 1 ր., ընդ. 167 ր.: Ծախս եղած է թատրոնի լուսաւորութեան և ծառաների 40 ր., երաժշտի 26 ր.. աֆիշաներ կպցնելու 3 ր., տոմսակների և աֆիշաների տպագրելու 10 ր., վարսավիրին տրված է 10 ր., պիէսայի և դերերի արտագրելու համար 18 ր. 60 կ., թատրոնի ծառաներին ընծայ 10 ր., մանր ծախս 14 ր. 40 կ., գումար 152 ր.: Այս ծախսի մէջ չէ մտած թատրոնի վարձը, որ մեծ. պ. Գ. Արծրունին չը կամեցաւ ընդունել: Ներկայացման օրից առաջ վարչութիւնս ստացաւ նամակ իշխան Նապոլէօն Ամատունուց, որով խնդրում էր վարչութեան թոյլտւութիւնը թատրօնին վերաբերեալ բոլոր ծախսերը վճարել իր սեփականութիւնից և վարչութիւնս շնորհակալութեամբ ընդունելով իշխանի առաջարկութիւնը զլացաւ ծախսից թատրօնին վերաբերեալ 89 ր. ծախսը ներկայացրեց նրան: Ուրեմն ընկերութեան վրա ծախսը մնաց միայն 63 ր., որ ընդհանուր մուտքից հանած յօգուտ ընկերութեան ներկայացմանից զուտ արդիւնք մնաց 807 ր. 80 կ.: Ներկայացնելով սոյն հաշիւը ի գիտութիւն հայ հասարակութեան, վարչութիւնս պարտք է համարում յայտնել շնորհակալութիւն Գ. Արծրունուն, իշխ. Ն. Ամատունուն, մեծ. Գ. Սունդուկեանին, որ թոյլ տալով ներկայացնելու իր «Քանդած օջախ» պիէսան, անձամբ ներկայ էր գտնվում կրկնողութեանց և ցոյց էր տալիս թատերասէրներին դերերի կատարելու եղանակը. մեծ. պ. Գ. Չմշկեանին, որ րէժիսօրի պաշտօնը ստանձնելով ղեկավարում էր թէ կրկնողութեանց և թէ ներկայացման օրը թատերասէրներին: Մեծ. պ. Յ. Տէր-Մարկոսեանին, որ յուշարարի ծանր պաշտօնը սիրով յանձն առաւ կատարելու, անդամ «Մեղու Հայաստանի», «Մշակ» և «Արձագանք» մեծ. խմբագիրներին, որոնք ներկայացման մասին յայտարարութիւններ ձրի տպագրեցին իրանց լրագիրների մէջ: Նաև բոլոր մասնակցող թատերասէրներին և հասարակութեան այն անձանց, որոնք տոմսակների համար նշանակած գներից աւելի վճարեցին:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՎԻԵՆՆԱՅԻ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Հրէաների դէմ ուղղված հակասեմիտական շարժումը Գերմանիայից Աւստրիա անցաւ, գրում է „Русск. Вѣд." լրագիրը: Ինչպէս յայտնի է, այդ շարժման առաջնորդը Գերմանիայի մէջ պաստոր Շտեօկերն է և պաշտպանվում է պահպանողական կուսակցութենից, որի գլխաւոր լրագիրներից մէկը նորերումս դարձեալ արշաւանք սկսեց հրէաների դէմ և քրիստոնեայ սօցիալիստների կուսակցութենից: Թէ պահպանողականները և թէ քրիստոնեայ սօցիալիստները ողբում էին „Հրէական ազատամիտ ինտելիգենցիայի" ուժեղանալը Գերմանիայի մէջ: Երկու կուսակցութիւններն էլ միատեսակ ցաւում էին հրէաներից հարստահարված բանւոր դասի դրութեան մասին: Բայց Գերմանիայի մեծ քաղաքների բանւորները խուլ մնացին դէպի հակասեմիտական շարժման առաջնորդների ճարտարախօսութիւնները և ռայխստագի անդամների ընտրութեան ժամանակ ինքը Շտեօկէր յաղթվեցաւ Բերլինի ազատամիտ ընտրողական շրջաններից մէկի քուէարկութեան ժամանակ: Բերլինի բանւորները շատ լաւ հասկանում էին, թէ որքան կեղծ են հակասեմիտների բոլոր առնմարդութիւնները հրէական հարստահարութիւնների վերաբերութեամբ. Նրանք չը կամեցան փչացնել իրանց գործը, որին պատկանում է ապագան, դաշնակցելով մի կուսակցութեան հետ, որի աշխարհահայեցողութեան հիմքը ազգային կամ կրօնական խտրութիւնն է կազմում:

Ինչպէս գերմանական, նոյնպէս և աւստրիական բանւորների շրջանում հակասեմիտական շարժումը անաջողութեան հանդիպեց: Հակասեմիտները մի քանի փորձեր արին Վիեննայի բանւորներին հակասեմիտական շարժմանը մասնակից անելու համար, բայց այդ փորձերը ոչինչ աջողութիւն չունեցան: Նորերումս Վիեննայի մէջ բանւորների մի քանի ժողովներ կայացան, որոնց ժամանակ ձայների ահագին մեծամասնութեամբ հակասեմիտական շարժման հակառակ վճիռներ կայացան: Ուշադրութեան արժանի են այդ ժողովների ժամանակ մի քանի բանւորներից արտասանած ճառերը: Օրինակ, բանւոր Ֆիւրեր ասեց հետևեալը:

„Հրէաների մէջ շատ բանւորներ և արհեստաւորներ կան, որոնց դրութիւնը մեր, քրիստոնեայ բանւորների, դրութենից լաւ չէ, և բացի այդ բանւորների կուսակցութեան մէջ շատ հրէաներ կան, որոնք ժողովրդական շահերի ջերմ պաշտպաններ են: Հակասեմիտները կամենում են մեզ „խաւար ամբոխին", իրանց գործիք դարձնել: Բայց մենք, Վիեննայի բանւորները, փառք Աստուծոյ, կրթութեան կողմից այնքան հեռու ենք գնացել, որ մեզ անկարելի է մոլորեցնել: Ռուսաստանի մէջ, ուր բանւորները և առհասարակ ամբոխը, յայտնի հանգամանքների շնորհիւ, զարգացման ստոր աստիճանի վրա են գտնվում, հակասեմիտական խաբեբաները կարողացան խաբել բանւորներին և գայրացնել նրանց հրէաների դէմ: Բայց մեզ մօտ այդ գործը չի աջողվի: Ես փաստեր գիտեմ, որ մի քանի հակասեմիտներ (ինչպէս Շէօներեր, Ֆարնկրանց և Շօֆել) փորձեր են բաժանել բանւորներին իրանց կուսակիցներ դարձնելու համար. մի՞թէ դա նախատինք չէ: Աթէ այդ գործիչները մեզ ճշմարիտ բարեկամներ են ցանկանում, ուրեմն ինչի պարլամենտում չեն ներկայացնում օրինագծեր մեր վիճակը թեթևացնելու համար: Ինչի չեն աշխատում, որ աշխատանքի ժամերը կրճատվեն, երեխաների աշխատանքը սահմանափակվի, աշխատանքի վարձը մեծացնվի և այլն:"

Մի ուրիշ բանւոր հետևեալ ատենաբանութիւնն արեց.

«Ցայտնի հակասեմիտական խումբապետները աշխատում են ամենքին համոզել, որ մենք բանւորներս հակասեմիտների հետևակ զօրքերն ենք: Մարդկային իրաւունքների հաւասարութիւնը պաշտպանող բանւորները, երբէք չեն համակրի այն կեղծ քրիստոնեաներին, որոնք քրիստոնէական կեղծ սիրով քօղարկված ցեղական և կրօնական խտրութիւն և անհամբերողութիւն են քարոզում: Հակասեմիտական շարժումը մեր դարի նախատինքն է կազմում: Գերմանիայի բանւորների կուսակցութիւնը, նոյնպէս և ուրիշ բանւորները շատ անգամ նախատել են այնպիսի կեղծ ժողովրդասէրներին, ինչպէս Շտեօկեր, Խատցքի և այլն: Ճշմարիտ է, մեր դրութիւնը չափազանց ցաւալի է, բայց այդ դրութիւնը աւելի կը վատթարանայ, երբ մեզ հետ միասին մի երկրի մէջ ապրող ամբողջ մի ազգից կը խլվեն քաղաքական սրբազան իրաւունքները, որոնցից ամեն մարդ միատեսակ օգուտ պէտք է քաղէ:"

Բանւոր Բարտ ասեց. «Հակահրէական շարժումը տեղի ունեցաւ այն պատճառով, որ հրէաները ճշմարիտ յաղթեցին քրիստոնեաներին: Բայց հրէաները հարիւրաւոր տարիների ընթացքում ստրկութեան շղթաներով կապված են եղել և այդ ժամանակի մէջ նրանք ստացան համբերատարութեան և միութեան ոգի, որով նրանք մեզանից գերազանցում են: Երբ ազատութեան արշալոյսը ծագեց, հրէաները ճշմարիտ սկսեցին հարստահարել բանւորներին: Բայց մենք բանւորներս պէտք է չը մոռանանք, որ մեզ հարստահարում են ոչ թէ հրէաները, ոչ թէ առանձին անձնաւորութիւնները, այլ անտեսական տիրապետող ձևը և որ մեր, բանւորներիս, շարժումը ուղղված է դրամագլխի դէմ:"

Այնուհետև ճառախօսը առաջարկեց հետևեալ վճիռը: „Ապրիլի 16-ի ժողովրդական ժողովը բանւորների կուսակցութեան նախագծի համեմատ յայտնում է, որ նա ոչինչ ընդհանուր բան, ոչինչ համերաշխութիւն չունի հակահրէական շարժման հետ: Ժողովը համոզված է, որ բանւորները միայն մէկ թշնամի ունեն, դա դրամագլուխն է և որովհետև նա ոչ ազգութիւն և ոչ կրօն է ճանաչում, ուստի բանւորներն էլ չեն կարող մաքառել ոչ ազգութեան և ոչ կրօնի դէմ:"

Բանւոր Կրեչմայեր նկատեց, որ հակասեմիտները ընդունակ են խելագարների տան ներկայացուցիչ լինելու համար և ոչ թէ բանւոր կուսակցութեան շահերի: Բանւոր Մայեր զարմանք է յայտնում, որ ժողովին ներկայ եղող հակասեմիտները չեն կամենում բացատրել իրանց նախագծերը և մտքերը: Դրանով նրանք ցոյց են տալիս իրանց երկչոտութիւնը և մտաւոր անընդունակութիւնը:

Բանւոր Էլինգեր ասեց. «Ես չափազանց զարմանում եմ այն խրոխտութեան վրա որ Շէօներեր մարտի 13-ին մեծ ծաղկեփնջերով ծածկում էր 1848 թուականի հերոսների գերեզմանները, որոնց թւում կային բազմաթիւ հրէաներ, մի քանի ժամանակից յետոյ հակահրէական ժողով կայացրեց և առաջարկեց ամբողջ մի ժողովրդից խլել նրա մարդկային իրաւունքները:

Հակասեմիտների կրած անաջողութիւնը Վիեննայի բանւորների շրջանի մէջ ուշադրութեան արժանի է: Դա ապացուցանում է, որ ի զուր անցան աշխատանքները աւստրիական բանւորների շարժմանը կրօնական կամ ցեղական բնաւորութիւն տալու համար: Առհասարակ պէտք է նկատել, որ աւստրիական բազմազգային պետութեան բանւոր ազգաբնակութիւնը իրան հեռու է պահում այն հակածանքներից, որին Աւստրիայի միջին և բարձր դասերը շատ անգամ ենթարկւում են այս կամ այն ազգութեան: Ինչպէս գերմանացի բանւորները Վիեննայի մէջ, նոյնպէս և չեխ բանւորները Պրագայում բողոքեցին ցեղական և ազգային թշնամութիւն ծագեցնելու դէմ: Աւստրիայի բանւորները բոլորովին գիտակցութիւն չունեն աշխատել քահանաների և քրիստոնեայ ազնիւ գործարանատէրերի համար և ծառայել նրանց շահերին իբրև կոյր գործիքներ: Վիեննայի բանւորների ժողովի մէջ ձևակերպվեցաւ բանւոր կուսակցութեան նախագիծը հետևեալ կերպով. բանւորները պահանջում են ընդհանուր քուէարկութեան օրէնքի մտցնելը և քուէարկութեան իրաւունքի տալը 20 տարեկան հասակից, պահանջում են եկեղեցու և պետութեան բաժանումը, ձրի պարտադիր և աշխարհական ժողովրդական կրթութիւն, կանանց աշխատանքի փոքրացնելը և երեխաների աշխատանքի արգելելը, աշխատանքի ժամերի փոքրացնելը, վերահսկող տեսուչների նշանակելը, ժողովների և ընկերութիւնների կատարեալ ազատութիւնը: Ժողովի անդամների կարծիքով, քաղաքական իրաւունքների ստանալուց յետոյ միայն բանւորները կը կարողանան իրագործել իրանց ցանկացած սօցիալական վերանորոգութիւնները:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ աւստրիական բանւորների կուսակցութիւնը այնպիսի նախագիծ ունի, որ սօցիալական վերանորոգութիւնները չէ զանազանում քաղաքականներից: Բայց այդ եկեղեցու և պետութեան բաժանման և աշխարհական ձրի կրթութեան պահանջը ապացուցանում է, որ բանւոր դասը թշնամաբար է վերաբերվում յայտնի կամ գաղտնի կղերական վարդապետութեանը: Աւստրիական բանւորները բոլորովին չեն հաւանում այն իդէալը, որ նկարագրում են գերմանական բանւորներին պահպանողականները և քրիստոնեայ սօցիալիստները, իսկ ֆրանսիական բանւորներին կղերականները, և որի նպատակն է վերա-

Fonds A.R.A.M

դառնալ միջնադարեան պետական կարգերին։ Մի և նոյն ժամանակ բանւորները ընդունակ են ճանաչել այն մարդկերանց, որոնք, բանւորների բարեկամ ձեւանալով, կամենում են պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ։ Հասկանալի է ուրեմն, որ աւստրիական բանւորների մօտ հակաեւրէական շարժումը կատարեալ անաջողութեան հանդիպեցաւ։

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՑԻՑ

—

Կ. Պօլիս, 17 ապրիլի

Ապրիլ 13-ի նամակով հաղորդած էի բարեկարգութեանց Մասնաժողովոյ մը ընտրութեան լուրը։ Ֆրանսերէն «Ափամպուլ» թերթը, որոյ լուրերն ընդհանրապէս աղէկ աղբիւրներէ առնուած են, նոյն բառական տեղեկութիւններ տուաւ այս մասնաժողովոյ վրայ։ Այս տեղեկութիւններն համաձայն են առաջի նամակով գրածներուս, ուստի աւելորդ է թարգմանել։ Մասնաժողովոյ անդամք երբ պատրաստեն բարենորոգմանց ծրագիրը պիտի երթան զաւառները անձամբ ի գործ դնել զայն։ Նախագահը Մուխթար բաշա Պօլիս պիտի կենայ և անկէ պիտի հսկէ։ «Ձերիաէ» կըսէ թէ անդամներէն ոմն, Սախո բաշա, քիւրդ է. հայ չը կայ։ Պաշտօնեաներէն ոչ ոք անդամ է։

Դեռ յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլայ Թիւրքաց Հայաստանի համար. պիտի ծալեն մէկդի դներն Պերլինի դաշնագիրը. ընդհանուր բարեկարգութիւն բառածէն կրնայ իրական բարիք մը ըլլալ հայոց. խնդիրներ որոց պատասխանելու համար փոքր ինչ տագնապու է։

Երբ բարեկարգութեանց հարցը յանկարծ այսպէս հրապարակ կելլէ, ով է որ հայ աղջին կոչէն պիտի խօսի. ով է որ Թիւրքաց Հայաստանի չարիքը պիտի պաշտպանէ։ Պատրիարք չունինք և ունենալիք ալ չունինք կերևի թէ։ Միթէ Ազգ. վարչութիւնն է որ պիտի կարենայ արիւքար պաշտպանել Թիւրքաց Հայաստանի չարիքը։ Բայց այս կարելի չէ քանի որ Ազգ. վարչութեան անդամները Բ. Դրան պաշտօնեաներ են, հետաւորապէս որ բարի տրամադրութիւններ ունին։ Երբ մեր ընկերութիւններէն մին, Խրմանու ուսումնասիրաց ընկերութիւնը, կառավարութեան կողմէ կասկածանաց ենթակայ եղաւ, չը տեսանք մենք ազգին կրթական ցնօրէնը տարտամօտար չուարած, անկարող պաշտպանել այդ ընկերութիւնը իսկ։ Նա գիտէր թէ ընկերութիւնը անմեղ է և ինքն իր տարագրութեամբը վաւերացուցած էր, բայց Մամիկոնենաց չաւասիրը փոքթաց աճապարից իր մորթը մաածել և տուած տարագրութիւնը ետ առնուլ։—Այժմ ձեռքերնիս ծալած պիտի նայինք. ցաւալի վիճակի մէջ ենք. մեր հայրերուն պէս բանք «Աստուած ողորմի մեզի»։

Պատրիարքի հրաժարականի հարցը երթալով մութ գոյն մը կառնէ։ Հինգշաբթի օրը նոքին դուռ տարուեցան Ազգ. ժողովոյ պիւտճներ ու առենապետները և որոշեցին սպասել մինչև մայիս և այն ատեն ժողովոյ օրինական բացումը կատարել։ Ամիս մը վաստկած վարչութեան համար, ամիս մը կորսուած ազգին համար, և ինչ ամիս։ Ո՞վ գիտէ այս մէկ ամսի մէջ ինչեր պիտի դառնան։

Գուցէ ոմանք չը գիտնան թէ ինչ է այս «Ազգային ժողովոյ պիւտճներու առենապետներու ժողով» բառած մարմինը որ այսօր կենսական դեր մը կը կատարէ, որուն էն անդամները։ Եթէ չէք ձանձրանար համառօտ մը պատմենք։

Ազգ. ժողովը ամէն տարի մայիսի նոտին մէջ կընտրէ մայր-դիւանէն զատ ութը մասնաժողովներ, երկրական անձերէ, որոց դիւան անուանը կառանձ։ Ազգ. ժողովը ինչ խնդիրներ որ ունենայ որոց վրայ չուտով չը պիտի վճռապանի, զանոնք այս պիւտճներէն մէկուն կը յանձնէ որ ուսումնասիրեն և տեղեկագիրը բերեն ժողովին։ Այսպէսով գործերը չուտով կը քալեն, կամ լաւ ևս պիտի քալէին։ Իրաքանչիւր դիւան իր մէջէն կընտրէ իր Առենապետը։ Այս ութը առենապետները միանալով մայր-դիւանի առենապետին հետ կը կազմեն առենապետաց ժողովը և ունեն խել մը իրաւունքներ։—Այսօր ազգին այս տարտամ վիճակին մէջ այս մարմինը ազգին ամենէն բարձր հեղինակութիւնը կը սեպուի։ Եթէ նա ուզէր իրաց վիճակը չուտով փոխուած կըլլար. Ազգ. ժողովը դուռ տրուած կըլլար և հրաժարականի հարցը մեզ չանաւոր կերպով վերջացած կըլլար։ Այս տարօն առենապետները հետևեալ պարոններն են, որոց վրայ փոքր ինչ տեղեկութիւն հարկ է որ ունենաք որպէս զի գիտնաք թէ ինչպէս կարելի եղած է գեւ ժողով չը դուռ տրել, ընդհանուր փափագներուն հակառակ։

Պ. Յարութիւն Մերիէմ-Գուլի։ Ազգային ժողովոյ ընդհանուր Առենապետը։ Ճարտար անձ. վարչութեան աչակից։ Մրցանակի արժանի է ան որ կարենայ ըսել թէ նորա միտքը կրցած է հասկնալ։ Կըսեն թէ ժողովոյ դուռ տրուելը յապաղել առաջ ամենէն աւելի ինքն է։ Եթէ այս բանտյգ է, ըսել է որ պ. Մերիէմ-Գուլի այս յապաղումը ազգին օգտակար գտած է որ այսպէս կընէ։ Պ. Մերիէմ-Գուլի մի այնպիսի անձ է որ իր բուն համոզմանը համեմատ կը գործէ։

Ռուսճուգլեան Գէորգ վարդապետ։ —Պատրիարքական փոխանորդ։ Հիմա Սզգ. վարչութեան մէջ պատրիարքը կը ներկայացնէ. առաջագ պատրիարքութ մը։ Թրքաց հետ վարուելու կերպը գիտէ կրսեն. վարպետ մարդու համբաւ ունի։—Իմ մասին քիչ չատ կասկածանօք նայած եմ այն անձանց վրայ որ չատ խնամարտ կը ցըցնեն ինքզինքնին և աւելի չեն փափաքիր ըսելու «Ես տղուս և մեղաւոր»—վարչութեան մասնակից է, իրաց ներկայ վիճակին երկար տևելուն կողմնակից։ Եթէ փոքր ինչ ունկնդիր ըլլար դուրս ըսուածներուն, պիտի համոզուէր թէ ինչպէս ազգին օգտակար է, նոյն իրենց պատասխն, որ այս վիճակը ալ չը չարունակէ։

Պ. Յարութիւն Նորատունկեան։ (Չեղ այլևայլողը չէ։) Մնծատուն։ Աւանդապահ այն յանձնաժողովին որ այնքան միամիտ եղաւ Մկրտիչ չվաճողիկոսին առջև։ Ջերմ բարեկամ վարչութեան, հետևաբար ժողով գումարել չուզող, առանց անձնական նկատմանց։

Պ. Փրիստոսատուր Ղազարոսեան։ Ելեխատուր անձ. ճերմակ մօրուքով կարմիր արմատական։ Եթէ ամէն օր Ազգ. ժողովը գումարվէր, դարձեալ քիչ կը գտնէր, բայց այս միջոցիս սուտ չը պիտեմ եղեր է։

Պ. Կարապետ Իւթիւճեան։ «Մասիսի» խմբագրապետ տէրը (!)։— Օրուան տէրը Ազգ. վարչութիւնն է, ինչ հարկ դէշ երթալ հեղը։

Պ. Առաքել Ալթունեան։ Պատուական անձ. անկեղծօրէն ազգը սիրող։ Միայն չը գիտէր թէ մարդիկ չար ալ կրնան ըլլալ և հարկ է խակարդէ զգուշանալ։

Պ. Գաբրիէլ Յովակիմեան։ Սակաւոց չանձնաժողովի անդամ. չիմ ճանաչեր անձամբ, լաւ մարդ է կըսեն. պատրիարքի բարեկամներէն կը սեպուի։

Պ. Արշակ Յակոբոս։ Հին եանդոմներէն. սանմիթացի։ Ինքզինքը պատրիարքի բարեկամը կը յայտարարէ. սուտ խօսելու պէտք մը չունի։

Պ. Ռէթէոս Պէրպէրեան։ Հանուր։ Ջերմ պատրիարքեան։ Եթէ կարելի ըլլար պատրիարքը չաթոռ վերադարձնել ճառախօսութեամբ մը յօրում՝ անմահ 89-ը ու Քամիլ Ցէմուլէնի ազատները, Միքէլ-Անճէլօ և Պիթօվէնն, Քանալա և իպէկաներ իրար զանգաւած ըլլան, բարեխառնած «հմ»-երով, վազուց այս բազդին արժանացած պիտի ըլլայինք։

Ինչպէս այս յիշատակներէն կը տեսնուի առենապետաց մեծամասնութիւնը կողմնակից է իրաց վիճակին չարունակութեան և ժողով չը գումարելու։—Երբ պատրիարքի հրաժարականի խնդիրը ծագեցաւ, այն ատեն քանի մը բանակցութիւններ կային կարգի պիտի դրուէին Բ. Դրան հետ և վարչութիւնը պիտի չգնար պատրիարքի պահանջմանց դոհացում ձեռք բերել։ Այն միջոցին ժողով գումարելու հարկ չը կար, և կարճ միջոցի մը համար էր։ Բայց որու մտքէն կանցնէր թէ վեց ամիս պիտի երթան և Բ. Դրան հետ բանակցութիւնները դեռ սկսած չըլլան։ Պատրիարքի հրաժարականը ընդունուեցաւ, Ազգ. ժողովը գումարուեցաւ, և ահա ամիսներ են որ ժողովը նստած է և ոչինչ կրնայ ընել։ Ազգ. ժողովը ինչ որ ընէ, ինչ որ խորհրդակցի, ինչ որ որոշէ, ամէնքն ալ պիտի մնան թուղթի վրայ և մեծ քանակութիւն անշարժ կապիտալ։ Նրա բոլոր կարողութիւնը 300,000,000 դուլար են գնահատուած։ Երբէք միլիոնատէրերի վերաբերութեամբ ասուած են, որ Չէյ Գուլդ 100 միլիոն ունի, Մաքէյ և Արօկէր իւրաքանչիւրը 50 միլիոն։ Ջօն Րօկֆէլլէր (Նաեւ Թայնի թագաւորիկներից մէկը) և Աստէօթոր իւրաքանչիւրը 40 միլիոն, և 16 մարդիկներից իւրաքանչիւրը ունեն 5-ից մինչև 30 միլիոն դուլար։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. կովկասի փոխարքայի կարգադրութեանը ենթարկված Վլատով տային օգնականին ասուիճան առաջացաւ և Մօսկվայի պրիսաստավիայի պատասխանատու հոդաբարձու նշանակվեցաւ։ Պատերազմական մինիստրը մի շրջաբերականով պատասխանում է զինուորական դատարանների պրոկուրօրներին և փաստաբաններին ճանապարհ արտաստանելու ժամանակ հիմնվել միայն փաստերի վրա։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. դաղմականութեան մասին նախագիծը կը ներկայացնվի պետական խորհուրդին միայն աշնանը։ Ժողովրդական աշխատանքի բարւոքման ընկերութեան անդամ գրվեցան 200 ասկի քաղաքներ և զեմստվոներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 ապրիլի։ Գիւղական բանկի նախագիծը օրերումս նորից կը ներկայացնվի պետական խորհրդին։ Նախագիծը ուղղված է այնպես, ինչպես ցոյց է տուել խորհուրդը առաջին քննութեան ժամանակ։

ԿՐՕՆՇՏԱՏ, 24 ապրիլի։ Մեծ աշխատանք է կատարվում խոշոր ովկիանոսի նաւահորմը կազմելու համար։ Վ.ից ամենից յետոյ այնտեղ 14 նաւեր կը լինեն, որոնք կը կարողանան 8000 զոր ափ իջեցնել։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ ապվում է կօխանովի մանաժողովի պարապմունքների նախագիծը։ Այդ նախագծի էութիւնը լրագիրները ճշդութեամբ են հաղորդել։ Աւելի խիստ օրէնքներ են հրատարակված անասունները կտրելու մասին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 ապրիլի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. կուլյան յանձնված է Զինատունին։ Այնտեղ արդէն գործում է չինական իշխանութիւնը։ Այնու ամենայնիւ գաղթականութիւնը մեծ չափերով է կատարվում։ Մեկին հետաքրքում է լինա գետի բնրանից, որ նա գտել է Գլէնդի և նրա ընկերների դիակները։

ԼՕՆԴՈՆ, 25 ապրիլի։ Իրլանդացիները տօնելու Պարնելի և միւսների ազատվելը բանտից։ Գլադսթոնի հետ կռիւ պատահելու։ Գլադստոնեան հրատարակիչ էր արձակում։ Շատերը վատագոյն կերպով վիրաւորված են։

ԴՈՒԲԼԻՆ, 26 ապրիլի։ Իրլանդական գործերի մինիստր լորդ Կավենդիշ և նրա օգնական Բօրկ սպանված են Ֆինիկս-պարկի մէջ։ Զարագործները բռնված չեն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Պետական բանկի 5% առմանակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75½ կ., երկրորդ 90 ր. 80 կ., երրորդ 91 ր. 50 կ., չորրորդ 90 ր. 75½ կ., հինգերորդ 90 ր. 50 կ., նեղքին 5% առաջին փոխառութեան առմանակը արժէ 218 ր. 75 կ., երկրորդ 212 ր., արևելեան առաջին փոխառութեան առմանակը արժէ 90 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 37½ կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկի 8 ր. 6 կ։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 24,43 պէնս, Ամստերդամի վրա 123,23 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 208 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ։ Բօրսային արտադրութիւնը թոյլ է։

## ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկան Միլիօնատէրեր։—«New-Jork Star» լրագիրը հաղորդում է։ Դաշնակցական պատերազմից առաջ շատ քիչ մարդիկ կային, որոնց կարողութիւնը 5,000,000 դուլարից անցնէր։ Սակայն իր կարողութեան մեծ մասը ստացաւ պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ։ Նրկայ ժամանակում, ասում է, աւելի միլիոն դուլար ունեցողներից մեծ մասը, 28 տարի առաջ, կատարելապէս աղքատներ էին համարվում։ Այժմ Վիլիամ Վ. Աստորբիլտ ունի 65,000,000 դուլար Միացեալ Նահանգների ֆոնդերում և 50,000,000 Նիւ-Եօրկեան կենտրօնական և հուդսօնեան երկաթուղիների ակցիաներում, 50,000,000 ուրիշ երկաթուղիների և մեծ քանակութիւն անշարժ կապիտալ։ Նրա բոլոր կարողութիւնը 300,000,000 դուլար են գնահատում։ Երբէք միլիոնատէրերի վերաբերութեամբ ասում են, որ Չէյ Գուլդ 100 միլիոն ունի, Մաքէյ և Արօկէր իւրաքանչիւրը 50 միլիոն։ Ջօն Րօկֆէլլէր (Նաեւ Թայնի թագաւորիկներից մէկը) և Աստէօթոր իւրաքանչիւրը 40 միլիոն, և 16 մարդիկներից իւրաքանչիւրը ունեն 5-ից մինչև 30 միլիոն դուլար։

—

«Gaulois» լրագրին Լօնդոնից հաղորդում են ապրիլի 3-ից, որ վալիան հիւսիսում հանքագործների գործադուլի պատճառով մեծ անկարգութիւններ պատահեցան։ Մի քանի տներ վնասվեցան և մի քանի պատուհաններ կոտրվեցան։ Զինուորական ոյժի միջամտութիւնը հարկաւորվեցաւ։ Յուզմունքը չարունակվում է։

—Լրագիրներին կ. Պօլսից հաղորդում են, որ մեծ վիզիր Սայիդ-փաշայի դրութիւնը անատնեղի էր։ Ամեն օր և ամեն յարմար դէպքին, սուլթանը աշխատում էր առորոշել և վիրաւորել առաջին և արտաքին գործերի մինիստրին։ Այստեղի թղթակիցներից մէկի հետ պատահած դէպքը կատարելապէս բարկացրեց սուլթանին։ Պէտք է ասել որ եթէ կ. Պօլսում օտար լեզուով հրատարակվող մի որ և է լրագիր գոնէ քիչ չատ դորգրութեամբ է սուլթանին, նա կարող է անպատճառ կերպով մինչև մի յայտնի ատեման քննադատել օտոմանեան մինիստրների գործողութիւնները։ Մի և նոյնը կարելի է ասել և թղթակիցների մասին։ Մեկը ներածից, «Իւյտաների ընկերութեան» աշխատակիցը, գնէին, միշտ մեծ յարգանքով էր վերաբերվում դէպի սուլթանը, բայց անընդհատ յարձակվում էր նրա պաշտօնեաների վրա։ Վերջինները վճռեցին արտաքսել նրան Թիւրքիայից։ Գնէնի մէկ կերպով խնայեա այդ և կարողացա անձամբ սուլթանին գանգատվել։ Խոլիքը ստատիկ բարկացաւ, կանչել ուղեց Սախդ և Ասիմ վաշաներին և յանդիմանեց նրանց, որ նրանք ատանց իրան իմացում տալու մէկ այնպիսի թղթակցի արտաքսել կարգադրութիւն են անում, որ հոգով և մարմնով նուիրված է իրան։

—«Koln. Ztg.» լրագիրը հաղորդում է, որ հետագրատան մէջ ծառայող Մանուան, որը հաղորդում էր գամբէտտային կառավարութեան հետագիրները, հեռացրած է պաշտօնից։

—Լրագիրներին հաղորդում են, որ Եգիպտոս կայսրուհին Բօրդիգերա հասաւ։ Այնտեղից նա կուզուվի վ.օլտերի, ուր Համբերտ թագաւորը ուզում նրան մի ամրոց բնակութեան համար։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների 81 գրքոյկը Ջ. Դիկկենսի „Հարս և սկեսուր“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի, գրքոյկին իրրև յաւելուած տպուած է գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն։

**Գինն է 15 կ.**

Հասցէն Тифлисъ. Тиграну Назарьянцъ.

---

### ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ.

Որ մարդս ամէն կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում պարապել թէ կրկնութեամբ և թէ դասերով գանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ տղայ երեխաների հետ։

Մանրամասն պայմանները, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞րքան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողները թողնել „Մշակի“ խմբագրատան մէջ, ուր կարող են գանել և յիշեալ ուսանողի հասցէն։ 12—15

---

**КЁЛЕРСКАЯ**
**УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.**

3—50

---

ԼՈՑՈՒ ՏԵՍԱԻ

Մեր տպարանից, հեռանալ մեր թարգմանութիւնը

**„ՎԻՐԱԽՈՐՈՒԱԾ ՍԿԻՒՌ“**

Փղրիկ պատմութիւն երեխայից համար։ Ամէնափոքրիկ դիրքով և մաքուր տպագրութիւն։

Տպած է Մանուշակի գունով։

Գինն է 10 կ. 10 օր. պակաս չէ ուղարկվում։

Հասցէն՝ Въ Эривань
А. С. Гуламирянцъ.
4—5

---

Ապրիլի 15-ից կինտօշնական դրատանում՝ որ գանվում է Արծրունու գալէրէի №№ 149 և 150 բացված է հայերէն գրքերի բաժանումը։ Ամեական վճարը մի գրքի համար 30 կ., երկու գրքի համար 50 կ., իսկ երեք գրքի համար 80 կ.։

Գրատարը պէտք է թողնէն 2, 3 կամ 5 րուբլի, նայած քանի գիրք է առնում։

Գրատարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը։

6—10

---

ՎԻՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

**36 ՐՈՒԲԼ**

եփ. Դատուրեանցի դէպոյում

20—20

---

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

ЕВРОПАКАН АПРАНКНЕРИ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Адресъ: Тифлисъ № 144 противъ Армянскаго училища, Хаджи Ованесовскій домъ.

ՀԱՍՑԵ ԻՆԵՐԸ Ի ՇԵՐԱՆԱԿՆԵՐԸ

---

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

---

### ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

ցանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից։

ՊԱՏՄԱՆՆԵՐԻ մասին դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։

10—10

---

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

---

Մի բերդի փողոց, կաթոլիկէ հայոց փողոցի անկիւն № 13.

Ամէն էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՔՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուրնդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուրանների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. սումի վալնիկներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէվոլվէրի, սիգար Ռինգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԻՑ (չայ) ԵԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէյսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. Հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօրկայ գինէվածաններին, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղոյթուկ (пухъ), պատրոններ ատամների և չայու, գանակ չանդալ գանազան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուրաններ 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Ռիխտանովի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջազուցներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկին 18 կ., վաքս ֆրանսիայի ժակէտ, իտալիայի վաշտի, կանվերտաններ, սաւրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գազիներ սեզանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուժիկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսպոշկաններ վարշավու, ՌՆԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանաց և մարդկանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկանց գալուստիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. անդրկը շրմայու ոակով, գուտապերչով և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարատի համար. չուլքի թէկ (бумага) մատակի կօճի և շալէ (гарусъ) փեչաակէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, բիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոյանաերկենի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոռը, հոտավէտ ջրեր, պուդրա, Դիլիջերլին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻՎԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գանվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) մի բերդում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

38—180

Մի բերդի փողոց, կաթոլիկէ հայոց փողոցի անկիւն № 13.

---

**ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒԻՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ**

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. գիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. Հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԹԱՄԱՇՈՑՑՆԵՐ 50 կ., ՇԳԹԱՆԵՐ (նոր ոակուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ծբծբիչներ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ԸՆ ԹԲՋվող վերարկուներ 6 ր., շչոակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. գիւժինը, ՄԵԳՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մոլարաթ և այլն շատ էժան։

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ։

23—50

---

**ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ**, գտօվմինակի պրօսպեկտի վրա, տան Ճարտարապետ Բէլօխ։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

---

**1,000** հատ երկաթեայ ԱՆԿՈՂԻՆՆԵՐ նոր են ստացվել և ծախվում են 10 րուբլուց մինչև 25 րուբլ հատը և նոյնպէս զոյգերի համար անկողիններ 20 րուբլուց բարձր

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ**

նոյնտեղ վաճառումն պաներ, մոլարաժի, կօնֆէկտներ, զդեստներ, վերարկուներ, կրագներ և 500 բէվօլվէրներ։

6—6

---

ԼՈՑՈՒ ՏԵՍԱԻ ԲԱՖՖԻ

**ԴԱԽԻԹ ԲԷԿԻ**

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Վէպի այս հատորի մէնավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՆՈՑԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

8—10

---

**ԲԱԼԶԱՄ**

**„ԲՕՐՄԱՆԻ“**

Արտաքին դործածութեան համար ԽՕԼԵՐԻՆԱՑԻ, ՈՍԿՐԱՑԱԻԻ, ԱՏԱՄՆԱՑԱՒԻ դէմ և այլն, նեղքին դործերի մինիստրութեան ԲԺՇԿԱԿԱՆ խորհուրդից թոյլատուած։ Գլխաւոր պահեստը ամբողջ կովկասի համար։

ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ առաջ պատկանում էր Ա. ՇՈՒՐԻՆՕՎԻՆ և ընկ., Թիֆլիսում։

3—10 (և. հ. շ.)

---

# JOURNAL D'ORIENT

**HEBDOMADAIRE**

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

---

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Апрѣля 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 72 Ապրիլի 28 (Մայիսի 10) 1882 Ապրիլի 28 (Մայիսի 10) № 72

ՏԱՄՆԱՄՅԱԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յառաջադրաբար պիտում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և սուրբ օրերից)։

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամէն ժամանակ։

Յայտարարութիւնների համար վճարում են խմբագրութեան բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ժողովի առիթով—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաքլիսայից։ Նկարքներ։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սկզբնաւ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Ասորեաց լուրեր։—ԽԱՒՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մեր վիճակաւոր աղջամուղջահրատարակութեան պէտքերը։

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

—

Նիկոյ Թէի օգոստոս ամսի կէսին լինելու է Թիֆլիսում ընդհանուր հայոց ուսուցչական ժողով։ Ռուսահայոց ամէն դպրոցներից կը հաւաքվին ուսուցիչներ մեր քաղաքում, դուցէ կը գան մի քանի վարժապետներ և Թիւրքայ ու պարսից հայաստանից։ Այդ բոլոր ուսուցիչների թւում շատ քիչերը կը լինեն, ի հարկէ, որոնք նեղ Թաղական միջոցներ կունենան իրանց հաշւով ճանապարհորդել, իրանց հաշւով Թիֆլիսում ապրել և կրկին իրանց հաշւով վերադառնալ իրանց քաղաքը կամ գիւղը։ Իսկ մեր վարժապետների մեծ մասը նեղ Թաղական միջոցներից զուրկ անձինք են։

Կան, ի հարկէ, հայ գպրոցների մէջ ուսուցիչներ, որոնք տարեկան հազար, հազար հինգ հարիւր րուբլի ռոճիկ են առանում,—մենք չենք խօսում ճեմարանի պրօֆեսօրների մասին, որոնք հինգ հազարներ են առանում,—բայց կան և այնպիսի ուսուցիչներ, և որոնք անշուշտ մեծամասնութիւնն են կազմում, որոնք տալիս են 300 րուբլի, 200 րուբլի և մինչև անգամ 150 րուբլի են առանում։ Սրանց համար ամենից հեռաքրքիր կը լինէր գալ, ներկայանալ ուսուցչական ժողովին, մի բան սովրել ուսուցչական ժողովից։

Բայց կարող են, արդեօք, այդ տեսակներ, գալ Թիֆլիս և ապրել այնտեղ երկու շաբաթ իրանց հաշւով։ Կարծում ենք որ պատասխանը կարող է միայն բացասական լինել։

Սրանց պէտքերին, ուսուցչական ժողովը, անշուշտ, պիտի իր միջոցներից վճարի ճանապարհի ծախս և բացի դրանից նեղ Թաղական միջոց ևս ուսուցչական ժողովի նախագահ, բժշկապետ Շահպարոնեանց, աշխատում է գումար հաւաքել, յօգուտ լինելու ուսուցչական ժողովի, կօնցէրտներ տալով և դասախօսութիւններ կարդալով։

Բայց հաւատացած լինելով որ այս միջոցներով հազիւ Թէ կը հաւաքվի այնպիսի գումար, որով կարելի լինէր բոլոր չքաւոր ուսուցիչների Թէ ճանապարհածախսը վճարել, Թէ նրանց պահել Թիֆլիսում երկու շաբաթ շարունակ, մենք կառաջարկենք մեր հասարակութեանը այնպիսի մի միջոց, որ գործ է դրվում այդ տեսակ դէպքերում բոլոր բարեկարգ երկիրներում, մանաւանդ Գերմանիայում։ Մի որ և է ժողովի, մանաւանդ ուսուցչական ժողովի ժամանակ, քաղաքի բնակիչներից իւրաքանչիւրը, որոնք հետաքրքրվում են գործով, յանձն են առնում ժողովի տեղաւորութեան ժամանակ մի մի ուսուցիչ բնակեցնել իրանց տանը։ Ով որ միջոց և աւելորդ սենեակ ունի, յայտնում է իր պատրաստականութիւնը երկու ուսուցիչ ընդունելու, մի այլ բնակիչ յայտնում է որ իր միջոցները ներում են միմիայն մի ուսուցիչ ընդունելու և այն էլ դիւրական ուսուցիչ, որ, ի հարկէ, պակաս պահանջող է, քան քաղաքային գպրոցի մի ուսուցիչ և այլն։

Մայիսի 16-ին, Թօջիվանքի եկեղեցում պատարագը աւարտելուց յետոյ, ամբողջ հայ հոգեւորականութիւնը մեծ հանդիսով գնաց հոգեհանգիստ կատարելու հօթ նահատակ մշակների գերեզմանների վրա: Ողղովելները թաղված էին մի շարքում: Նրանց իւրաքանչիւրի գերեզմանի վրա ժողովուրդը փակել էր դիապարսպեր և ծածկել էր հողը ծաղիկներով: կարծես թէ ձնհալտագիրը ծաղրել էր ուզում օրաւարձ բանւորներին. կենդանի ժամանակ նրանք մի կաղ հայց վաստակելու համար, թողել են իրանց ընտանիքը, տունը, տեղը, հայրենիքը, եկել են Թիֆլիս մշակութիւն են արել, տանջանքներ, զրկանքներ կրել, մաշել են իրանց կեանքը, վերջը վաստակների տակ են մնացել և մինչև անգամ նրանց անշնչացած դիակները հանգիստ չը կարողացան գտնել եկեղեցու ծոցում և քահանաները հրաժարվել են նրանց թաղել,—իսկ այժմ, երբ, ինչպէս ասում են „բանը բանից անց է կացել", նրանց գերեզմանները պիտապարդերով ու վարդերով են ծածկվում ու քաղաքիս ամբողջ հայ հոգեւորականութիւնը ամենահանդիսաւոր կերպով նրանց հոգու փրկութեան համար հոգեհանգիստ է կատարում:

Հոգեհանգստի վերջանալուց յետոյ Մողնու ս. գէորգ եկեղեցու աւագ քահանայ, հայր Ներսէսեանց, մի քարոզ խօսեց:

„Ահա, որքան յիշում ենք, տեր հօր քարոզի բովանդակութիւնը:

„Այսօր մենք հաւաքվել ենք հոգեհանգիստ կատարելու այս հօթ հայ պանդուխտների գերեզմանների շուրջը, որոնք թողած իրանց հայրենիքը, եկել էին մի կաղ հայ վաստակելու ծանր, տաժանալի աշխատանքով: Դուք գիտէք սրանց հետ պատահած դժբաղդութիւնը և այն գժգոհութիւնը որ բարձրացաւ սրանց պատճառով մեզ, հոգեւորականներիս դէմ: Հոգեւորականութեան դէմ այդ անթաւականութեանը աւելի նպաստեցին մեր մամուլի տատապատիր (?) յօդուածները: Ա՛հ հաստատակ տմարդութիւն է եղած մեկի կամ մի քանիների մեզաւորութեան պատճառով յանդգնել ամբողջ դասակարգի վրա բարձել: Այդպէս մի քանի քահանաների վարմունքի պատճառով մեզադրում են ամբողջ հոգեւորականութիւնը (?): Մեծ քահանաներն իմանային այդ ոգորմելիների մահվան մասին, ննջեցեալների դագաղները ոչ թէ միայն չէին արգելի եկեղեցում դնելու, այլ եկեղեցու սեղանի վրա կը դնէին, իրանց տունն կը տանէին:"

Այդ խօսքերը ընդմիջվեցան ամբոխի միջից լսվող բազմաթիւ ձայներով. „Քահանաները շատ լաւ գիտէին, բայց չը կամեցան իրանց նեղութիւն տալ, գիտէին բայց չեկան, դիակները ամբողջ գիշերը մնացին դուրսը, միւս առաւօտ ամբողջ քաղաքը գիտէր, ինչպէս չիմանային քահանաները" և այլն:

Փոքր ինչ շփոթված ժողովրդի այդ անսպասելի բողոքից, հայր քարոզիչը մի կարճ ընդմիջումից յետոյ, շարունակեց: „Քահանաները ժողովրդի համար են, նոյնպէս և ժողովուրդը քահանաների համար է, յանցանքը երկու կողմն էլ է, մեզաւորը կը պատժվի անշուշտ" և այլն:

Տէր հայրը վերջացնելով իր քարոզը առաջարկեց հոգեւորականներին աստղագրութիւն բանալ իրանց մէջ և փող ժողովել յօդուտ հանգուցեալ մշակների որբացած ընտանիքների:

## ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

Մայիսի 10-ին

Լազարեան ճեմարանի վերատեսուչ պ. Քանանեանցը նպատակ էր ունեցել իմ ուշադրութիւնը դարձնել Ս. Պետերբուրգում հրատարակվող «Journal de St.-Pétersbourg» լրագրի № 115 վրա, որի մէջ կարդացի մի յօդուած Լ. ճեմարանի տարի հոգաբարձուի իշխան Ադամովիչ-Լազարեանի երիտասարդ որդու ճանապարհորդութեան և նորա արած հնագիտական գիւտի մասին Արևելքում:

Առաջ քան թարգմանութիւն հաղորդելը այս յօդուածը ձեր լրագրի ընթերցողներին, պարագ եմ համարում մի քանի խօսք ասել հնագիտական գիւտի հեղինակի մասին: Երիտասարդ իշխան Սիմոն Ադամովիչ-Լազարեանը իր ծնողաց միակ արու զաւակն է: Նա մեծ նախ՝ պատմական լեզուագիտական ճեմարան (Историко-филологическій Институтъ) և տասը տարուայ ամենեղ ուսման ընթացքը 1878 թ., նա դիմեց Ս. Պետերբուրգի կայսերական համալսարան և սկսեց յաճախել լեզուագիտական ֆակուլտետը: 1881 թուականին իր վերջին քննութիւններից յետոյ երիտասարդ իշխանը, որ քանի մի տարուայ ընթացքում ուսումնասիրել էր հին և նոր լեզուներին, միտք ունեցաւ այցելելու այն հին աշխարհները, որոնց քաղաքական կեանքի ուներին կազմակերպութեանց պատմութիւնը նա ուսումնասիրել էր իր աշակերտութեան միջոցին: Ու տեղ անցնելով տարուայ, իր նրկու դասախոսների ուղեկցութեամբ, իշխանը ճանապարհ ընկաւ դէպի Արեւելք:

Այս երկարազ յատուածից յետոյ դիմենք այժմ Ս. Պետերբուրգի ֆրանսիական թերթին, որ ասում է հետևեալը. «Փարիզի լրագրները մեզ հաղորդում են մի հնագիտական շատ հետաքրքիր գիւտի մասին, որ արել է Պալմիր քաղաքում մի երիտասարդ գիտնական, իշխան Ադամովիչ-Լազարեանը. նոր ատարած իր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում, նա ներկայ ժամանակս ճանապարհորդում է արևելեան երկիրներում:

Մայիսի 5-ին՝ Académie des Inscriptions et Belles-lettres ճեմարանում տեղի ունեցած նստին, այս բարձր հաստատութեան նախագահ պ. Վադինգտոն մի ճաւ խօսեց յիշեալ գիւտի առիթով. իսկ յետոյ պ. Վալրօն ճեմարանի կազմից շնորհակալութեան նամակ գրեց երիտասարդ իշխանին և շնորհատուց նորան: «Temps» լրագիրը այսպէս է համառօտում այդ ճառը:

«Մարտ ամսի 11-ին մի ճանապարհորդ, իշխան Ադամովիչ-Լազարեան ժամանում է հին Պալմիր քաղաքը. չրջելով աւերակների մէջ, նա նկատեց մի յօդուած Լ. ճեմարանի տարի հոգաբարձուի իշխան Ադամովիչ-Լազարեանի երիտասարդ որդու ճանապարհորդութեան և նորա արած հնագիտական գիւտի մասին Արևելքում:

Առաջ քան թարգմանութիւն հաղորդելը այս յօդուածը ձեր լրագրի ընթերցողներին, պարագ եմ համարում մի քանի խօսք ասել հնագիտական գիւտի հեղինակի մասին: Երիտասարդ իշխան Սիմոն Ադամովիչ-Լազարեանը իր ծնողաց միակ արու զաւակն է: Նա մեծ նախ՝ պատմական լեզուագիտական ճեմարան (Историко-филологическій Институтъ) և տասը տարուայ ամենեղ ուսման ընթացքը 1878 թ., նա դիմեց Ս. Պետերբուրգի կայսերական համալսարան և սկսեց յաճախել լեզուագիտական ֆակուլտետը: 1881 թուականին իր վերջին քննութիւններից յետոյ երիտասարդ իշխանը, որ քանի մի տարուայ ընթացքում է եւրոպական հին և նոր լեզուներին, միտք ունեցաւ այցելելու այն հին աշխարհները, որոնց քաղաքական կեանքի ուներին կազմակերպութեանց պատմութիւնը նա ուսումնասիրել էր իր աշակերտութեան միջոցին: Ու տեղ անցնելով տարուայ, իր նրկու դասախոսների ուղեկցութեամբ, իշխանը ճանապարհ ընկաւ դէպի Արեւելք:

Այս երկարազ յատուածից յետոյ դիմենք այժմ Ս. Պետերբուրգի ֆրանսիական թերթին, որ ասում է հետևեալը. «Փարիզի լրագրները մեզ հաղորդում են մի հնագիտական շատ հետաքրքիր գիւտի մասին, որ արել է Պալմիր քաղաքում մի երիտասարդ գիտնական, իշխան Ադամովիչ-Լազարեանը. նոր ատարած իր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում, նա ներկայ ժամանակս ճանապարհորդում է արևելեան երկիրներում:

Մայիսի 5-ին՝ Académie des Inscriptions et Belles-lettres ճեմարանում տեղի ունեցած նստին, այս բարձր հաստատութեան նախագահ պ. Վադինգտոն մի ճաւ խօսեց յիշեալ գիւտի առիթով. իսկ յետոյ պ. Վալրօն ճեմարանի կազմից շնորհակալութեան նամակ գրեց երիտասարդ իշխանին և շնորհատուց նորան: «Temps» լրագիրը այսպէս է համառօտում այդ ճառը:

«Մարտ ամսի 11-ին մի ճանապարհորդ, իշխան Ադամովիչ-Լազարեան ժամանում է հին Պալմիր քաղաքը. չրջելով աւերակների մէջ, նա նկա-

## ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

### ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ ՀԱՅՈՑ

վարժարանները

—

Ա. Տարրա

1. Գղի-Գասապայ, բարձրագոյն նախակրթարան:
2. Գղի-Գասապայ, բարձրագոյն նախակրթարան իգական:
3. Գղի-Խարբ, միջոցին նախակրթարան:
4. Խերբի (Զարմանճագ), միջոցին նախակրթարան:
5. Զմշկածագ, միջոցին նախակրթարան երկսեռ:
6. Թօշմաթ (Բալու), միջոցին նախակրթարան:

1. Գ ղ ի - Գ ա ս ա պ ա յ

Բացուեաւ 1 դեկտեմբեր 1880.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 160—180 |
| « » ամառն | 100 |
| Ուսուցիչք | 3 |
| Տնտես | 1 |

վարժարանի շէնքը երկյարկ է և նորակառոյց է:

2. Գ ղ ի - Գ ա ս ա պ ա յ

Բացուեաւ 1 դեկտեմբեր 1880.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 100—110 |
| « » ամառն | 80 |
| վարժուհի և ուսուցիչք | 3 |

վարժարանի շէնքը մյայարկ է և նորակառոյց է:

Գղի ամանը կը գտնուի համանուն գետակին հովիտի մէջ, երիսպայի Արեւելեան կողմն, 20 ժամ հեռի, իբր 200 տուն հայ բնակչօք:

3. Գ ղ ի - Խ ա ր բ ա

Բացուեաւ 1 դեկտեմբեր 1879.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 120 |
| « » ամառն | 40—50 |
| Ուսուցիչք | 3 |
| Տնտես | 1 |

վարժարանին շէնքը երկյարկ է և ընդարձակ:

Խարբ կը գտնուի Գղիի արևմտեան կողմն, իբր 3 ժամ հեռի, 185 տուն հայ բնակչօք:

4. Խ ե ր բ ի

Բացուեաւ 1 օգոստոս 1879.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 140 |
| « » ամառն | 100 |
| Ուսուցիչք | 3 |
| Տնտես | 1 |

վարժարանը նորակառոյց է, բնչև միայարկ, այլ դեղեցկաշէն և ընդարձակ:

Խերբի գիւղաքաղաքն, կեդրոն Զարմանճագի վիճակին, կը գտնուի Գարքերդի հիւսիսային կողմը 12 ժամ հեռի, և Բալուայ արևմտեան կողմը իբր 6 ժամ, 430 տուն հայ բնակչօք:

5. Զ մ շ կ ա ծ ա գ

Բացուեաւ 1 ապրիլ 1880.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց և աշակերտուհ. ձմ. | 100—110 |
| « » » ամառն | 80— 90 |
| Ուսուցիչք | 3 |

վարժարանի շէնքը նոյնպէս և նորակառոյց է:

Զմշկածագ կը գտնուի Գարքերդի հիւսիսակողմը 12 ժամ հեռի երիտասարդ մօտ, և ունի 207 տուն հայ բնակիչ:

6. Թ օ շ մ ա թ

Բացուեաւ 1 մարտ 1882.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 70—80 |
| « » ամառն | 20—30 |
| Ուսուցիչ (առ այժմ) | 1 |

վարժարանը ընդարձակ շէնք մ'է և բան կարի չպահանջէ:

Թօշմաթ գիւղն, իբր 80 տուն հայ բնակչօք, կը գտնուի Բալուայ հիւսիսակողմը 2 ժամ հեռի, գեղեցկատեսիլ ղրից մէջ:

—

Բ. Տուրուբերան

1. Մուշ, բարձրագոյն նախակրթարան.
2. Բաղէշ, բարձրագոյն նախակրթարան.
3. Բաղէշ, միջոցին նախակրթարան.
4. Լիչ (Գուլանըք), միջոցին նախակրթարան.
5. Կոր (Ս. Դանիէլ), միջոցին նախակրթարան.
6. Չէվիրմէ (Խնուս), միջոցին նախակրթարան.
7. Գումանըք (Խնուս), միջոցին նախակրթարան.
8. Գառուան, միջոցին նախակրթարան.
9. Սղերդ, միջոցին նախակրթարան:

1. Մ ու շ

Բացուեաւ 13 նոյեմբեր 1878.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 85 |
| Ուսուցիչք | 4 |
| Տնտես | 1 |

Մշոյ վարժարանը քաղաքին կանոնաւոր շէնքերէն մէկն է:

Մուշ հայաբնակ կարեւոր քաղաք՝ կը գտնուի համանուն ընդարձակ և բարեբեր դաշտին հարաւակողմն, յատս Սիմ լերին, Մեղրագետ (Ծծանդակ Ադածանուց) մէկ ճիւղին վրայ:

Մուշ ունի 900 տուն հայ բնակիչ և չուրջը կը գտնուին քառասմ հայ գիւղեր:

2. Բ ա ղ է շ

Բացուեաւ 3 հոկտեմբեր 1879.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 50 |
| Ուսուցիչք | 2 |
| Տնտես | 1 |

վարժարանին շէնքը ընդարձակ է և վերջերս նորոգուած:

Բաղէշ կը գտնուի վանայ ծովեզն արևմտեան կողմը, խոր հովիտի մը մէջ և ունի իբր 800 տուն հայ բնակիչ:

3. Բ ա ղ է շ

Բաղէշի իգական վարժարանին նկատմամբ ամէն նախապատրաստութիւնք եղած են արդէն և պաշտօնապէս իւրոց կը հանձնին իրենց պաշտօնատեղին: Բացման տեղեկագիրը կը տպաւորի անյապաղ:

4. Լ ի չ

Բացուեաւ 20 հոկտեմբեր 1879.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 36 |
| Ուսուցիչք | 2 |

վարժարանին շէնքը անյարմար է և կը բաղկանայ միայն սրահէ մը և մի փոքր սենեակէ:

Լիչ հայաբնակ գիւղ իբր 60 տուն բնակչօք կը

Fonds A.R.A.M

ասում է հողից դուրս ցցված մի քարեղէն սիւն, որի վրա արձանագրութեանց հետքեր էին նշմարվում: Նա հրամայում է փորել քարի շուրջը, բայց որովհետև գա շատ խոր անկած է լինում գետնի մէջ, ուստի գործը երկարանում է: Վերջապէս չարաչար գժուարութիւններից յետոյ քարը ազատում են հողից. նորա երկայնութիւնը լինում է վեց մետր, իսկ լայնութիւնը երկու: Երբ որ արձանագրութիւնները իրանց ամբողջութեամբ յայտնվում են, ճանապարհորդը կարդալով տեսնում է, որ գրա երկու լեզուով են գրված՝ յունարէն և պարսիերէն. վերջին արձանագրութիւնը իր ընդարձակութեամբ գերազանցում է յունարէնը: Գալով Աքինը, իշխան Աբամելիք-Լազարեանը անյապաղ չտապում է Ֆրանսիական գպրոցի վերատեսուչ պ. Ֆուկարի մօտ, ներկայացնում է նորան յիշեալ արձանագրութեանց օրինակներ պատճէնը և խնդրում է ուղարկել այն L'Académie des Inscriptions: Պ. Ֆուկար յանձնոյ արձանագրութեան նախագրութիւնը պատրաստելով Bulletin de correspondance hellenique լրագրի ապագայ համարների համար, յոյն բնագրի պատճէնը, համաձայն իշխանի ցանկութեան, ուղղում է վաղդինգտոնին դէպի Փարիզ: Այսաեղից դրժվար չէ գուշակել, նկատում է Ֆրանսիական թերթը, թէ որչափ ծանրակշիռ է այս գիւտը և յետոյ չարունակում է: «Արձանագրութիւնը բովանդակում է իր մէջ Պալմիրի ծերակոյտի մի հրամանագիր 137 թ. Քրիստոսի, Անդիանոսի ժամանակ: Ցնդեղ, ուր երեսեաւ արձանագրութիւնը, կոչվում է Իարաասիրիս, իսկ Արաբացիք անուանում են Պերայի: Հրամանագրից սուաջ դրուած է մի մանրամասն պաշտօնական պրոտոկոլ, որին օրէնքի զօրութիւն է յատկացրած. հասանական է կարծել, որ գա չատով վերաբերվում է երեմեկ ճանապարհորդներից և վաճառականներից պահանջվիք մաքսերին, քան թէ քաղաքային տուրքերին: Պալմիրը իր աշխարհագրական դիրքով, հին ժամանակներում, վաճառականութեան կենտրոն էր համարվում Արաբիայի, Միջագետքի, Միջերկրական ծովից դէպի արևելք գտնվող երկիրների համար և իրաքանչիւր կարաւան, Պալմիրից անցնելով, պարտական էր մի որոշեալ տուրք վճարել նորա մաքսատան: Բայց, ինչպէս երևում է, այստեղ ես զանազան դեղծութիւններ էին պատահում. հրամանագիրը աշխատելով նորա առաջն առնել, ճգնում է կանոնաւորել մաքսատան գործերը, ճշդութեամբ որոշում է այն գումարը, որ պէտք է վճարվի մի մարդու, բեռնատարված կամ անբեռն ուղտի և անասուններին ջուր տալու իրաւունքի համար և այլն: Պ. վաղդինգտոն որոշում է և մեկնաբանում պատմական պարագաները. ծերակոյտի հրամանագիրը ակնարկում է մի այլ հրամանագրի վրա, որ հրատարակել է երբեմն Գերմանիկոսը: Դարձեալ նորն արձանագրութիւններից մենք տեղեկանում ենք, որ Պալմիրը Ադրոց իրաւասութեան ներքոյ է եղել: Հրամանագրի մէջ յիշվում է Հռոմայի կօրրուլօնի մի նամակը Բարաարուսին, վաճառականական յարաբերութեանց մասին: Բարբարոսը, երևի թէ՝ Հռոմայեցոց շահերի ներկայացուցիչն էր Պալմիրում: Կօրրուլօնը հին ժամանակներում հռչակված էր իբրև հմուտ զօրապետ և ընդունակ կառավարիչ: Պալմիրական արձանագրութիւնը ուսումնասիրել են և մեկնել պ. պ. Voguë և Renan: Այս արձանագրութիւնը չատ տեղերում լրացնում է յունարէնի պակասութիւնը:»

Ի. Ենգիբարեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մայիսի 14-ին

Անցեալները ձեր պատուական լրագրի մի համարում հաղորդված էր այն լուրը, որ Բագդի աւետարանական հայերը իրանց որդկանցը մատաղ հասակում սովորեցնում են գերմաներէն լեզուն, գեռ հայերէնը լաւ չը սովորած:

Մենք աւետարանական հայերս, որ բռնել ենք կրթութիւնական ուղղութիւնը, հարկաւ չենք կարող դժկամակել, երբ ուրիշները մեզ քննադատում են, և այդ քննադատութիւններից մենք միշտ օգուտ ենք ստացել, ուստի և չնորհակալ ենք ամեն մեզ դէմ ասած պատգամների մասին, թէև սուր էլ եղած լինէին, և վստահ ենք որ «Մշակի» այս վերջին ակնարկին էլ կը բերէ իր պատուէր: Բայց և այնպէս խոնարհաբար խնդրում եմ այս երկտող նկատողական պատասխանս ընդունէք «Մշակի» էջերում: Նախ՝ որ մայրենի լեզուն տակաւին չը սովորած, օտար լեզուի դիմելը միայն մեր հայ աւետարանականներիս թերութիւնը չէ. նոյն հարկադրական և հակամանկավարժական ընթացքը նկատվում է մեր ազգի մեծամասնութիւնն կազմող, հայ լուսաւորչականների մէջն էլ, մանաւանդ Թիֆլիսում: Բայց այստ ամենայնիվ ես բնաւ չեմ արդարացնում և չեմ ուզազդում մեր աւետարանականներիս ասած պատճառը: Երկրորդ՝ պէտք է խնամով որ մենք, աւետարանական հայերս, այնպիսի գժտարութեանց մէջն ենք, որոնց հետացնելը մեզանից կախում չունի: Օրինակի համար մենք ունենք Ռուսաստանում չորս հատ ձեռնադրված հայ բարոգիչներ և բոլորն էլ կովկասցի. բայց գործնոյից ոչ մէկն էլ իրաւունք չունի հայ աւետարանականների մէջ հոգևոր պաշտօն ունենալ և ոտիպված են մէկը Պատրատով, միւսը Պէնզա, և երբորդը Եկատերինոսլավ քարոզել գերմաներէն: Ուստի չամախեցիք և բագուցիք ստիպված են ունենալ գերմանացի քարոզիչ և գերմանացի վարժապետ: Ձեր տպած լուրին ես կաւելացնեմ և այն որ չամախեցի, բագուցի և միւս տեղերի հայ աւետարանականները կովկասում, ուրիշ մի վտանգի մէջ էլ կարող են ընկնել. նորանք տասնկարարտաս հայերէն գրքեր կարդալով, ոչ թէ միայն մեր երկու բարբառներն են իրար մէջ խառնում, այլ իրաւ որ գերմաներէն լեզուն և դուցէ հոգին էլ սկսում է նորանց մէջ բուն դնել: Սորա պատճառը արտաքուստ բարբառով կրօնական գրքեր չունենալն է: Հայոց հոգևոր իշխանութեան խնդրանքը արդիւնած է Ռուսաստան բերել Պետերսում տպված աւետարանական գրքեր, այստեղ տպելը նոյնպէս հնարաւոր չէ, վասն զի աւետարանականները վազուց է դիմացին էմմիածին աշխարհաքաղ աւետարան տպելու թոյլատութիւն ստանալու, և—չը ստացան: Հիմա նորանք ընտրված են իրանց կրօնական պէտքերը լրացնելու օտար լեզուով: Ուստի ամբողջ մեղադրութիւնը միայն մեզ վրա չէ ընկնում իր ամբողջ ծանրութեամբ, այլ ազգի մեծամասնութեան վրա էլ, որ անտարբերութեամբ ասում է. «Ինձ համար մի և նոյն է. հայ աւետարանականները ինչ կուզին թող դառնան:»

Հայ-աւետարանական

## ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընդհանուր ուսուցչական ժողովի կարգադրիչ ծանձնաժողովը այսու բերում է իր խորին շնորհակալութիւնը հետևեալ մեծապատիւ անձանց, որոնք յայտնել են իրանց պատրաստականութիւնը ուսուցչական ժողովի անդամութեան ընթացքում իրանց մօտ հիւրասիրել ուսուցիչներին: Մի և նոյն ժամանակ յանձնաժողովս խնդրարհաբար խնդրում է նոյ ցանկացողներին, որ նորա բարեհաճեն իրանց ցանկութիւնը բնակարանի հասցէն հետ գրաւոր հաղորդել յանձնաժողովին, որպէս զի այդպիսով իր ժամանակին անվիճք անօրինութիւնը հնչասցվի: Մինչ այսօր իրանց մօտ ուսուցիչներ ընդունելու ցանկութիւնը յայտնել են հետևեալ անձինք: Միքայէլ Սալամբէկեան—1 ուսուցիչ, Գրիգոր Արծրունի—1, Թաֆթի—1, Ա. Ամիրխանեանց—1, Ն. Շահազարենեանց—2, Գևորգեան եղբարք—2, Առաքել Եսայեանց—2, Նիկողայոս Խորովեանց—2 ուսուցիչ:

—

Լրագիրները հաղորդում են, որ կոմս Լօրիս-Մէլիքով, իրան տկար զգալով, մնացել է մի քանի օր Բէռլինում և այնուհետև իր ընտանիքով ուղևորվել է Ս. Պետերբուրգ:

—

Երեկի առաւ բոմբանման ցուրեկով, որ այժմ սպառում է փարիզում, չատ վտանգաւոր կերպով հիւանդացել է, ինչպէս հաղորդում են լրագիրները: Փարիզի մամուլը ամեն օր տպում է բիւլետեններ նորա ծերունի առողջութեան մասին:

—

Հեռագիրը հաղորդեց մեզ արդէն որ ծովային գիտուորական վարչութեան գլխաւոր բժիշկ Բուշ և նրա օգնականներ Անդրէեվ և Պարֆիէնով, դատապարտված են ծովային գիտուորական դատարանի վճռով, առաջինը բոլոր իրաւունքների զրկվելուն և ցմահ նահանգը աքսորվելուն, երկրորդը նոյնպէս իրաւունքների զրկվելուն և Ախանգելսկ աքսորվելուն, իսկ երրորդը ծառայութիւնից հրաժարեցնելուն: Բուշ և նրա ընկերները ենթարկվեցան դատարանին կաշառակերութեան համար: Դատաստանական քննութիւնից յայտնվեցաւ որ Բուշ և Անդրէեվ ծառայութիւն նոր մտնող ամեն մի բժիշկից 200 մինչև 300 րուբլ կաշառք էին վերցնում, իրանց ստորադրեալ բժիշկներին մի պաշտօնից միւս պաշտօն անցկացնելու համար, աստիճանների մէջ նրանց բարձրացնելու համար մինչև 2,000 րուբլ կաշառք էին վեր առնում նրանցից: Շատ անգամ կաշառքը վերցնում էին պարտքի ձևով և երբէք փողը չէին վերադարձնում: Իսկ ով որ կաշառք չէր տալիս Բուշին և Անդրէեվին, նա ծառայութիւնից դրկվում էր: Բուշը նշանակում էր պաշտօնների վրա ամենատգէտ բժիշկներին, իսկ յատներին հետացնում էր: Դատաստանը ներկայացած բազմաթիւ վկաներից իմացաքննիչը մի մի գումար տուած է եղել Բուշին իր ծառայութեան ընթացքում: Գլխաւոր ծովային գիտուորական բժիշկը, տանի ասվէտնիկ Բուշ հաւաքում էր իրան ստորադրեալ բժիշկներից դրամական տուած տուրքերը իր օգնական Անդրէեվի ձեռքով, որ այդ նպատակով տարին մի քանի անգամ հանապարհ էր ընկնում, իբր թէ ծառայողական յանձնարարութեամբ, Կրոնշտատ, Սև ծովի նաւահանգիստներ և այլն: Վկաների ցուցմունքներից յայտնվեցաւ, որ Բուշ կաշառք էր վերցնում և հիւանդ ծովային գիտուորներին մնալոյ հայիմայիղներից և վատ էր կերակրում նրանց:

—

«Русскія Вѣдомости» լրագիրը լսել է թէ նոյ տարվանից տէրութիւնը առաջարկելու է հաշտարար դատաւորներին ունենալ այնպիսի քարտուղարներ, որոնք ատարած լինեն գիմնազիական ուսման ընթացքը: Մինչև այժմ հաշտարար դատաւորների քարտուղարները չատ անգամ կիսագիրթ մարդիկ էին լինում և քարոյականութեան կողմից էլ բարձր ատեհանի վրա չէին կանգնում:

—

Մայիսի 15-ին, չաբաթ օր, կայացաւ Ադրոնու թատրոնում պ. Կօրիձէի կենդրոնը: Ժողովուրդ, դժբաղդաբար չատ չը կար: Պ. Կօրիձէի երգած և նրա աշխատութեամբ նոատների գարձրած հայոց և վրաց եղանակներից մի քանիսները, բաւական աջողված են: Մանաւանդ լաւ էր «Անի քաղաք» հայոց երգը, որ պ. Կօրիձէ երգեց սիրտօք և մեծ ախտաղանքմնեռով:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիսմարկի ֆինանսական քաղաքականութիւնը մի նոր և գօրեղ հարուած է

---

գտնում Պալանդրայ վիճակին մէջ, Ադամանոյ մօտ և յատ Պէլիճան լերանց:

5. Կոբ

Բացումն յունիս 1879.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց (պիներօթիկ) | 20 |
| Ուսուցիչք | 2 |
| Տնտես | 1 |

Վարժարանը հաստատուած է Կոբայ ս. Դանիէլի վանքին մէջ, բայց չէնքը փոքր և անյարմար: Կոբայ վանքը կը գտնուի համանուն գիւղին մօտ, Պալանդրայ վիճակին մէջ, ընդարձակ և բարեբեր հողերով շրջապատուած: Բուն Կոբ գիւղն ունի 150 տուն հայ բնակիչ, համանուն վանքին վրայ, Ադամանոյ ձախակողմը:

6. Զէվիրմէ

Բացումն 1 ապրիլ 1881

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 40 |
| » » ամառն | 30 |
| Ուսուցիչ (առ այժմ) | 1 |

Վարժարանին չէնքը՝ թէև փոքր, այլ կանոնաւոր և նորակառոյց է:

Զէվիրմէ գիւղը կը գտնուի Խնուսոյ գաշտին մէջ, Թուղլայ-չայի մէկ վտակին վրայ, իբր 60 տուն հայ բնակչօք:

7. Դովանտըք

Բացումն 1 ապրիլ 1881

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 60 |
| Ուսուցիչք | 2 |

Վարժարանին չէնքը փոքրիկ, բայց նորակառոյց և կանոնաւոր է:

Դովանտըք կը գտնուի Խնուսոյ գաշտին մէջ Քէվիրմէի մօտ և ունի իբր 80 տուն հայ բնակիչ:

8. Դատուան

Բացումն 16 մարտ 1879

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 36 |
| Ուսուցիչք | 2 |

Վարժարանին չէնքը անյարմար է և կը բաղկանայ միայն մէկ սրահէ:

Դատուան կը գտնուի Վանայ ծովու արևմտեան եզերին վրայ Բաղէշէն 4 ժամ հեռի: Նահանգիստը բանուկ է և չարունակ կը հաղորդակցի Վանայ հետ: Դատուան հայաբնակ գիւղ մ'է 527 բնակչօք և կնդրուն բազմաթիւ հայ գիւղերու:

9. Աղերտ

Բացումն 3 մայիս 1881.

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 80 |
| Ուսուցիչք | 2 |
| Տնտես | 1 |

Վարժարանը վերջերս կառուցվեցաւ տեղացոց հանգանակութեամբ:

Աղերտ կը գտնուի Բաղէշոյ հարաւակողմը, Տիգրիսի արևելեան ճիւղին (Պօհթան) մօտ, և կարեւոր կեդրոն մ'է բազմաթիւ հայ և քիւրդ գիւղերու, իբր 120 տուն հայ բնակչօք, և ուր հայք մայրենի լեզուն կորուսած կը խօսին արաբերէն կամ քրդերէն:

—

Գ. Ալաշկերտ.

1. Ալաշկերտ, բարձրագոյն նախակրթարան:

Բացումն 19 սեպտեմբեր 1879

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց | 100—110 |
| Տնօրէն-դաստատ | 1 |
| Ուսուցիչք | 3 |
| Տնտես | 1 |

վարժարանի չէնքը, որ իսկզբան խոտ փորը և անյարմար էր, հետզհետէ նորոգելով, այժմ ընդարձակ և կանոնաւոր է:

Ալաշկերտ կամ Թոփրագ-Գալէ տասն (ի հնումն վաղարշակերտ) կը գտնուի համանուն դաշտին հիւսիսային կողմը, Շահ-Լալի լերանց տակ. բոլոր իբր 125 տուն հայ բնակչօք:

—

Պ. Վասպուրական

1. Ալիւր, գիւղային նախակրթարան (երկսեռ)
2. Կիւմիւշ » »
3. Կէմ » »
4. Խարակոնիս » »
5. Գործոթ » »

1. Ալիւր

Բացումն 1 նոյեմբեր 1876

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռը | 200 |
| » » ամառը | 40 |
| Ուսուցիչք | 2 |
| Տնտես | 1 |

Վարժարանին չէնքը երկյարկ և նորակառոյց է.

Ալիւր գիւղն ունի 223 տուն հայ բնակիչ և կը գտնուի Վանայ հիւսիսակողմը 4 ժամ հեռի, պտղաբեր պարտէզներով և այգեստաններով շրջապատեալ:

2. Կիւմիւշ

Բացումն 1 նոյեմբեր 1878

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 120 |
| » » ամառն | 40 |
| Ուսուցիչք | 1 |
| Տնտես | 1 |

Վարժարանին չէնքը խոտ անպատչաճ է և անբաւական, և էր երբեմն գիւղին ամբարանոցը:

Կիւմիւշ կը գտնուի Վանայ արևելեան հիւսիսային կողմը, բազմաթիւ լեռնաձորերի մէջ, բաղքէն ճիշդ $4^1/_2$ ժամ հեռի և ունի իբր 100 տուն հայ բնակիչ:

3. Կէմ

Բացումն 16 մայիս 1879

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 120 |
| » » ամառն | 60—70 |
| Ուսուցիչք | 2 |

Վարժարանը բաւական ընդարձակ և լաւ չէնք մ'է երկյարկ:

Կէմ գիւղը կը գտնուի Վանայ հարաւային բլեւնեան կողմը, 4 ժամ հեռի Հայոց Ձորին մէջ, Անգղ գետակին աջակողմեան եզերին մօտ և ունի 80 տուն հայ բնակիչ:

4. Խարակոնիս

Բացումն 3 նոյեմբեր 1879

| | |
|---|---|
| Թիւ աշակերտաց ձմեռն | 110 |
| » » ամառն | 30—40 |
| Ուսուցիչ և օգնական | 2 |
| Տնտես | 1 |

Վարժարանի չէնքը միայարկ և տաճէ, և ոչ առողջապահիկ:

Խարակոնիսի գիւղը կը գտնուի Վանայ արևե-

Fonds A.R.A.M

հայցրած, գրում է „Голосъ“։ Նախկին մենավաճառութեան օրինագիծը, որի վրա նա հիմնում էր գերմանական կայսրութեան ֆինանսական ոյժը, մեծ անաջողութեան հանդիպեցաւ գերմանական պարլամենտի մէջ։ Օրինագիծը ընդունելու համար ձայն չը տուեց ոչ մի ամբողջ կուսակցութիւն, բացի լէհական կուսակցութիւնից, և նա միաձայն և ահագին ընդդիմադրութեան հանդիպեց թէ պահպանողականների և թէ ազատամիտների կողմից։ Երեք օրվայ վիճաբանութիւններից յետոյ, որոնք վերջացան մայիսի 1-ին, օրինագծի անաջողութիւնը ամենքի համար ակներև էր, բայց, այնու ամենայնիւ, նա յանձնվեցաւ մի մասնաժողովի քննութեան 28 անդամներից կազմված, որոնց ամենքն էլ օրինագծի հակառակորդներ էին։

Հեռագիրը հաղորդեց, որ այդ մասնաժողովը մերժեց ծխախոտի մենավաճառութեան օրինագծի բոլոր յօդուածները առաջինից մինչև երեսուն և երկրորդը։ Մասնաժողովի 28 անդամներից միայն 4 ձայն տուին յօդուա օրինագծին։ Պետական կանցլերին հաւատարիմ մնաց միայն կայսերական կուսակցութիւնը, իսկ պահպանողականները նրան դաւաճանեցին։

Օրինագծի այդպիսի մերժումը մասնաժողովի կողմից ապացուցանում է, որ նա այլ ևս չէ կարող աջողվել։ Պարլամենտի բոլոր անդամները բացի 30 կամ 40 մարդուց վճռողականապէս կը մերժեն այդ օրինագիծը։ Այսուհետև ծխախոտի մենավաճառութիւնը պէտք է կատարելապէս անհետանայ գերմանական կառավարութեան ֆինանսական նախագծից։ Իշխան Բիսմարկ ստիպված կը լինի իրան յաղթված համարել և խոստովանել, որ, չը նայելով մինչև անգամ իր հեղինակութեանը և հայրենիքին մատուցած ծառայութիւններին, վտանգաւոր է ընդդիմանալ հասարակութեան կրթված դասերի կարծիքին։

Պատգամաւոր Րիխտեր շատ իրաւացի նկատեց, թէ հարցը միայն այն չէ, որ մերժվի ժողովրդի համար առելի մենավաճառութեան օրինագիծը, այլ անհրաժեշտ է ապացուցանել պետական կանցլերին, որ բացի նրա կամքից, կայ երկրի մէջ ժողովրդի կամքը, որի դէմ մաքառել Բիսմարկն անգամ չէ կարող։ Հարուածել երեսի և հզօր պետական մարդուն մի օրինագծի քննութեան ժամանակ, որին նա մեծ նշանակութիւն է տալիս նոր ստեղծված կայսրութեան ֆինանսական անկախութիւնը ապահովելու համար, կը նշանակէ հարուածել կառավարչական ամբողջ քաղաքականութիւնը, որի դէմ ժողովուրդը իր ներկայացուցիչների օգնութեամբ անբաւականութիւն է յայտնում։

Իշխան Բիսմարկ հնձում է այն, ինչ որ ցանել է։ Չը ճանաչելով քաղաքականութեան մէջ հաստատ համոզմունքներ, մի կուսակցութիւնից միւսի կողմը անցնելով, թողնելով բարեկամներին և միանալով նախկին հակառակորդների հետ, բարեմիտ քաղաքական կուսակցութիւն համարելով միայն այն կուսակցութիւնը, որ համաձայն է պաշտպանել նրա թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը, նա փոքր առ փոքր հեռացրեց իրանից քաղաքական բոլոր մեծ կուսակցութիւնները և այժմ, չը նայելով իր պարլամենտական հմտութեանը, նա դժուար բաղձերում միայնակ է։ Թէև Բիսմարկ շատ աշխատեց գրաւել կղերական կուսակցութեանը, բայց այդ աշխատանքները 'ի զուր անցան։ Կղերականները ընդունեցին կառավարութեան զիջումները եկեղեցական հարցի վերաբերութեամբ, բայց չը կամեցան պաշտպանել իրանց նախկին հալածողներին։ Օրինագծի քննութեան ժամանակ կղերական կուսակցութեան առաջնորդ Վինդհօրստ պարլամենտի մէջ յայտնեց, որ նրա կուսակիցները գրեթէ միաձայն մերժում են կառավարչական առաջարկութիւնը ծխախոտի մենավաճառութեան մասին։

Գերմանական կառավարութեան պարլամենտական դրութեան մասին գաղափար կազմելու համար պէտք է ի նկատի առնել, որ կառավարչական օրինագծի օգտին քուէարկում են լէհացիները և մասամբ սօցիալիստները, մինչդեռ ազատամիտները և պահպանողականները ձայն են տալիս օրինագծի դէմ։ Կառավարութիւնը յայտնեց, որ ծխախոտի մենավաճառութեան ընդունելը „ազգային գործ է“։ Եւ այդ „ազգային գործը“ պաշտպանում է պարլամենտական մի կուսակցութիւն (լէհացիները), որ երբէք իրան կապված չէ համարել Գերմանիայի ազգային գործի հետ։ Կառավարութեան միւս պաշտպանները սօցիալիստներն են, որոնց գրութիւնը օրինական չէ համարվում և սրանց դէմ հրատարակված են խիստ և բացառական օրէնքներ։

Եթէ գործը այն դրութեան է հասել, որ գերմանական կանցլերի օրինագիծները համակրութեամբ ընդունվում են գլխաւորապէս այն շրջանների մէջ, որոնք թշնամի են թէ Բիսմարկին և թէ նրա ստեղծած կայսրութեանը, ակներև է ուրեմն, որ նրա ներքին քաղաքականութիւնը սխալ ընթացք է առացել։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայի <Presse> լրագրին Կ. Պօլսից հաղորդում են, որ սուլթանը հրամայեց մինիստր Աբդուրահման փաշային և արտաքին գործերի մինիստր Սաիդ-փաշային աշխատել որքան կարելի է բարեկամական յարաբերութիւններ կապել մեծ պետութիւնների դեսպանների հետ. նմանապէս հրամաններ ուղարկված են և այլ մինիստրներին։ Սուլթանի կողմից արած այդ յոյցը մեծ տպաւորութիւն գործեց Կ. Պօլսի դիպլօմատիկական շրջաններում. այդ քայլը նոր ուղղութեան նշան են համարում սուլթանի արտաքին քաղաքականութեան մէջ։

—Պէշտից հաղորդած տեղեկութիւններին համեմատ, մայիսի 5-ին ունգարական պատգամաւորների ժողովը քննում էր կառավարութեան պահանջած կրեդիտի հարցը Բօսնիան և Հէրցեգովինան խաղաղացնելու համար։ Դրանից ձախակողմեան պատգամաւոր Նէմէտ Խորհրդի նախագահին մեղադրում էր կողմնապահութեան մէջ, ասելով որ նա աւելի արգիլոցողի պաշտօնները իր բարեկամներին է տալիս։ Իր խօսքերը հաստատելու համար Նէմէտ մի քանի փաստեր բերեց և պահանջեց, որ պատգամաւորների ժողովը քննող մասնաժողով նշանակի։ Խորհրդի նախագահը և ֆինանսների մինիստրը հերքում էին Նէմէտի մեղադրանքները։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մայիսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Ֆինանսների մինիստրը կարգադրեց ակցիզի վճարականներ տալ 1882 թուականի երկրորդ կէսի համար, նախկին օրէնքներին համեմատ։ Ֆինանսների մինիստրը հերքում է տարածված լուրը, իբր թէ ենթադրված է գինու և սպիրտային խմիչքների հարկը 25% բարձրացնել և ակցիզի աստիճանաւորների թիւը շատացնել։ Լրագիրները մայիսի 14-ից հաղորդում են, որ շատ նահանգապետներ յայտնում են կառավարութեանը, թէ փոխ-նահանգապետների համար անյարմար է տեղական հրատարակութիւնների գրաքննիչի պաշտօն վարել։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը իր կողմից համաձայն է ոչնչացնել արգելքը ուսմնարաններին համալսարան ընդունելու մասին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Պետութիւնների մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում Եգիպտոսի մէջ գործադրելի միջոցների մասին։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Բարձրագոյն հրամայված է Դօնսկոյ նահանգի զեմստվօների գործողութիւնները դադարեցնել, փակել վարչութիւնները։ Դրանց փոխարէն կազմել Նովօչերկասկի մասնաժողով ատամանի նախագահութեամբ, որի անդամները կը լինեն տեղական դասակարգերի ներկայացուցիչները, որոնք պէտք է ընտրվեն ատամանից և հաստատվեն պատերազմական մինիստրից։ Այդ մասնաժողովը նոր կանոնադրութիւն պէտք է մշակէ։ Լրագիրները մայիսի 15-ից հաղորդում են, որ պետական յանցաւոր Կօբօզևի դատաստանական գործի քննութիւնը կը սկսվի սեպտեմբերին։ Օրէնսդրական ճանապարհով վճռված է գիւղացիների բնակութիւնը կազմակերպող մասնաժողովը ոչնչացնել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ գեներալ Բագեցկուն շնորհված է Սպիտակ արծուի շքանշանը։ Բարձրագոյն կամքի համեմատ սինօդը պատուիրում է ծխական եկեղեցիների մէջ իւրաքանչիւր տարի փետրվարի 19-ին հոգեհանգիստ և մաղթանք կատարել 'ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր II կայսրի համար։ Քահանաները պարտաւոր են հասկացնել ժողովրդին, որ այդ օր պէտք է սրբագործել աղօթելով հանգուցեալի համար և բարի վարքով։ Լրագիրները մայիսի 16-ից հաղորդում են, որ Հէլսինգֆօրսի համալսարանը յանձնեց Աշխար-

---

ւեան կողմը, իրր 6 ժամ հեռի, Արջակի լճին մօտ, չուրջ 120 տուն հայ բնակչօք։

5. Գործոթ

Բացուած 6 նոյեմբեր 1879

Թիւ աշակերտաց ձմեռն ... 60—65

» » ամառն ... 20—25

Ուսուցիչ ... 1

Տեսուչ ... 1

Վարժարանին շէնքը պարզ գեղջկական տած մ'է նորակառոյց։

Գործոթ գիւղն իւր 515 հայ բնակչօք կը գտնուի Վանայ հիւսիսային արեւելեան կողմն 14 ժամ հեռի, Բերկրի (Ալաքարանի) միճակին մէջ, ընդարձակ դաշտերով և հայ գիւղերով շրջապատեալ։

—

Ե. ԿԻԼԻԿԻԱ

1. Ադանա. բարձրագոյն նախակրթարան արական.
2. » » » իգական.
3. » նախակրթարան.
4. Հաճըն. բարձրագոյն նախակրթարան արական.
5. » » » իգական.
6. Սիս. նախակրթարան (երկսեռ).
7. Զէյթուն. նախակրթան արական.
8. » » իգական.
9. Բերիա. բարձրագոյն նախակրթարան արական
10. » [illegible] կրթարան իգական

11. Դնիա և Եագուպլէ—գիւղային նախակրթարան.

1. Ադանա

Բացուած յունվար 1881

Թիւ աշակերտաց ... 130

Ուսուցիչք ... 6

Տեսուչ ... 1

Վարժարանը քարաշէն երկյարկ շէնք մ'է, քաղքին բարձրագոյն մասին վրայ։

2. Ադանա

Բացուած յունվար 1881

Թիւ աշակերտուհեաց ... 425

Ուսուցիչք և վարժուհիք ... 4

Տեսուչ ... 1

Վարժարան կը գտնուի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ բակին մէջ և կը բաղկանայ մի մեծ դահլիճէ, քարաշէն երկու դասարաններով։

3. Ադանա

Բացուած յունվար 1881

Թիւ աշակերտաց ... 400

Ուսուցիչք ... 3

Տեսուչ ... 1

Վարժարանը կը բաղկանայ միահարկ ընդարձակ սրահէ մը։

Ադանա՝ նշանաւոր կեդրոն հայոց 'ի Կիլիկիա, ունի այժմ 30,000 բնակիչ, որոց կէսն հայ է, բայց բոլոր մեծի մասին թրքախօս։

4. Հաճըն

Բացուած 18 փետրվար 1879

Թիւ աշակերտաց ... 60

Տնօրէն դասատու ... 1

Ուսուցիչք ... 2

Վարժարանը հաստատուած է քաղաքին ամենէն գեղեցիկ շէնքին մէջ, որ երբեմն մեծատուն վարչութեան ծառայած է։

5. Հաճըն

Բացուած 18 փետրվար 1879

Թիւ աշակերտուհեաց ... 75

Վարժուհիք ... 2

Ուսուցիչ ... 1

Տեսուչ ... 1

Հաճըն կը գտնուի Կիլիկիոյ լերանց մէջ օդասէտ վայր մը և ունի 10,000 հայ բնակիչ։

6. Սիս

Բացուած դեկտեմբեր 1879

Թիւ աշակերտաց ... 45

Ուսուցիչք ... 2

Տեսուչ ... 1

Վարժարանն երկյարկ փոքր և անկանոն շէնք մ'է Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ բակին մէջ։

Սիս գիւղաքաղաքը կը գտնուի Ադանայի հիւսիսային արեւելեան կողմը, Տորոս լեռներէն 5—6 ժամ հեռի, փառաւոր դիրքի մը մէջ, և ունի իր 400 տուն հայ բնակիչ, որք մշակ, խաշնարած և վաճառական գիւղականներ են։

7—8. Զէյթուն

Բացուած օգոստոս 1879

Թիւ աշակերտաց ... 60

» աշակերտուհեաց ... 65

Ուսուցիչք և վարժուհի ... 4

Վարժարանը հաստատուած է գիւղին նախկին դպրոցին շէնքին մէջ։

Զէյթուն կը գտնուի Տորոս լերանց մէջ, Մարաշի հիւսիսային արեւմտեան կողմը, չուրջ 1,000 տուն հայ բնակչօք։

9—10. Բերիա

Բացուած ապրիլ 1880

Թիւ աշակերտաց ... 100

» աշակերտուհեաց ... 80

Ուսուցիչք և վարժուհիք ... 6

Տեսուչ ... 1

Վարժարանն հաստատուած է տեղւոյն Առաջնորդարանին շէնքին մէջ։

11. Դնիա և Եագուպլէ

Բացուած սեպտեմբեր 1881

Թիւ աշակերտաց ... 30

Ուսուցիչ ... 1

Դնիա և Եագուպլէ իրարմէ քառորդ ժամ հեռաւորութեամբ գիւղեր են 150 տուն հայ բնակչօք Բերիոյ մօտերն։

—

Ամփոփումն

Թիւ արական վարժարանաց ... 26

» իգական » ... 9

» աշակերտաց » ... 2512

» աշակերտուհեաց ... 800

» Ուսուցչաց և վարժուհեաց ... 79

Տեսուչք ... 5

Fonds A.R.A.M

հագրական ընկերութեանը 1,000 րուբլի միջին ախոյի քարտէզը հրատարակելու համար։

ԿԱՑԻՐ, 16 մայիսի։ Եգիպտական մինիստրութիւնը հրաժարական տուեց։ Խեդիվը ընդունեց հրաժարականը և մի նոր կաբինետ կազմեց, որով յայտնում է, թէ նաւատորմի գալը բարեկամական բնաւորութիւն ունի։ Նա հրամայեց արձակել պահեստի զօրքերը և յայտնեց, թէ ինքը կընդունի զօրքերի հրամանատարութիւնը։ Անգլիայի և Ֆրանսիայի հիւպատոսները յայտնեցին Արաբի-փաշային որ նա անձամբ պատասխանատու կը լինի եթէ հանգստութիւնը խանգարվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 37½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 90 ր. 50 կ., հինգերորդ 90 ր. 37 կ., նոքա 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 75 կ., երկրորդ 211 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 75½ կ., երկրորդ 89 ր. 75 կ., երրորդ 89 ր. 75½ կ., ոսկի 8 ր. 6½ կ.։ Ռուսաց 1 ր. լմնդօնի վրա արժէ 24,40 պէնս, Ամստերդամի վրա 123,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի սրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՃՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

## ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

*Թիֆլիսի Հայոց Ծխական ուսուցչարանը-*
*բում*

Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Խզմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետաց եկեղ. տոն և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլաբ. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին։ Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց։

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.
5—50

Մանկավարժական ինստիտուտի վերջին դասատան ուսանող պատրաստում. աշակերտներ այստեղ կամ ամարանոց. Հասցէն. Александровскій учительскій институтъ на Михайловской улицѣ (колонія) Александръ Захаровъ.

1—4

ЕВРОПЕЙСКІЯ ТОВАРЫ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Армянскій переулокъ, № 14, противъ Михайловской церкви, домъ Ивановой.
Здѣсь можно получать всѣ европейскіе товары, какъ-то: шелковыя матеріи, шерстяныя матеріи, бархаты, плюши, шляпы, шапки, шарфы, перчатки, чулки, носки, платки, зонтики, галстухи, воротнички, манжеты, рубашки, кальсоны, фуфайки, жилеты, сюртуки, брюки, пальто, шинели, ватерпруфы, шубы, ротонды, бурнусы, кофточки, юбки, корсеты, кринолины, шляпки, чепчики, вуали, вышивки, кружева, ленты, тесьма, позументы, бахрома, шнурки, пуговицы, запонки, булавки, иголки, нитки, шелкъ, бисеръ, ножницы, ножи, вилки, ложки, часы, цѣпочки, браслеты, серьги, кольца, портсигары, портмоне, бумажники, сумки, ридикюли, чемоданы, саквояжи, ковры, коврики, одѣяла, подушки, перины, матрацы, простыни, скатерти, салфетки, полотенца, мыло, духи, помада, пудра, румяна, бѣлила, краски, карандаши, перья, бумага, конверты, книги, альбомы, нотная бумага, ноты, гитары, скрипки, флейты, кларнеты, барабаны, тарелки, треугольники, трубы, валторны, контрабасы, виолончели, фортепіано, зеркала, картины, гравюры, литографіи, фотографіи, стереоскопы, фонари, лампы, керосинъ, свѣчи, спички, табакъ, папиросы, сигары, сигарныя трубки, чубуки, мундштуки, зажигалки, кремни, фитили, трутъ, бензинъ, спиртъ, одеколонъ, уксусъ, горчица, перецъ, соль, сахаръ, чай, кофе, какао, шоколадъ, конфекты, варенье, пастила, мармеладъ, пряники, печенье, сухари, сыръ, масло, сардины, шпроты, анчоусы, маслины, сельди, балыки, икра, ветчина, колбасы, сосиски, сосиски съ капустой, сосиски съ картофелемъ, сосиски съ горохомъ, сосиски съ бобами, сосиски съ чечевицей, сосиски съ рисомъ, сосиски съ макаронами, сосиски съ лапшой, сосиски съ клецками, сосиски съ пельменями, сосиски съ варениками, сосиски съ блинами, сосиски съ оладьями, сосиски съ пирожками, сосиски съ расстегаями, сосиски съ кулебяками, сосиски съ пирогами, сосиски съ булочками, сосиски съ калачами, сосиски съ бубликами, сосиски съ сушками, сосиски съ баранками, сосиски съ пряниками, сосиски съ печеньемъ, сосиски съ сухарями, сосиски съ сыромъ, сосиски съ масломъ, сосиски съ сардинами, сосиски съ шпротами, сосиски съ анчоусами, сосиски съ маслинами, сосиски съ сельдями, сосиски съ балыками, сосиски съ икрой, сосиски съ ветчиной, сосиски съ колбасами, сосиски съ сосисками.

## ՍՏԱՑՎԵՑԱԻ

*և Ծախվում են 25% էժան քան թէ ուրիշ տեղ. թէյ, բրինձ, ԱՄԱՆՆԵՐ, վակաս, կրագի, ՎԵՐԱԲԿՈՒՆԵՐ, կէօնիա, Թուղթ, ԳՐԻՉՆԵՐ, Հայելիներ, Թամբեր, ձիասանդրեր, մուճակաձևեր, ԱՐԾՈՒԿՆԵՐ, փոշիներ սամովար մաքրելու և լուացքի համար և այլն։*

Անգլիական խանութի մէջ։

8—8

## ԲԱՑՓԱՅ

## ԴԱԻԻԹ ԲԷԿ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

*Բաղկացած է 563 երեսներից*

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼ

*Յաւարտ գաղթական ուղարկում են Ձանեապարհածախք 15 կ. մարկաներով. առանով գնողները Ձանեապարհածախք չեն վճարում։ Ցանից առելի գնողները 10% զիջում են ստանում։*

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“
Тифлисъ, Головинскій проспектъ д. Мириманова, №№ 3 и 4.

11—15

**ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ**, Գօրգիճեանի պրօսպեկտի վրա, տուն Ձարտարապետ Բէլօխ։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

Շաւարս-կապետան ՄԱՆԻԿՈՎ յայտնում է որ մայիսի 18-ին, նոր տոմսի 1882 թ-ին անդրկովկասի ԳՐԻԿՋՈՒՄ ածուրդ կը լինի, և-րեք օրից յետոյ կրկնածուրդով եղիսաբեթ ՄԱՆԻԿՈՎԱՑԻՆ պատկանող տան վրա, որ գտնվում է Թիֆլիսի 1 բաժնի 3-րդ շրջանում, Սապէօրնի փողոցում, 1879 թ-ին ապահ փոխառութեան վրա ճնացած 8,148 րուբլ ապառիկի պատճառով։

Ցանկացողները այդ տունն առնելու, կարող են անանել գնահատողական տոմսագիրը գրիկազում։

1—5

Лечебница Общества Покровительства животныхъ, Песковская улица д. Гверити-швили. Пріемъ больныхъ съ 8 до 9 часовъ утра ежедневно, за исключеніемъ воскресныхъ, праздничныхъ и табельныхъ дней.

Квартиранты Общества Покровительства животныхъ Тифлисскаго Городского Общества Попечительства о животныхъ, Головинскій проспектъ, домъ Мирзоева, № 3.

5—10

**ՄՈՒՐԱՔԱՆ**, շաքարի ձուաններ, պաղեղ-չեռաներ, խաւիար և այլն։ Ցախվում են շատ էժան

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ Ցախվում են. բազկաթոռ մահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԻՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն։

9—10

## ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԱՐԱՆ

*Թիֆլիսի Հայոց Ծխական ուսուցչարանում*

Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Խզմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետաց եկեղ. տոն և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլաբ. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին։ Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց։

## ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. զիւժինը, ՇՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ասկուց) ժամացոյցի համար 30 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՀՆԵՐ 1 ր., Հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջահներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչեօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. զիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՓ, արկղ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԴՆՈՎ, մոմեր, մոմրարա և այլն շատ էժան։

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՑ։

33—50

Թիֆլիսի Քաղաքային վարչութեան մէջ բացված է ամէն օր, ժամը 9-ից առաւօտեան մինչև ժամի 1-ը, առորագրութիւն նոտիրատութիւնների համար, Կուբանեան նահանգի, Մայիոպեան գաւառի, Ցարսկայա Ստանիցայում մետաղ կառուցանելու նպատակով, կից նոյնտեղ ի տէր Հանդուցեալ Թագաւոր կայար Ալէքսանդր Նիկոլաևիչի արձանին։

3—3

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VI գրքոյկը Ջ. Դիկկենսի „Հալա և Սկեատը“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի։ Գրքոյկի վերջը իրրև յաւելուած տպուած են գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն։

Գինն է 15 կ.

Հասցէն Тифлисъ. Тиграну Назарьянцъ.

*Մի՛ջի փողոց, Կաթողիկէական փողոցի անկիւն № 13.*

**Ամէն Ցժան, քան թէ ուրիշ տեղ Ցախվում են.** վիէննական մեբել, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրեվատներ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն գուդներ Ցատպարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կախոցներ պղնձէ, ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուրի վալներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րեվոլվերի, սիդար Ռենգարդի ֆաբրիկից. պատրոն և Թամբաքու կաշնարօվի գիլդի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼՓ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և Միխկասեի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) գօշեռուկ (пухъ), պատռոններ սամովարի և չայու, գանակ չանգալ գանագան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հայի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրեսօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիտանական չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, չադաղներ կաֆէի համար, ֆիլտրեր—չուր մաքրելու, կրամպալ կալօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փոչոն, կանվերտաներ, սուրգուչ, մնաթա, պրիչ երկաթէ, պրչակոմ, քարեսախտակ, Թամբեր, Թամբաքամաններ, պրեսպապիներ, գդակներ սեզանի և չայու ֆրտաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուխիչէք 45 կ.—5 ր., շամադաններ ամէն տեսակ 25 կ.—12 ր. Չուխա, պրոստոպշկաններ վարշավա, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամէն տեսակ, գալոշներ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխա, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. անդրիներ շրմայու ոսկրէ, գուտապերչայի և փայտէ, չչուսկաներ գլխի, շորի, սուպկի, պոլի և կարտի համար. չուլքի Թէլ (бумага) մատկի կօճի և շալէ (гарусъ) ֆկչատկէք մարդկերանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրօսի ամաններ և մանր գոլանտերեյնի սպրանքներ, սուրճ ամէն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հատակէա չրեր, պուդրա, Եկիցերին չրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՑԷԼ ՏԻՐ ՆԻԿՈՂՕՍՕՍԱՆՑԻ պահեստում (въ складѣ) *Մի՛ջի փողոցում կաթոլիկոց փողոցի անկիւնում* № 13.

Ծաղիկ էժան, քան թէ ուրիշ տեղ Ցախվում են. վիէննական մեբել, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրեվատներ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն գուդներ Ցատպարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կախոցներ պղնձէ, ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուրի վալներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րեվոլվերի, սիդար Ռենգարդի ֆաբրիկից. պատրոն և Թամբաքու կաշնարօվի գիլդի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼՓ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և Միխկասեի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) գօշեռուկ (пухъ), պատռոններ սամովարի և չայու, գանակ չանգալ գանագան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հայի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրեսօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիտանական չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, չադաղներ կաֆէի համար, ֆիլտրեր—չուր մաքրելու, կրամպալ կալօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փոչոն, կանվերտաներ, սուրգուչ, մնաթա, պրիչ երկաթէ, պրչակոմ, քարեսախտակ, Թամբեր, Թամբաքամաններ, պրեսպապիներ, գդակներ սեզանի և չայու ֆրտաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուխիչէք 45 կ.—5 ր., շամադաններ ամէն տեսակ 25 կ.—12 ր. Չուխա, պրոստոպշկաններ վարշավա, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամէն տեսակ, գալոշներ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխա, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. անդրիներ շրմայու ոսկրէ, գուտապերչայի և փայտէ, չչուսկաներ գլխի, շորի, սուպկի, պոլի և կարտի համար. չուլքի Թէլ (бумага) մատկի կօճի և շալէ (гарусъ) ֆկչատկէք մարդկերանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրօսի ամաններ և մանր գոլանտերեյնի սպրանքներ, սուրճ ամէն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հատակէա չրեր, պուդրա, Եկիցերին չրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՑԷԼ ՏԻՐ ՆԻԿՈՂՕՍՕՍԱՆՑԻ պահեստում (въ складѣ) *Մի՛ջի փողոցում կաթոլիկոց փողոցի անկիւնում* № 13.

Ծաղիկ էժան, քան թէ ուրիշ տեղ Ցախվում են. վիէննական մեբել, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրեվատներ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն գուդներ Ցատպարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կախոցներ պղնձէ, ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուրի վալներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րեվոլվերի, սիդար Ռենգարդի ֆաբրիկից. պատրոն և Թամբաքու կաշնարօվի գիլդի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼՓ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և Միխկասեի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) գօշեռուկ (пухъ), պատռոններ սամովարի և չայու, գանակ չանգալ գանագան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հայի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրեսօր. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիտանական չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, չադաղներ կաֆէի համար, ֆիլտրեր—չուր մաքրելու, կրամպալ կալօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, Թուղթ փոչոն, կանվերտաներ, սուրգուչ, մնաթա, պրիչ երկաթէ, պրչակոմ, քարեսախտակ, Թամբեր, Թամբաքամաններ, պրեսպապիներ, գդակներ սեզանի և չայու ֆրտաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուխիչէք 45 կ.—5 ր., շամադաններ ամէն տեսակ 25 կ.—12 ր. Չուխա, պրոստոպշկաններ վարշավա, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամէն տեսակ, գալոշներ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխա, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. անդրիներ շրմայու ոսկրէ, գուտապերչայի և փայտէ, չչուսկաներ գլխի, շորի, սուպկի, պոլի և կարտի համար. չուլքի Թէլ (бумага) մատկի կօճի և շալէ (гарусъ) ֆկչատկէք մարդկերանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրօսի ամաններ և մանր գոլանտերեյնի սպրանքներ, սուրճ ամէն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հատակէա չրեր, պուդրա, Եկիցերին չրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՑԷԼ ՏԻՐ ՆԻԿՈՂՕՍՕՍԱՆՑԻ պահեստում (въ складѣ) *Մի՛ջի փողոցում կաթոլիկոց փողոցի անկիւնում* № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Мая 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Меликъ. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 86 Մայիսի 19 (31) 1882 Մայիսի 19 (31) № 86

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրւում են միայն խմբագրատան մէջ։
Օտարազգացիք գնում են ուղղակի Տիֆլիսում Редакція «Мшака»։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բայի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարւում են հրատարակիչը բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր կարգադրութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նկարչին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սկզբում Անգլիա։ Եգիպտոս։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խառնայի Մէլիքսէթեաններ։

## ՄԻ ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ժողովրդական լուսաւորութեան նոր մինիստրի երկու կարգադրութիւնները իրանց վրա առանձին ուշադրութիւն են գրաւում։ Այդ կարգադրութիւնները խնդայի և իրանց հետեւանքներով վերին աստիճանի օգտաւէտ կարող են լինել։

Առաջինն այն է որ հոգևոր սեմինարիաների մէջ ուսումն աւարտածներին նորից թոյլ կը տրվի մանել համալսարան. գա մեծ բարիք է, քանի որ վերջին ժամանակները սեմինարիաներում աւարտածները մեծ չունէին համալսարաններում և ոչքան երիտասարդ սեմինարիաներ իրանց դպրոցի ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, ինում էին անգործ, ինում էին տարակուսած և յուսահատված, հնար չը գտնելով շարունակել իրանց բարձրագոյն ուսման ընթացքը և տեսնելով իրանց կեանքի ապագան կոտրված։

Նոր մինիստրի մի այլ կարգադրութիւն, որ իր վրա առանձին ուշադրութիւն է գրաւում, մենք ուզում լրագիրներից արտագրում ենք „Մշակի“ ներկայ համարի ներքին լուրերի բաժնում։ Ուսումնարանական շրջանների հոգաբարձուները իրաւունք կունենան իրանց սեփական իշխանութեամբ հատուցանել հատարակութեան հաշուով հիմնվող իգական գիմնազիաներ և պրոգիմնազիաներ, միայն այդ մասին տեղեկութիւն հաղորդելով մինիստրութեանը։ Վերջապէս շրջաբերականը հրաւիրում է հոգաբարձուներին համոզել իգական գիմնազիաներ կամ պրոգիմնազիաներ հիմնել ցանկացող հատարակութիւններին, այդ դէպքում դպրոցների փոխանակ հիմնել օրիորդական տարրական ուսումնարաններ և իգական արուեստագործական դպրոցներ։

Այդ վերջին կարգադրութիւնը, մանաւանդ, շատ նշանաւոր է։

Վատուց է արդէն որ հատարակական կարծիքը Ռուսատանում նկատում էր թէ իգական գիմնազիաները, տալով աղջիկներին ընդհանուր ուսում և շլնտելացնելով նրանց ոչ մի արհեստի, նպատակայարմար չէին։ Իգական գիմնազիաները շատ օգտաւէտ հիմնարկութիւններ են քիչ թէ շատ ունևոր օրիորդների համար, տալով նրանց ընդհանուր գիմնազիական ուսում։ Բայց չքաւոր կանայք ի՞նչ գործադրութիւն պէտք է գրտնէին կեանքի մէջ իրանց ուսումը գիմնազիաներում աւարտելուց յետոյ, քանի որ իգական գիմնազիան մի կողմից իր սաներին այն իրաւունքները չէր տալիս և չէր էլ կարող տալ, ինչ որ տալիս էր արական գիմնազիան իր ուսումնասէր աշակերտներին, իսկ միւս կողմից ոչնինչ արհեստ կամ արուեստ էլ չէր սովորեցնում չքաւոր օրիորդին, որ կեանքը մանելով ստիպված էր իր ձեռքի աշխատանքով իր օրական ապրուստը հայթայթել։

Մի և նոյն ժամանակ աղքատ աղջիկը եօթ տարի շարունակ ունևոր աղջկերանց հետ միասին նոյն նստարանների վրա նստելով, ընտելանում էր ունևոր կեանքին, սանում լայն ցանկութիւններին և կենսական պահանջներին,—բայց դպրոցից դուրս գալով և իր ձեռքում ոչինչ դէնք չունենալով, ոչ մի արհեստ չիմանալով, չէր էլ կարող լրում տալ իր ցանկութիւններին, իր մէջ ծնած նոր, կենսական պահանջներին, անընդունակ էր լինում թէ իր գլուխը և թէ իր չքաւոր ընտանիքը իր ձեռքի վաստակով պահելու։ Դրանից ծնվում էր խիստ աննպատակութիւն կեանքի պահանջների և ստացած ուսման մէջ. իսկ հետևանքը շատ անգամ կորստաբեր էր լինում օրիորդի համար։ Գիմնազիական ուսումը շատ անգամ յայտնվում էր շահայլութիւն չքաւոր էակների համար, իսկ շահայլութեան ընտելանալը շատ անգամ տանում է կորստաբեր ճանապարհին։

